



# Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020



Պիտի վերաշինեն դարավոր  
ավերակները, նախկինում ավերվածները  
պիտի վերականգնեն...  
ԵՍԱՅԻ 61. 4

Հարգելի՛ բարեկամ,  
Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշնչի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

Միջնադարյան Հայաստանի կրոնական ու մշակութային նշանավոր կենտրոններից Հավուց թառ վանական համալիրը Կոտայքի մարզի Գառնի գյուղից արևելք է՝ Ազատ գետի բարձր աղի ձախ ափին, լեռան գագաթին, Գողթ գյուղի դիմաց: Մխիթար Այրիվանեցու վկայությամբ: Հավուց Թառը կառուցել է Գեղվո Գևորգ իշխանը՝ 1001-1011 թվականներին:

1679 թ. երկրաշարժից այն շատ է տուժել, հնագույն եկեղեցու ավերակներն անհետացել են գետնի երեսից, իսկ այն, ինչ մնացել է, ժամանակի ընթացքում ծածկվել է հողի շերտով: Պահպանվել է միայն Կաթողիկեի հարավային պատը:

Կաթողիկեն գմբեթավոր եկեղեցի է, որի հատակագիծը արտաքուստ քիչ երկարածիզ ուղիղ քառանկյունի է, իսկ ներսից, շնորհիվ անկյուններում տեղադրված խորանների, դարձել է խաչածև՝ ուղղանկյուն խաչթևերով: Դրանց միացման անկյուններից ձգվող կիսասյուները միացած են եղել կամարներով, որոնք իրենց վրա են կրել գմբեթը:

Եկեղեցու յուրաքանչյուր ճակատից բացվում է մեկական երկար ու նեղ լուսամուտ, որոնց շրջանակները պատված են զարդաքանդակներով ու գծավոր պսակներով: Եկեղեցին ամբողջությամբ կառուցված է սև ու կարմիր տուֆի սրբատաշ քարերով՝ շախմատածև դասավորությամբ: Սալահատակված է եղել. տանիքը պատած է եղել սալաքարերով: Հավուց թառ համալիրում կան հազվագյուտ խաչքարեր, որոնցից մեկը պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Նոր ու հետաքրքիր բացահայտումներ սիրողների համար Հավուց թառ գնալը բավական բարդ է: Ու չնայած դրան՝ մարդիկ պարբերաբար գալիս են այդտեղ, մոմ վառում ու աղոթում: ([www.wikipedia.org](http://www.wikipedia.org)):



## Ձիաց մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

(October, November, December 2020)

**ԼԱ. ՏԱՐԻ**

**Դ. ԵՌԱՄՍՅԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլեկտրոնային փոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am).

Աստված կամեցավ ցույց տալ, թե ինչ է այս խորհրդի փառավոր ճոխությունը հեթանոսների մեջ, որ է՝ Քրիստոսը ձեր մեջ, այն փառքի հույսը: (Կող. 1. 27)

## **ԻՆՉՊԵՍ ԱՐՏԱՑՈՒԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՆ**

**Թ**երեզ Լիզիան ուրախ ու զվարթ երեխա էր մինչև չորս տարեկանը, երբ մայրը մահացավ: Դրանից հետո նա դարձավ երկչոտ ու դյուրագրգիռ: Այդ վիճակը շարունակվեց տարիներ: Բայց մի անգամ, երբ եկեղեցում մասնակցում էր Սուրբ Ծննդյան տոնակատարությանը, նա զգաց, որ Աստված իրեն ազատում է վախերից և ուրախություն է պարգևում: Իր մեջ եղած փոփոխությունը ազդիկը վերագրեց Աստծո զորությունը: Աստծո, որը թողնելով երկինքը՝ եկավ աշխարհ, մարդեղացավ Հիսուսի անձի մեջ և այժմ էլ բնակվում է իր մեջ:

Իսկ ի՞նչ է նշանակում «Քրիստոսը մեր մեջ է ապրում» ձևակերպումը: Պողոս առաքյալը Կողոսայի եկեղեցուն ասում է, թե դա մի խորհուրդ է՝ «ծածկված հավիտենից և դարերից» (Կող. 1.26), որը սակայն հայտնաբերվեց Աստծո ժողովրդի համար: Աստված ցույց տվեց «այս խորհրդի փառավոր ճոխությունը հեթանոսների մեջ, որ է՝ Քրիստոսը ձեր մեջ, այն փառքի հույսը» (Կող. 1. 27): Եվ քանի որ այդ պահին Քրիստոսը բնակվեց կողոսացիների մեջ, նրանք նոր կյանքի փորձառությունն ունեցան և այլևս հին անձի մեղքի գերին չեն:

Եթե խնդրել ենք, որ Հիսուսը մեր Փրկիչը լինի, ուրեմն մենք կրում ենք իր մեջ լինելու խորհուրդը: Նա կարող է մեզ ազատել վախից, ինչպես որ Թերեզի հետ կատարվեց, և մեր մեջ աճեցնել Սուրբ Հոգու պտուղը՝ որպես սեր, ուրախություն, խաղաղություն ու հեզություն (Գաղ. 5. 22-23) :

Եկե՛ք շնորհակալություն հայտնենք մեր մեջ եղած Քրիստոսի հիանալի խորհրդի համար:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ Քո անձը խոնարհեցրիր, մարդեղացար ու իմ մեջ բնակվեցիր: Օգնի՛ր, որ իմ մեջ Քո կատարած գործն ավելի լավ հասկանամ: Ամեն:

Տեր Հիսուսը կարտացուլվի մեր կյանքում:

Եվ ես նրանց հավիտենական կյանք եմ տալիս, և նրանք հավիտյան չեն կորչի, և ոչ ոք նրանց իմ ձեռքից չի հափշտակի: (Հովհ. 10. 28)

## ՆԱ ՉԻ ԼՔԻ ՄԵՉ

**Խ** ուլիոն հեծանվով անցնում էր Նյու Յորքն ու Նյու Ջերսին իրար կապող երկհարկանի կամրջով, երբ նկատեց, որ մեկը պատրաստվում է նետվել գետը: Հասկանալով, որ ոստիկանությունը չի հասցնի գալ, Խուլիոն արագ մոտեցավ, իջավ հեծանվից, թևերը պարզեց ու ասաց. «Չանե՛ս այդ բանը, մենք քեզ շատ ենք սիրում»: Հետո հովվի նման մի ձողով բռնեց մարդուն և այլ անցորդների օգնությամբ նրան հասցրեց ապահով վայր: Հետո ականատեսները պատմում էին, որ նույնիսկ վտանգն անցնելուց հետո Խուլիոն այդ մարդուց չէր ուզում հեռանալ:

Երկու հազարամյակ առաջ նման կենաց -մահու պարագայում էր Հիսուսը՝ Բարի Հովիվը, որն ասաց, թե իր կյանքն է դնելու իրեն հավատացողներին փրկելու համար և նրանց բուրրովին չի լքելու: Նա հավաստիացրեց, որ իր ոչխարների պես նրանք կօրհնվեն, իրեն անձամբ կձանաչեն, հավիտենական կյանքի պարգևը կստանան, երբեք չեն կորսվի ու ապահով կլինեն իր հոգատարությունների: Այդ ապահովությունը կախված էր ոչ թե թույլ ու դյուրամուրր ոչխարների կարողությունից, այլ միայն Հովվի կամքից, որն ասում էր. «ոչ ոք նրանց իմ ձեռքից չի հափշտակի» (Հմ. 28):

Երբ մենք անհույս էինք ու խանգարված, Հիսուս ազատեց մեզ: Հիմա իր հետ մեր հարաբերությամբ մենք ապահով ենք: Նա սիրում է մեզ, հետևում, գտնում, փրկում և խոստանում, որ երբեք չի լքի:

**Աղոթք** - Տե՛ր, երբ մեղքերիս պատճառով հեռանում եմ Քեզից, Դու ինձ դարձյալ չես լքում Քո շնորհքով: Ամեն:

Դու անապահով ու անվստահ ես զգում: Դիմի՛ր Տիրոջը և Նա քեզ կազատի ու հավիտյան կպահի:

Ամուսիններ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոսն էլ եկեղեցուն սիրեց ու իր անձը նրա համար մատնեց: ( Եփ. 5. 25)

## **ՐԵՈՒՑՆԵԼ ԱՆԿՈՉԻՆ**

**Դ**եռ լույսը էջը բացվել, երբ ամուսինս անկողնուց ելավ ու խոհանոց մտավ: Զարմացա, որ լույսը վառեց ու արագ մարեց: Հետո հիշեցի, թե ինչպես նախորդ օրը ճչացի, երբ խոհանոցի սեղանին նկատեցի մի «անկոչ» տհաճ միջատ: Ամուսինս, իմանալով բնավորությունս, արագ մոտեցավ և վերցրեց դրան: Իսկ այս առավոտ վաղ մտավ խոհանոց՝ վստահ լինելու համար, որ այնտեղ այլևս չկան միջատներ, որպեսզի ես կարողանամ հանգիստ մտնել: Ի՛նչ հիանալի մարդ է նա:

Ամուսինս արթնացավ՝ մտքում ունենալով նախ ի՛մ կարիքը հոգալու անհրաժեշտությունը: Նրա այդ քայլը ցույց է տալիս այն սերը, որի մասին Պողոսը խոսում է եփեսացիներին ուղղված նամակի 2. 25-ում. «Ամուսիններ՛, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոսն էլ եկեղեցուն սիրեց ու իր անձը նրա համար մատնեց»: Պողոսը շարունակում է. «Ամուսիններն իրենց կանանց այսպե՛ս պետք է սիրեն, ինչպես իրենց մարմինները. ով որ իր կնոջը սիրում է, իրեն է սիրում» (Հմ.28) :

Պողոսը ամուսնական սերը համեմատում է Քրիստոսի սիրո հետ, և դա ցույց է տալիս, թե ինչպես Տեր Հիսուսը մեր կարիքներն իր կարիքներից առաջ դրեց: Ամուսինս էլ, իմանալով, որ ես շատ եմ վախենում այդ «անկոչ հյուրերից», իմ մտավախությունը առաջնային համարեց:

Այդ սկզբունքը միայն ամուսինների համար չէ: Հիսուսի օրինակը տեսնելուց հետո՝ մեզանից յուրաքանչյուրը կարող է սիրով զոհաբերություն գնալ՝ վերացնելու ճնշման, վախի, ամոթի կամ հուսահատություն «անկոչ հյուրին»՝ սատանային, որպեսզի կարողանա ավելի ազատորեն շարժվել աշխարհում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ Քո Որդու պարզևի համար: Նրա, որ վերացրեց չարը իմ կյանքից և ինձ հաշտեցրեց Քեզ հետ: Ամեն:

Անկոչ հյուրեր միշտ էլ կուՆենանք, բայց կարևոր է, որ դրանք հեռացնենք մեր կյանքից:

Տե՛ր, բա՛ց սպասավորիս աչքերը, որ տեսնի: (Դ.Թագ. 6. 17)

## **ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԵՍԻԹԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Լ**իզայի ստացած քարտի վրա գրված համարը չէր համապատասխանում իր վիճակին. «Տերը բացեց նրա աչքերը, և նա տեսավ, որ Եղիսէէի շուրջը լեռը լի էր ձիերով ու հրեղեն մարտակառքերով, որոնք եկան նրա մոտ» (Հմ.17) : Լիզան մտածում էր.«Քաղցկեղ ունեմ, զավակ եմ կորցրել: Հրեղեն մարտակառքերը բոլորովին հարմար չեն ինձ»:

Հետո «այդ հրեղեն մարտակառքերը» աստիճանաբար սկսեցին երևալ: Քաղցկեղը հաղթահարած բարեկամները իրենց ժամանակը տրամադրեցին: Ամուսինը վաղաժամ ազատվեց արտասահմանյան զինվորական ծառայությունից: Բարեկամներն իր հետ աղոթում էին: Սակայն Աստծո սերը Լիզայի համար ամենից ավելի զգացվեց, երբ իր բարեկամ Բետտին եկավ երկու տուփ թաշկինակով, դրանք դրեց սեղանին ու սկսեց լաց լինել: Բետտին հասկանում էր Լիզային, որովհետև ինքն էլ էր վիժել:

«Բետտիի գալն ու ինձ հետ ցավելը ամենամեծ նշանակություն ունեցավ,- ասում էր Լիզան: -Ստացածս քարտը հիմա իմաստ ձեռք բերեց : Հիմա հրեշտակների զորքը միշտ ինձ հետ է»:

Երբ բանակը պաշարեց Իսրայելը, հրեշտակների զորքը պաշտպանեց Եղիսէէին: Բայց նրա սպասավորը չէր տեսնում այդ ամենը, ուստի աղաղակեց. «Տե՛ր, ի՞նչ պիտի անենք»(Հմ.15) : Եղիսէէն էլ պարզապես աղոթեց. «Տե՛ր, բա՛ց սպասավորիս աչքերը, որ տեսնի» (Հմ.17) :

Երբ նայենք Աստծուն, մեր դժվարությունները կօգնեն իմանալ, թե ինչն է կարևոր, և այն, որ մենք մենակ չենք: Կհասկանանք, որ Աստծո մխիթարիչ ներկայությունը մեզ երբեք չի լքի, և որ Նա Իր սերը ցույց է տալիս զարմանալի ձևերով:

**Աղոթք** - Սիրող Հայր, շնորհակալ եմ Քո ներկայությանն ամբողջապես վստահելու համար: Բա՛ց աչքերս, որպեսզի կարողանամ Քեզ տեսնել ճոր ձևով: Ամեն:

Վատ լուրեր կստանանք, սակայն ապավինենք Աստծուն և վստահ լինենք, որ Նա միշտ մեզ հետ է:

Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը: (Փիլ. 1.6)

### **ՎԵՐՁԻՑ ՍԿՍԻՐ**

**Մ**անուկ հասակում ինձ հաճախ էին հարցնում. «Երբ մեծանաս, ի՞նչ ես ուզում դառնալ»: Այս հարցի պատասխանը ինձ մոտ միշտ փոխվում էր. մեկ ուզում էի բժիշկ դառնալ, մեկ՝ հրշեջ, միսիոներ, հոգևոր հովիվ, բնագետ և նույնիսկ Մաք Գայվերի ֆիլմերի հերոսներից մեկը: Հիմա, երբ չորս զավակների հայր եմ, մտածում եմ, որ ավելի ղժվար է լինելու այդ հարցի պատասխանը նրանցից ստանալը: Երբեմն ուզում եմ ասել, թե կոնկրետ որ ոլորտում նրանք կարող են առաջադիմել: Բայց գիտակցում եմ նաև, որ ծնողները հաճախ իրենց զավակների հնարավորությունները գերազնահատում են:

Այս նույն բանը Պողոս առաքյալը նկատել էր Փիլիպպեի հավատացյալների նկատմամբ, որոնց սիրում էր և որոնց համար աղոթում (Փիլ. 1.3): Նա տեսնում էր վերջը, գիտեր, թե ինչ պիտի դառնային նրանք, եթե ամեն ասված բան կատարվեր: Աստվածաշունչը մեզ տալիս է այդ վերջի մեծ պատկերը: Դա հարույթյունն է և ամեն բանի վերանորոգումը (տե՛ս Ա. Կորնթ. 15 և Հայտն. 21) : Բայց նա նաև ասում է, թե ով է պատմության հեղինակը:

Պողոսը բանտից գրած նամակի առաջին տողերում Փիլիպպեի եկեղեցուն հիշեցրեց. «Նա, ով ձեր մեջ այս բարի գործն սկսեց, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը»(Փիլ. 1.6): Հիսուսն սկսեց գործն ու ավարտին հասցրեց: Ավարտ բառն այստեղ հատկապես կարևոր է, որովհետև Աստված ոչ մի բան անավարտ չի թողնում:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ իմ պատմությունը Քո ձեռքերի մեջ է: Ինձնից կախված չէ դրա իրագործումը: Կյանքս հանձնում եմ քեզ: Օգնի՛ր՝ կարողանամ Քեզ վստահել: Ամեն:

Վստահի՛ր Տեր Հիսուսին, և Նա ամեն բան կկատարի:





Որովհետև ինչպես որ Ադամով բոլորը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով բոլորը կենդանանում են: (Ա. Կորնթ. 15. 22)

## **ԻՐԵՆ ԴԱՐՉՅԱԼ ԿՏԵՍԵՍ**

**Մ** ութ ու լուռ սենյակում վերցրի մի աթոռ և նստեցի Ջեկիի մահճակալի մոտ: Երեք տարի քաղցկեղի դեմ պայքարելուց առաջ ընկերուհիս շատ աշխույժ մարդ էր: Այսօր էլ հիշում եմ կյանքով լի նրա աչքերը և դեմքի մշտական ժպիտը: Սակայն այժմ նա լուռ ու հանդարտ պառկած էր հատուկ հոգատարություն կարիք ունեցողների հաստատությունում:

Չիմանալով ինչից սկսել, ես որոշեցի Աստծո խոսքից հատված կարդալ: Պայուսակից հանեցի Աստվածաշունչը, բացեցի Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված առաջին նամակն ու սկսեցի կարդալ:

Այս այցելությունից հետո, երբ մենակ մնացի մեքենայիս մեջ, ներքին մի վստահություն մխիթարեց ինձ.«Դու իրեն դարձյալ կտեսնես»: Ընկերուհուս վիճակի համար տխրելով՝ մի պահ մոռացել էի, որ հավատացյալների համար մահը պարզապես ժամանակավոր է (Ա. Կորնթ. 15. 21-22): Վստահ էի, որ Ջեկիին դարձյալ տեսնելու եմ, որովհետև երկուսս էլ հավատում էինք Հիսուսի մահվանն ու հարությունը, որ եղավ մեղքերի թողություն համար( հմ.3-4): Երբ Հիսուսը խաչվելուց հետո հարություն առավ, մահը կորցրեց հավատացյալներին միմյանցից և Աստծուց բաժանելու իր իշխանությունը: Մեր մահից հետո երկնքում հավիտյան ապրելու ենք Աստծո և մեր բոլոր հոգևոր քույրերի ու եղբայրների հետ:

Որովհետև Հիսուսը կենդանի է այսօր, Իրեն հավատացողները կորստյան ու վշտի պահին հույսը չեն կորցնում: Մահը ընկղմված է խաչի հաղթության մեջ (հմ.54)

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ իմ մեղքերի համար մեռար: Հավատում եմ, որ Դու ողջ ես, որովհետև Աստված Քեզ հարուբյուն տվեց: Ամեն:

Ցավի ու վշտի պահին Աստված մխիթարում է մեզ: Մենք էլ ուրիշներիին մխիթարենք՝ Տեր Հիսուսի միջոցով մեր ունենալիք հավիտենական կյանքի հույսով:

Առավոտյան լիացանք քո ողորմությամբ, ցնծացինք և ուրախ եղանք մեր կյանքի բոլոր օրերին: (Մաղմ. 89. 14)

## **ՄԵՆՔ ԿԱՐԵՎՈՐ ԵՆՔ**

**Մ**ի քանի ամիս է՝ նամակագրություն ունեմ մի երիտասարդի հետ, որը լրջորեն մտածում է հավատքի մասին: Մի առիթով նա գրել էր.«Պատմության հոլովույթում մենք պարզապես փոքր, ճղճիմ ու աննշան մի կետ ենք: Արդյո՞ք կարևոր ենք և որևէ արժեք ունենք»:

Իսրայելի մարգարե Մովսեսը կհամաձայնե՞ր նրա հետ. «Մեր կյանքի օրերի ... մեծ մասն անցնում է ցավով ու հեծությամբ» (Մաղմ. 89. 10): Կյանքի կարճությունը կարող է մեզ մտահոգել ու մեր կարևորության մասին մտածելու առիթ դառնալ: Կարևոր ենք, որովհետև մենք խորապես ու հավիտենապես սիրված ենք մեզ ստեղծող Աստծո կողմից: Այս բանաստեղծության մեջ Մովսեսն աղոթում է.« Լիացանք քո ողորմությամբ» (Հմ.14): Մենք կարևոր ենք, որովհետև կարևոր ենք Աստծո համար:

Կարևոր ենք նաև այն բանի համար, որ կարող ենք Աստծո սերը ցույց տալ ուրիշներին: Թեև մեր կյանքը կարճ է, բայց անիմաստ չէ, եթե հետևում ենք Աստծո սիրուն: Այս աշխարհի վրա մենք ոչ թե դրամ շահելու և ժամանակը գալուց հետո ուրախ հանգստյան կոչվելու համար ենք, այլ «Աստծուն ցույց տալու», Նրա սիրո մասին ուրիշներին պատմելու:

Վերջապես, թեև այստեղ կյանքը անցողիկ է, մենք հավիտենության արարածներ ենք: Քանի որ Հիսուսը հարություն առավ, մենք հավիտյան ապրելու ենք: Մովսեսը հենց այդ էր ուզում ընդգծել, երբ վստահեցրեց.«Առավոտյան լիացանք քո ողորմությամբ»: Այդ առավոտյան պետք է կանգնենք հավիտյան ապրելու, սիրելու և սիրվելու համար: Ու այս ճշմարտությունը շատ խորիմաստ է:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, շնորհակալ եմ, որ ես կարևոր եմ Քեզ համար: Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ ուրիշների հետ կիսել: Ամեն:

Կարող է մտածես, թե որևէ կարևորություն չունես, բայց վստահ եղի՛ր, որ Աստված սիրում է քեզ, որովհետև դու կարևոր ես Իր համար:

Ձեր հեզուքյունը թող բոլոր մարդկանց հայտնի լինի: (Փիլ. 4.5)

## ՀԱՄԱՌ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

**Դ**ոկտոր Զուսի հետաքրքիր պատմություններից մեկը Զաքս անուանով երկու մարդկանց մասին է, որոնցից մեկը հարավ է գնում, մյուսը՝ հյուսիս: Նրանք հանդիպում են Փրաքսի դաշտում և հրաժարվում միմյանց ճանապարհ տալ: Նրանցից մեկը երգվում է մնալ իր տեղում, եթե նույնիսկ ամբողջ աշխարհի համար անհարմար լինի: Ստիպված են լինում նրանց շրջանցող ճանապարհ կառուցել:

Այս պատմությունը մարդկային էություն մասին է: Մենք բոլորս էլ հակված ենք մտածելու, թե միշտ մենք ենք ճշմարիտը և համառորեն կառչելու մեր մտքին, եթե նույնիսկ դրա հետևանքները ավերիչ լինեն: Բայց, բարեբախտաբար, Աստված կարողանում է մեր մարդկային համառությունը մեղմել: Պողոս առաքյալն այս ճշմարտությունը շատ լավ գիտեր: Երբ Փիլիպպեի եկեղեցու անդամ երկու կանայք կոչվում էին, նրանց կոչ արեց սիրով հաշտվել (4.2): Նախապես հավատացյալներին թելադրելով, որ Հիսուս Քրիստոսով լինեն մեկ անձ ու մեկ մտածում (5. 2-8), նա Կղեմեսին և մյուս գործակիցներին խնդրում է «օգնել նրանց» (4.3): Պողոսի այս հորդորը խաղաղություն հաստատելու և փոխզիջման՝ որպես մեկ մարմին գործակցելու կոչ է: Բնականաբար, լինում են ժամանակներ, երբ դիրքը չզիջելը, հաստատակամությունը անհրաժեշտ է, սակայն Քրիստոսանման մոտեցումը տարբեր է անզիջում Զաքսի դիրքորոշումից: Կյանքում գոյություն ունեցող շատ բաների համար չարժե կոչվել: Մենք կարող ենք ամեն չնչին բանի համար վիճել, միմյանց վիրավորել, մինչև իրար ոչնչացնելը (Պաղ. 5. 15): Բայց կարող ենք նաև հրաժարվել մեր սին գոռոզությունից, չնորհքով իմաստուն խրատներ ստանալ և մեր քույրերի ու եղբայրների հետ միաբանություն խնդրել:

**Աղոթք** - Սիրող Հայր, փափկացրու՝ համառ ու կարծրացած սիրտս, որպեսզի կարողանամ իրական միաբանության մեջ ապրել: Օգնիր՝ կարողանամ լսել ինձ տրված խրատները: Ամեն:

Հակասություններ ու վիճելու առիթներ շատ կլինեն, բայց հարկավոր է իմաստուն խորհուրդներով դրանք հաղթահարել:

Զայրացկոտ մարդը կռիվ է հարուցում, բայց համբերատարը խաղաղեց-  
նում է այն: (Առ. 15. 18)

## **ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ**

**Մ**անր խոսքերը ցավ են պատճառում: Իմ բարեկամ մրցանա-  
կակիր հեղինակը մտածմունքների մեջ էր: Նրա՝ շատ  
բարձր գնահատականի ու մրցանակի արժանացած գրքի գրա-  
խոսներից մեկը բազում դրական գնահատականների կողքին  
նաև բավական սուր քննադատություններ էր արել: Եվ բարե-  
կամս մտածում էր, թե ինչպես պատասխանի նրան:

Շատերը հորդորում էին հրաժարվել այդ մտքից: Ես էլ էի հա-  
մաձայն, որ բարեկամս անտեսի նման քննադատությունները,  
կամ դրանցից դասեր քաղելով՝ շարունակի գրել:

Ես նաև որոշեցի նայել, թե Աստվածաշունչն ինչ է ասում  
նման պարագաների մասին: Հակոբոսի գիրքը հանձնարարում  
է. «Թող ամեն մարդ շուտ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ,  
և ծանր՝ բարկանալու մեջ» (1.19): Իսկ Պողոս առաքյալը խոր-  
հուրդ է տալիս. «Իրար նկատմամբ նո՛ւյն խորհուրդն ունեցեք»  
(Հռոմ.12.16):

Առակների գրքի մի ամբողջ գլուխ նվիրված է այն բանին, թե  
ինչպես պետք է վարվել տարաձայնությունների ժամանակ: 15-  
ի 1-ում ասվում է. «Սիրալիք պատասխանը մեղմացնում է զայ-  
րույթը»: «Զայրացկոտ մարդը կռիվ է հարուցում, բայց համբե-  
րատարը խաղաղեցնում է այն» (Հմ. 18) «Հանդիմանություն  
լսողը խոհեմություն պիտի ստանա» (Հմ.32): Այսպիսի իմաս-  
տությունները նկատի առնելով՝ թող Աստված օգնի մեզ, որ կա-  
րողանանք մեր լեզուն զսպել, ինչպես բարեկամս արեց: Սակայն  
ամեն բանից առավել իմաստությունը թելադրում է «Տիրոջից  
երկյուղել», որովհետև «Տիրոջ երկյուղը խրատ է և իմաստու-  
թյուն, և փառքը ծագում է դրանից» (Հմ.33):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, քննադատություն կամ վեճ հաղթահարե-  
լիս զսպի՛ր լեզուս, որ կարողանա Քեզ պատվել: Ամեն:

ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ և վեճեր միշտ էլ կլինեն, բայց կարևոր է Տիրոջ  
շնորհքով պատասխանել դրանց:

Իշխանություններին և պետություններին մերկացնելով հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իր մեջ: ( Կող. 2. 15)

## **ՊԱՏԵՐԱԶՄ ԿՅԱՆՔԻ «ՎԻՇՆԱՊՆԵՐԻ» ԴԵՍ**

**Ե**րբեւէ կռվե՞լ ես վիշապների հետ: Եթե պատասխանդ բացասական է, գրող Յուլիին Փիթերսոնը կառարկի քեզ, որովհետև «Երկարատև հնազանդությունն նույն ուղղությունմբ» գրքում նա գրում է. «Վիշապները մեր վախերի արտացոլումն են, մեզ ցավ պատճառող ամեն ինչի պատկերները»: Նա ուզում է ասել, որ կյանքը լի է «վիշապներով»: Մի դեպքում դրա անունը հիվանդություն է, մեկ այլ դեպքում աշխատանքի կորուստ, ձախողված ամուսնություն, օտարացած զավակ կամ նյութական պարտավորություն: Դրանք մեր կյանքի մարտահրավերներն են, որոնց դեմ միայնակ պայքարելու կարողություն չունենք:

Բայց այդ պատերազմներում հաղթած բացարձակ չեմպիոն ունենք: Ոչ թե հեքիաթային հերոս, այլ Գերագույն չեմպիոն, որը մեր փոխարեն կռվել է այդ բոլոր կործանարար վիշապների դեմ և հաղթել: Լինեն դրանք մեր թվարկած նեղությունները, թե հոգևոր թշնամին, մեր պաշտպանը՝ Հիսուսը, ավելի մեծ է: Պողոս առաքյալը գրում է. «Իշխանություններին և պետություններին մերկացնելով հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իր մեջ (Կող. 2.15): Այս կոտորված աշխարհի ավերիչ ուժերը նրա հզորությանը համարժեք չեն:

Այն պահին, երբ տեսնենք, որ կյանքի «վիշապները» անպարտելի են թվում մեզ համար, պետք է վստահենք Քրիստոսի ազատարար ուժին: Մենք վստահությունմբ կարող ենք ասել. «Բայց շնորհակալություն Աստծուն, որ մեզ հաղթություն մվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով» (Ա. Կորնթ. 15.57):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Դու օգնում ես ինձ՝ պայքարելու չարի ու նեղության դեմ: Տու՛ր ինձ իմաստություն ու զորություն, որպեսզի կատարյալ վստահությամբ Քեզ հետ քայլեմ: Ամեն:

«Վիշապների» դիմագրավելու կարիք միշտ էլ կլինի, բայց մեր հաղթանակը Հիսուս Քրիստոսով է:

Իմաստնությունն տուր քո ծառային, որ նա խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը: (Գ. Թագ. 3.9)

### **ԻՄԱՍՏՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ**

**Ե**րկու տարեկան Քեննեթը մի օր կորավ: Արագ արձագանքման 9-1-1 համարին զանգելուց երեք ըոպե հետո երեխան հայտնաբերվեց իրենց տնից երկու փողոց այն կողմ գտնվող տոնավաճառի մոտ: Մայրը խոստացել էր, որ կեսօրից հետո նա պապիկի հետ գնալու էր այդտեղ: Բայց երեխան չէր սպասել մինչև կեսօր և իր խաղալիք մեքենայով հասել էր այնտեղ: Երբ տղան ապահով տուն եկավ, հայրը հանեց խաղալիքի մարտկոցը:

Իրականում Քեննեթը խելացի երեխա էր և կարողացել էր գնալ իր ուզած տեղը: Նրան պակասում էր իմաստնությունը: Երբեմն մեծերիս էլ չի բավարարում այդ հատկանիշը: Սողոմոնը, որ թագավոր էր նշանակվել իր հայր Դավթի կողմից (Գ. Թագ. 2), ընդունում էր, որ ինքը մանուկ է: Աստված նրա երազում հայտնվեց ու ասաց. «Որեւէ բան խնդրի՛ր քեզ համար» (3.5): Սողոմոնը պատասխանեց. «Ես դեռ պատանի եմ և չգիտեմ իմ անելիքը... Իմաստնությունն տուր քո ծառային, որ նա խելամտություն ունենա տարբերելու բարին ու չարը» (Հմ. 7- 9):

Եվ Աստված Սողոմոնին ընդունակություն, շատ խոր իմաստնություն, ծովեզերքի ավազի չափ լայնախոհ սիրտ տվեց (4.29):

Մեզ հարկավոր իմաստնությունը որտեղի՞ց կարող ենք ստանալ: Սողոմոնն ասում է, թե Տիրոջ հանդեպ «վախն է» իմաստնության սկիզբը ( Առ. 9.10): Հետևաբար մենք էլ կարող ենք սկսել Աստծուց՝ խնդրելով, որ մեզ սովորեցնի Իր մասին և տա մեզ անհրաժեշտ իմաստնություն:

**Աղոթք** - Հայր, Քո ճամփաներին հետևելու համար միշտ իմաստնության կարիք ունեմ: Խնդրում եմ՝ ցույց տուր, թե ուր եմ գնալու: Ամեն:

Սովորող սիրտ ունենալու համար Աստծո իմաստնությանն ենք կարոտ:

Նրան սիրի՛ր թո անձի պես, որովհետև դուք էլ պանդուխտ եղաք եգիպտացիների երկրում: (Ղև. 19.34)

## ՍԻՐԵԼ ՕՏԱՐԱԿԱՆԻՆ

**Ե**րբ նոր երկիր տեղափոխվեցինք, առաջին փորձություններից մեկը չընդունված, օտար լինելու զգացումն էր: Եկեղեցու ազատ նստարանին գտնելով մի ազատ տեղ, նստեցի, սակայն տարեց մի տղամարդ ասաց, որ ազատեմ այդ տեղը: Հետո նրա կինը, ներողություն խնդրելով, բացատրեց, որ դա իրենց մշտական տեղն է: Հետագայում ես իմացա, որ մարդիկ եկեղեցու նյութական վիճակն ապահովելու, նաև վստահ լինելու համար, որ միշտ նստելու տեղ կունենան, վարձակալում էին նստարանները:

Հիշեցի Աստծո՛ խորայելցիներին տված ցուցումներն այն մասին, թե ինչպես է պետք ընդունել օտարականներին ու պանդուխտներին՝ հակառակ մշակութային տարբերություններին: Իր հաստատած օրենքները տալով՝ Աստված նրանց հիշեցրեց, որ օտարականներին ընդունեն, որովհետև իրենք էլ ժամանակին պանդուխտ են եղել (Ղև.19.34): Որ հարկավոր է նրանց հետ ոչ միայն ազնվորեն վարվել, առանց նեղելու (Հմ.33), այլև պետք է սիրել նրանց իր անձի պես (Հմ.34):

Աստված նրանց ազատել էր Եգիպտոսում կրած նեղություններից՝ տալով մի նոր տուն այն երկրում, որտեղ «կաթ ու մեղր է հոսում» (Ել. 3. 17): Նա սպասում էր, որ իր ժողովուրդը կսիրի նրանց, որոնց տունը նույնպես այդտեղ էր հիմնված:

Օտարականների ու պանդուխտների տեսնելիս Աստծուց խնդրի՛ր, որ քեզ որևէ մշակութային սովորություն հայտնի, որը կօգնի իր սիրով կիսվելու նրանց հետ:

**Աղոթք** - Հայր, բաց թևերով ես ինձ ընդունում, որովհետև սիրում ես ինձ: Տու՛ր ինձ Քո սերը, որ կարողանամ այն ուրիշների հետ կիսել: Ամեն:

Տերը թելադրում է օտարականներին սիրով մեր շարքերն ընդունել, որովհետև մենք էլ օտարական ու պանդուխտ ենք այս աշխարհում:

Ես քեզ հետ եմ...ես, որ պահպանեցի քեզ իմ արդար աջով: (Ես. 41.10)

## ԱՍՏՎԱԾ Է ՄԵՁ ՊԱՅՈՒՄ

Հարավաֆրիկացի Ֆրեդի Բլոմը, որ 2018-ին դարձավ 114 տարեկան, աշխարհի ամենատարեց մարդն է: Նա տեսել է երկու համաշխարհային պատերազմ, իր երկրի բաժանումը և Մեծ ճգնաժամը: Երբ նրան հարցրին, թե որն է երկարակեցության գաղտնիքը, Բլոմը պարզապես ուսերը թոթվեց: Մեզանից շատերի նման նա հատուկ առողջարար սնունդ կամ սովորույթներ չէր ընտրել: Բայց իր առողջության մի պատճառ նա գիտեր. «Դա Աստված է: Նա ունի ամենամեծ զորությունը... Նա է պահում ինձ»:

Բլոմի ասածը այն խոսքերի արձագանքն է, որ Աստված ասաց Իսրայելի ժողովրդին, երբ ազգը թուլանում էր և տանջվում թշնամու ճնշումներից: Աստված նրան խոստանում է. «Ես քեզ հետ եմ, ես, որ զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով» (Ես.41.10): Հոգ չէ, որ նրանց վիճակը չափազանց հուսահատական էր, և անկարելի էր թվում հանդստություն գտնելը, Աստված վստահեցրեց իր ժողովրդին, որ նրանք իր սիրո ու հոգածության ներքո են: «Դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի՛ խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը» (Հմ.10):

Սարսափելի չեն մեզ հանդիպած դժվարություններն ու նեղությունները, ո՛չ անհաջող ամուսնությունը, ո՛չ զավակի հեռանալը, ո՛չ բժշկի հայտնած ահազդու լուրը և նույնիսկ հալածանքը: Որովհետև մեր Աստվածը իր ձեռքը մեզ է պարզում ու մեզ պինդ բռնում է: Նա մեզ հավաքում և իր հզոր թևերի մեջ է առնում:

**Աղոթք** - Հայր, վստահեցրու՛, որ ինձ պահում ես, որովհետև մի տեսակ կախված եմ զգում: Վստահում եմ, որ Դու պիտի օգնես ու բռնես ինձ: Ամեն:

Հաճախ ենք մեզ միայնակ ու լքված զգում, սակայն քաջալերվենք, որ իր հզոր թևերի մեջ ենք:



Եվ Աստուծու խաղաղությունը իշխի ձեր սրտերում, որի մեջ և կանչվեցիք մեկ մարմնով: (Կող. 3. 15)

## ՄԻԱՍԻՆ ԶԱՐԳԱՆԱԼ

**Ա**մուսինս՝ Ալանը, կանգնած էր մարգագաշտը լուսավորող հսկա աշտարակի տակ, երբ հակառակորդ թիմի խաղացողներին մեկը գնդակը խփեց վերև: Հայացքը կենտրոնացնելով գնդակի վրա՝ Ալանը արագ վազեց դեպի դաշտի ամենամութ անկյունը և խփվեց երկաթե ցանկապատին: Երեկոյան, սառույցի բարձիկը տալով ամուսնուս, հարցրի. «Լա՞վ ես զգում»: Նա, ուսը շփելով, ասաց, որ ավելի լավ կզգար, եթե ընկերները զգուշացնեին, որ ցանկապատին է մոտենում: Թիմերը լավագույն կերպով են գործում, եթե միասնական են: Ալանի դեպքը կարող էր չլինել, եթե նրա ընկերներին մեկը զգուշացնեի, երբ նա սլանում էր դեպի ցանկապատը: Աստվածաշունչը մեզ սովորեցնում է, որ եկեղեցու անդամները թիմերի նման նախասահմանված են միասին գործելու և միմյանց հսկելու համար: Պողոս առաքյալն ասում է, որ Աստծո համար կարևոր է, թե մենք ինչպես ենք վարվում միմյանց հետ, որովհետև մեկ անձի արարքը կարող է ազդել հավատքի ընտանիքի վրա (Կող. 3. 13-14): Երբ բոլորս օգտագործենք իրար ծառայելու առիթները, կատարելապես նվիրված լինելով միասնությունն ու խաղաղությունն զգալիորեն, եկեղեցին կզարգանա (Հմ.15): Պողոսը դիմում է իր ընթերցողներին. «Քրիստոսի խոսքը առատապես բնակվի ձեր մեջ ամեն իմաստությունք. իրար սովորեցրե՛ք ու խրատեցե՛ք, ձեր սրտերում շնորհով օրհներգեցե՛ք Տիրոջը սաղմոսերով, օրհնություններով և հոգևոր երգերով» ( Հմ.16 ): Մենք կարող ենք ներշնչել ու միմյանց պաշտպանել սիրով ու անկեղծ հարաբերությունքով, հնազանդվելով ու շնորհակալ սրտով Աստծուն փառաբանելով և այդպես միասին զարգանալով:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ խոսքովդ ինձ հրահանգում ես, Հոգովդ՝ ուղղում և հավատակիցներովդ՝ կենտրոնացնում ու հաշվետու դարձնում Քրիստոսի մարմնի մասերին: Ամեն:

Փորձի՛ր այս շաբաթ Աստծո խոսքը ինչ-որ ձևով ուրիշներին հասցնել, որպեսզի միասնություն և սեր քաջալերես Քրիստոսի մարմնի մեջ:

Որից ամբողջ մարմինը, միասին կազմվելով, միասին հարմարվելով, ամեն հողվածի ձեռնտվությամբ, ամեն մի անդամի ներգործության չափով, մարմնի աճն է տեղի ունենում՝ իր ամձը սիրով շինելու համար: (Եփ. 4.16)

## ՄԱՏԱԿԱՐԱՐԻՐ ԿԱՍ ՄՇԱԿԻՐ

**Ե**ղբայրներ Բիլին ու Մելվինը մի օր իրենց ազարակում էին, երբ նկատեցին, որ երկնքում մի սավառնակ է պտտվում, որի հետագիծը կապույտի վրա որոշակի գրություն է պատկերում: Տղաները ուշադիր դիտեցին, մինչև որ գծագրվեցին «ԳՄ» (GP) տառերը: Նրանք որոշեցին, որ իրենց տեսածը անպայման իմաստ ունի և սկսեցին կանխագուշակություններ անել: Մեկը մտածում էր, թե այդ տառերը կարող են նշանակել «Գնա՛, մատակարարի՛ր» կամ «Գնա՛, քարոզի՛ր»: Մյուսը հավանական էր համարում «Գնա՛, մշակի՛ր» կամ «Գնա՛, հերկի՛ր» տարբերակները: Հետագայում նրանցից մեկը՝ Բիլի Գրեհեմը նվիրվեց Ավետարանի քարոզչությանը կամ մատակարարելուն՝ դառնալով ավետարանչության բացառիկ ղեմաբերից մեկը: Իսկ եղբայրը՝ երկար տարիներ հավատարմորեն վարեց ընտանեկան ազարակի մշակման գործը: Եղբայրներն իրենց ընտրած մասնագիտություններով (մեկը՝ քարոզիչ, մյուսը՝ հողի մշակ) պատվեցին Աստծուն: Եվ դրանք գրեթե հավասարազոր աշխատանքներ էին: Եթե Բիլի Գրեհեմ ավետարանիչը երկար տարիներ հոգևոր ծառայություն կատարեց, դա չի նշանակում, թե եղբոր հնազանդությունը հող մշակելու իր կոչին պակաս արժեքավոր էր: Երբ Աստված ումանց ամբողջովին կոչում է հոգևոր ծառայության, չի նշանակում, թե մյուսների գործունեությունը պակաս կարևոր է: Երկու դեպքում էլ, ինչպես Պողոսն է ասում. «ամեն մի անդամի ներգործության չափով» (Հմ.16): Դա նշանակում է պատվել Հիսուսին՝ հավատարմորեն գործածելով այն պարզեաները, որ Ինքը տվել է մեզ: Անկախ այն բանից, թե մենք որտեղ ենք ծառայում կամ աշխատում, մենք կարող ենք տարբերություն անել Հիսուսի համար:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, լավագույնս գործածիր ինձ և օգնի՛ր՝ տեսնել, որ իմ խոսքերն ու գործերը մեծապես ազդում են ինձ հետ աշխատողների կյանքի վրա: Երախտապարտ եմ, որ ինձ հենց այս գործին ես դրել: Ամեն:

Աստված պարգևներ է տվել: Լավագույնս կիրառենք դրանք և օգտագործենք Իր փառքի համար:

Դա բոլոր սերմերից էլ փոքր է, բայց երբ աճում է, բոլոր թփերից մեծ է և ծառ է լինում, այնպես որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերին հանգիստ առնում : (Մատթ. 13.32)

## **ԴԱՆԴԱՂ, ԲԱՅՑ ՀԱՍՏԱՏՈՒՆ**

**Հ**անդիպեցի Հին բարեկամիս, որը պատմեց իր նոր նախաձեռնությունների մասին: Խոստովանեմ, որ նրա ասածներն այնքան էլ համոզիչ չթվացին: Բայց այդ խոսակցությունից ամիսներ անց նրա նվազախմբի համբավը տարածվել էր ամենուր, ուղի-ոյում նրանց ստեղծագործությունները առաջին հորիզոնականներն էին զբաղեցնում, շուտով նաև հեռուստատեսություններում ցուցադրվեց խմբի հայտնի երգերից մեկը: Պարզ էր, որ բարեկամիս աստեղային ժամն էր:

Մեր ունեցած հաջողությունները կարող են մեծ, աստղային կամ բեմական լինել: Սակայն մանանեխի ու խմորի առակը խոսում է Աստծո թագավորության մասին: Դա փոքր ու աննշան բաների աճն է, որը դանդաղ է ու աստիճանական:

Թագավորությունը իր Թագավորի նման է: Քրիստոսի առաքելությունը զարգացավ ու իր գագաթնակետին հասավ մի սերմի նման, որը թաղվում է հողի մեջ, կամ թթխմորի պես, որը դրվում է ալյուրի զանգվածի մեջ: Այն բարձրացավ, ինչպես ծառն է հողից դուրս գալիս, կամ հացն է փռի մեջ մեծանում: Հիսուսը բարձրացավ: Մենք հրավիրված ենք Իր ճանապարհի համաձայն ապրելու: Երբ թվում է, թե հարցերը մենք ենք կարգավորում, դրանց լուծումները մեր ձեռքերում են, մենք փորձության դեմ ենք հայտնվում, իրենց տված արդյունքի և աշխարհում մեր արածներն արդարացնելու համար: Արդյունքը մի «ծառ է լինում, այնպես որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերին հանգիստ առնում»( Հմ.32), իսկ հացը, որ խնջույք է առաջացնում, Քրիստոսի գործն է, ոչ թե մերը:

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, շնորհակալ եմ, որ հաճախ փոքր ու աննշան ձևերով ես գործում: Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ ապավինել ու հավատալ, թե Դու ամեն ինչ տեսնում ես: Ամեն:

Փոքրիկ բաներ անելով՝ մենք կարող ենք քաջալերել մարդկանց ու հոգալ նրանց կարիքները:

Եկեք ցնծանք Տիրոջ առջև, աղաղակենք մեր փրկիչ Աստծուն: (Մաղմ. 94.1)

### **ԵՐԳՉԻ ՍԻՐՏԸ**

**Շ**աբաթ օրը վաղ առավոտյան մեր տան վերին հարկից փառաբանության երգ էր լսվում: Մտածեցի, որ այդ ժամին ընտանիքի անդամներից որևէ մեկն արթուն է: Բայց ես սխալվում էի, որովհետև երգողը կրտսեր դուստրս էր: Նա հագրվլ արթնացած, բայց երգն արգեն շուրթին էր:

Այդ աղջիկս երգչուհի է: Իրականում նա չի կարող չերգել: Երգում է, երբ արթնանում է, երբ դպրոց է գնում, երբ անկողին է մտնում: Նա ծնվել է երգը սրտում, իսկ նրա երգերը հիմնականում Հիսուսի մասին են: Նա փառաբանում է Աստծուն ամեն օր և ամենուր:

Ես սիրում եմ նրա ձայնի պարզությունն ու ազնվությունը: Նրա սրտաբուխ ու զվարթ երգերը ասես Տիրոջը պաշտելու Աստվածանշյան հրավերի արձագանքն են: Մաղմոս 94-ում կարդում ենք. «Եկե՛ք ցնծանք Տիրոջ առջև, աղաղակենք մեր փրկիչ Աստծուն» (Հմ.1): Շարունակելով սաղմոսի ընթերցանությունը, տեսնում ենք, որ այդ փառաբանությունը ծնվում է այն գիտակցումից, թե ո՞վ է Աստված. «Մեծ է Աստված, Տեր, մեծ թագավոր ողջ աշխարհում» (Հմ.3) և մենք նրան ենք պատկանում. «Տեր Աստվածն է նա մեր, մենք՝ նրա ձեռքի տակի ժողովուրդը և նրա արտաի ոչխարները» (Հմ.7):

Դատերս համար այդ ճշմարտությունները ամեն առավոտվա իր առաջին խորհուրդներն են: Աստծո շնորհքով այս փոքրիկը մեզ հիշեցնում է Աստծուն պաշտելու ուրախությունն ու հրճվանքը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ Քո՝ ով լինելու, Քո արածների և այն բանի համար, որ մեզ հրավիրում ես Քո արտաի ոչխարները լինելու: Թող այս օրս լցվի փառաբանության երգերով: Ամեն:

Մեր փառաբանության երգերով փառավորենք Տիրոջը և ցույց տանք Նրան մեծ աշխարհին:

Փնտրեցէ՛ք Տիրոջը և, երբ գտնեք, կանչեցէ՛ք նրան: (Ես. 55.6)

### ԼՍԵԼ ԱՍՏՂԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՍ

**Կ**արո՞ղ եք պատկերացնել կյանքն առանց բջջային հեռախոսի ու Wi-Fi-ի , առանց GPS համակարգի ու միկրոալիքային վառարանի: Բայց այդպիսի կյանք կա Հարավային Վերջինիայի Գրին Բենք գյուղաքաղաքում, որը հայտնի է որպես Ամերիկայի ամենալուռ բնակավայրը: Գրին Բենքի աստղադիտարանում է տեղադրված աշխարհի ամենամեծ ռադիոալիքային աստղադիտակը: Դրա աշխատանքի համար անհրաժեշտ է, որ շրջակայքում լուռթյուն լինի, որպեսզի այն կարողանա որսալ աստղերի ու համաստեղությունների շարժումներից առաջացող բոլոր բնական ռադիոալիքային տատանումները: Այդ աստղադիտակի մակերեսը մեծ է ֆուտբոլի դաշտի մակերեսից և գտնվում է ազգային ռադիոյի 13 հազար քառակուսի մդոն խաղաղ տարածքի կենտրոնում, որպեսզի սառքի զգայունությունը չխաթարվի: Նպատակային այդ լուռթյունը գիտնականներին հնարավորություն է տալիս լսել «մոլորակների երաժշտությունը»: Նաև հիշեցնում է, որ մեզ լուռթյամբ շրջապատենք՝ լսելու տիեզերքն Ստեղծողի ձայնը: Աստված Եսայի մարգարեի միջոցով խոսեց մոլորված ու կորսված մի ժողովրդի հետ՝ ասելով. «Ակա՛նջ դրեք ինձ և հետևեցե՛ք իմ ճանապարհին: Լսեցե՛ք ինձ, և ձեր հոգիները կապրեն բարություն մեջ, ու ես ձեզ հետ հավիտենական ուխտ կկնքեմ» (Ես. 55.3): Աստված իր հավատարիմ սերը խոստանում է բոլոր նրանց, ովքեր կփնտրեն իրեն և ներումի համար կզառնան դեպի Ինքը: Մենք նպատակադրված ենք նայում Աստծուն և հանդիպում ենք իրեն՝ Խոսքը կարգալով ու աղոթելով: Աստված մեզանից հեռու չէ: Նա ուզում է, որ մենք ժամանակ անցկացնենք իր հետ, որպեսզի կարողանանք լինել իր նախապատվությունը մեր ամենօրյա կյանքի, ապա նաև հավիտենականության համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, օգնի՛ր, որ այսօր լուռ կանգնեմ Քո առաջ, եթե նույնիսկ դա մեկ րոպե լինի: Քեզ հետ լինելուց կարևոր բան չկա: Ամեն:

Պատրաստվի՛ր Աստծո հետ լուռ մի պահ անցկացնել ու տե՛ս դրա մեծ օգուտը:

Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում: (Պուկ. 23.34)

### ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎԵԼԻ ՀՉՈՐ

**Մ**որ՝ Շարոնդայի մահից 24 ժամ անց Քրիստոսն արտասանեց այս հզոր ու ազդեցիկ խոսքերը. «Սերը ավելի հզոր է, քան ատելությունը»: Նրա մայրն ու ևս ութ հոգի սպանվել էին չորեքշաբթի երեկոյան Աստվածաշունչը սովորելու ժամանակ Հյուսիսային Կարոլինայի Չարլստոն քաղաքում: Ի՞նչ նկարագիր ունենալ այդ երիտասարդը, որ կարողացավ այդ ծանր պահին այդպիսի բառեր ասել: Քրիստը հավատում էր Հիսուսին, նրա մայրն էլ «ամբողջ սրտով սիրում էր բոլորին»:

Պուկաս 23. 26-49-ում ակնհայտ է ենթ լինում երկու ոճրագործների և անմեղ Հիսուսի սպանությունը (Հմ. 32): Երեք խաչվածների տառապանքի, հեքի և բացականչությունների միջև լավում են Հիսուսի հետևյալ խոսքերը. «Հայր, ներիր նրանց, որովհետև չգիտեն, թե ի՞նչ են անում»: Ատելությունը լցված կրոնական առաջնորդների նախաձեռնությամբ խաչեցին Նրան, որ սիրո մարմնացումն էր: Նույնիսկ անասելի ցավի պահին Հիսուսի մեջ սերը հաղթում էր ատելությանը:

Երբևէ դու կամ քո սիրելիներից մեկը ատելության, նախատիքի, դառնության կամ նախանձի թիրախ դարձնել եք:

Ցավդ թող քեզ մղի ազդեցիկ և Հիսուսի օրինակը թող քեզ քաջակերի, որ Հոգու զորությունը ատելության փոխարեն սերն ընտրես:

**Աղոթք** - Հայր, ներիր ինձ, եթե դժվարանամ ուրիշներին ներել: Օգնիր՝ կարողանամ պատկերացնել այն սերը, որն ավելի զորավոր է, քան ատելությունը: Ամեն:

Կոտրված աշխարհում ենք ապրում: Միայն Քրիստոսի սերը կարող է հավասարակշռել ողորմությունն ու արդարությունը:

Եթե պարօժեմալ պետք լինի, իմ տկարությամբ կպարօժեմալ: (Բ. Կորնթ. 11.30)

## ՈՍԿԵՂԵՆ ՍՊԻՆԵՐ

Հ ոլանդիայում նորաձևություն թելադրողները, ներշնչված ճապոնական կինցուզի արվեստից, կազմակերպել էին «Ոսկեղեն միացման» աշխատանքային դասընթաց: Կինցուզիի էությունն այն է, որ կոտրված ճենապակյա իրերը նորոգվում են ոսկու միջոցով: Ընդ որում, դա արվում է այնպես, որ կցվածքները ոչ թե քողարկվեն, այլ ընդհակառակը: Դասընթացին հրավիրվածներն իրենց հետ բերելու էին «սիրելի, բայց պատուված մի հագուստ, որը կմիացնեն ոսկով»: Կազմակերպիչները վստահ էին, որ այդ կերպ նորոգված հագուստները դառնալու էին նորաձև, իսկ այդ տեխնիկան տարածում էր ստանալու «Ոսկեղեն սպի» անունով: Հագուստներն այնպես են վերականգնվում, որ պատուված հատվածներն ընդգծվում են: Սա նման է Պողոս առաքյալի այն մտքին, երբ գրում է. «Եթե պարծենալ պետք լինի, իմ տկարությամբ կպարծենամ» (Բ. Կորնթ. 11.30): Թեև «աներևակայելի հայտնության» փորձություն էր անցել, սակայն չի պարծենա նրանց համար (Բ. Կորնթ. 12. 6): Նա խուսափում է պարծենալ և ասում, որ «մի խայթ» կա իր մարմնում (Հմ. 7): Ոչ մեկը չգիտե, թե ինչ էր ակնարկում այդ ասելով. գուցե ճնշում, մալրիայի որևէ տեսակ, թշնամիներից կրած հալածանքներ կամ մեկ այլ բան: Նա աղաչեց Աստծուն, որ վերացնի այդ խայթը: Սակայն Աստված ասաց. «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ գորությունը տկարության մեջ է իրագործվում» ( Հմ. 9): Ինչպես հին կտորի պատուվածքները կարող են մասնագետների շնորհիվ դառնալ գեղեցիկ տեսարաններ, այնպես էլ մեր կյանքի կոտրված ու տկար մասերը կարող են այնպիսի հարթակ դառնալ, որտեղ կփայլեն Աստծո գորությունն ու փառքը: Նա մեզ միասին է պահում, կերպարանափոխում է և գեղեցկացնում մեր բոլոր տկարությունները:

**Աղոթք** - Հայր, երբ Դու բուժում ու նորոգում ես ինձ այնպիսի ձևերով, որ փառք է բերում Քո անվանը, թող իմ բոլոր սպիները ոսկեղեն լինեն: Ամեն:

Մարդկանցից թաքցրած տկարություններ ունենք, սակայն դրանց միջով Աստված Իր գորությունն է հայտնում:

Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ փրկելու մեղավորներին, որոնցից առաջինը ես եմ: (Ա. Տիմ. 1.15)

## **ԻՆՉՆ Է ՍԽԱԼ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

**2**0-րդ դարավերջին Լոնդոնի «Թայմս» թերթն իր ընթերցողներին առաջարկել էր պատասխանել մեկ հարցի. «Ի՞նչն է սխալ աշխարհում»: Հարց, որին պատասխանելիս մարդիկ ճշտում էին, թե որքա՞ն ժամանակ ունեն դրանք նշելու համար, որովհետև իրականում սխալներն աշխարհում շատ-շատ են: «Թայմսը» պատասխանների մի երկար շարք ստացավ, բայց դրանցից միայն մեկը նկատվեց խորիմաստ: Անգլիացի բանաստեղծ, գրող և փիլիսոփա Գ.Մ. Չեսթերթոնի պատասխանն էր հարուցել շատերի զարմանքը: Այն ամփոփված էր չորս բառի մեջ. «Հարգելի պարոնայք, ե՛ս եմ»:

Այս պատասխանը ճիշտ է, որովհետև Չեսթերթոնից շատ դարեր առաջ նման բան էր ասել նաև Պողոս առաքյալը: Հակառակ իր համբավին և օրինակելի, ազնվական քաղաքացի լինելուն՝ Պողոսը խոստովանեց անցյալի իր բոլոր հանցանքները՝ ասելով. «Առաջ հայհոյիչ, հալածող ու անարգող էի» (Հմ. 13): Պատասխանելով այն հարցին, թե Հիսուսը ու՞մ փրկելու եկավ, նա ասաց՝ մեղավորներին և շարունակեց. «որոնցից առաջինը ես եմ» (Հմ. 15): Պողոսը շատ լավ գիտեր, թե ինչն էր և է սխալ աշխարհում: Նա գիտեր նաև, որ ամեն բան ճիշտ ու լավ անելը «Մեր Տիրոջ շնորհն է» (Հմ.14):

Ի՞նչ հիանալի ճշմարտություն, որը մեր հայացքը բարձրացնում է դեպի Քրիստոսի փրկարար սերը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ իմ մեղավորիս հանդեպ Քո համբերատարության համար: Քեզ հավիտենական փառք ու պատիվ: Ամեն:

Ըստ քեզ՝ ի՞նչն է սխալ աշխարհում: Շատ հավանական է՝ ե՛ս և դո՛ւ:



Ուրեմն գնացե՛ք, բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք: (Մատթ. 28.19)

## ԼՎԱՑՔԻ ՕՐ

**Կ** ոլորադոյի շրջանի հոգևոր հովիվ Չեղ Գրահամը մի օր մեքենայով անցնում էր աղքատ թաղամասերից մեկով և սկսեց աղոթել այդտեղի բնակիչների համար: Հանկարծ նկատեց հագուստի լվացման մի փոքր կես և որոշեց մտնել ու տեսնել հավաքվածներին: Հաճախորդներից մեկը Գրահամից մի մետաղադրամ խնդրեց լվացքի մեքենան աշխատեցնելու համար: Այդ փոքր խնդրանքը առիթ դարձավ, որ հովիվն սկսի ամենշաբաթյա «լվացքի օր» շարժումը, որը հավանություն արժանացավ նաև եկեղեցու կողմից: Դրա ընթացքում շարժման մասնակիցները մետաղադրամներ և լվացքի օճառ էին նվիրում լվացքատանը, օգնում զրա տիրոջը և աղոթում հաճախորդների համար:

Օգնության ձեռք մեկնելու այս արարքը արտացոլում է Տեր Հիսուսի տված մեծ կոչումը Իր աշակերտներին. «Երկնքում ու երկրիս վրա ամբողջ իշխանությունն ինձ տրվեց: Ուրեմն գնացե՛ք, բոլոր ազգերին աշակե՛րտ դարձրեք՝ նրանց մկրտելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.18-19):

Սուրբ Հոգու գործության ներկայությունը ուժ է տալիս «բռնորին», որպեսզի կարողանան զնալ և օգնության ձեռք մեկնել նույնիսկ հագուստ լվացողներին: Բայց մենք այդ գործում մենակ չենք: Ինչպես Հիսուս խոստացավ. «Ահա ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը» (Հմ.20): Հովիվ Չեղն այդ ճշմարտության փորձառությունն ունեցավ, երբ աղոթեց Ջեֆ անունով մի հաճախորդի համար, որը պայքարում էր քաղցկեղի դեմ: Չեղը պատմել է. «Երբ աչքերս բացեցի, տեսա, որ սենյակում գտնվող բոլոր հաճախորդները, ձեռքերը Ջեֆին մեկնած, աղոթում են մեզ հետ: Որպես հովիվ իմ ծառայության ընթացքում դա ամենասուրբ պահն է եղել»:

**Աղոթք** - Տեր, զորություն տուր ինձ, որ կարողանամ այսօր Քո բարի լուրը տարածել ամենուր: Ամեն:

Դու նույնպես կարող ես օրհնություն լինել քո շրջապատի մարդկանց համար:

Կործանեց եգիպտացիների երկիրն իր անդրանիկ ծնունդներով հանդերձ, քանզի հավերժ է նրա ողորմությունը: (Մաղմ. 135. 10)

## **ԼԱՎ ԶԱՐԿԻՐ**

**Ե**րբ Ուոլթ Դիանեյի «Բեմբի» ֆիլմը էկրան բարձրացավ, շատ ծնողներ, գավակների հետ ղիտելով այն, իրենց մանկութունը վերապրեցին: Երիտասարդ մայրիկներից մեկը այն աստիճան էր տարվել ֆիլմի գործողություններով, որ այն պահին, երբ որսորդը սպանում է Բեմբիի մորը, նրա շնչառությունն արագացել էր: Մինչև օրս ընտանեկան հավաքույթներում հիշում են այդ դեպքը, և այն, որ նա շատ է ամաչել, երբ որդին այդ նույն պահին մանկական անմիջականությամբ գոռացել է. «Լա՛վ զարկիր»:

Շատերիս հետ է պատահում, որ ծիծաղում ենք՝ հիշելով մեր երեխաների արարքները: Բայց ի՞նչ ասել, երբ 135-րդ սաղմոսում նույնպես նման մի բան է ասվում: Իսրայելի փրկչին ուղղված շնորհակալական խոսքում փառաբանվում է Նա, ով «կործանեց եգիպտացիների երկիրն իր անդրանիկ ծնունդներով հանդերձ» (Հմ.10. տես նաև Ելից 12. 29-30):

Նմանությունն չկա՞ այս արտահայտության և կինոդահլիճում նստած փոքրիկի ասածի մեջ՝ լա՛վ զարկիր: Ծշմարտությունը հասկանալու համար պետք է հետևել պատմության շարունակությունը: Ամբողջ աշխարհը դառնում է տխրության և ուրախության մեկ ընտանիք միայն այն ժամանակ, երբ ամեն բան լուսավորվում է Հիսուսի հարությունը: Միայն այն ժամանակ կկարողանանք տեսնել Աստծո հրաշագործությունը, երբ Հիսուսին ընդունենք որպես մեր Փրկիչ և Իր հետ հավիտենական կյանք ունենանք:

**Աղոթք** - Ամերևույթ Աստված, շնորհակալ եմ, որ ինձ պատճառներ ես տալիս հավատալու, թե Քո տեսիլքն ու սերը բոլորի համար է, որ այն ավելի շատ է, քան իմ սերը իմ ու յուրայիններիս հանդեպ: Ամեն:

Եթե քննենք մեր կյանքը, կտեսնենք, որ Աստված Իր կարեկցությամբ մոտենում է բոլորին անխտիր:

Այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կոնի, նա կլինի ինչպես հոսող ջրերի մոտ աճած ծառ: (Եր. 17. 7-8)

### **ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՐԱՇՏԸ**

**2** 019-ի ամռանը սաստիկ քամիներ էին և Կալիֆոռնիայի Վիկտորիլի արվարձանի ամբողջ տարածքը ծածկվեց անմոռուկով կամ թավշածաղկով: Այս ծառանման բույսերը աճում են անապատում, հասնում մինչև վեց ոտնաչափ բարձրությամբ, և երբ ուժեղ քամիներ են լինում, արմատախիլ լինելով տարածվում են ամենուր:

Այդ փաթաթվող փշերը պատկերացրի՝ կարգալով Երեմիայի նկարագրությունն այն մարդու մասին, որի «սիրտը կապտամբի Տիրոջ դեմ» (Եր. 17.5): Երեմիան ասում է, թե «այն մարդը, որ իր հույսը կոնի մարդու վրա՝ ապավինելով նրա մարմնին ու բազկին, նա կլինի ինչպես վայրի մոշին անապատում և, երբ բարիքը գա, չի նկատի»(Հմ. 5-6 ): Սրանց հակառակ վիճակում են Աստծուն վստահողները: Ծառերի նման նրանց խոր ու հաստ արմատները ուժ են ստանում Իրենից և մնում կյանքով լի նույնիսկ երաշտի ժամանակ:

Թե՛ ծաղիկները, և թե՛ ծառերն ունեն արմատներ, բայց ծաղիկները ամուր կապված չեն մնում արմատներին՝ պատճառ դառնալով դրանց չորանալուն ու մեռնելուն: Իսկ ծառերը, խարսխված լինելով իրենց արմատներին, աճում են, մեծանում ու զժվարությունները հաղթահարում: Եթե ամուր կառչենք Աստծուն, զորություն ու քաջալերում կստանանք Իր Սուրբ Խոսքի իմաստությունից: Եթե աղոթքով Իր հետ խոսենք, մենք էլ կկարողանանք կյանք տալու, կյանք պահելու և Իր տվածով սնվելու փորձ ձեռք բերել:

**Աղոթք** - Կենսատու՛ Հայր, Դու՛ ես ինձ պահողը: Ծնորհակալ եմ, որ պարգևում ես պետք եղածը, որպեսզի կարողանամ ապահով նավարկել կյանքի դժվարությունների ու մաքառումների ծովում: Ամեն:

Երաշտի ժամանակ Աստված պատրաստ է Իր շնորհքով ու սիրով զորացնելու մեր արմատները, եթե մենք Իրեն ապավինենք:

Ինչպես Մովսեսի հետ էի, այդպես կլինեմ նաև քեզ հետ: (Դեսու 1. 5)

## ՈՒԺԵՂ ՈՒ ՔԱՁ

**Ա**մեն երեկո, երբ փոքրիկ Քեյլին փակում էր աչքերը, խավարը պատում էր նրան: Սենյակի լուռթյունը սովորաբար խախտվում էր Կոստա Ռիկայի իրենց փայտաշեն տան ճռճուցնեերով ու վերնահարկում գտնվող չղջիկների աղմուկով: Մայրը աղջկա սենյակում գիշերային լուսամտիփ էր դրել, բայց երեխան դարձյալ վախենում էր մթուշիտներից: Մի երեկո Քեյլիի հայրը նրա մահճակալի կողքին Սուրբ Գրքից ընտրված մի հատված դրեց, որն ասում էր. «Զորացի՛ր եւ արիացի՛ր, մի՛ վախեցիր և մի՛ երկնչիր, որովհետև քեզ հետ է քո Տեր Աստվածը» (Հեսու. 1.9): Աղջիկն սկսեց ամեն երեկո կարդալ այդ բաներն ու Աստծո այդ խոստումը պահեց իր մահճակալի վրա մինչև քոչեջ գնալու օրը:

Հեսու 1-ում կարդում ենք, որ Հեսուն հաջորդում է Մովսեսին: «Ուժեղ և քաջ» լինելու պատվիրանը հաճախ է կրկնվում Հեսուին ու Իսրայելի ժողովրդին զիմելիս՝ շեշտելով դրա կարևորությունը (Հմ. 6-7. 9): Վստահաբար նրանք ամեն անգամ սարսափում էին՝ անորոշ ապագայի դեմ հանդիման, սակայն Աստված վստահեցրեց Հեսուին՝ ասելով. «Ինչպես Մովսեսի հետ էի, այդպես կլինեմ նաև քեզ հետ (Հմ 1. 5):

Վախեր ունենալը բնական է, բայց շարունակ սարսափի մեջ լինելը վնասակար է մեր Ֆիզիկական ու հոգևոր առողջության համար: Ինչպես Աստված քաջալերեց Իր ծառաներին, մենք էլ կարող ենք ուժեղ ու հզոր լինելու հորդորն ընդունել՝ միշտ մեզ հետ լինելու Աստծո խոստմամբ:

**Աղոթք** - Հավատարիմ Հայր, շնորհակալ եմ, որ Դու միշտ ինձ հետ ես: Օգնի՛ր՝ հիշել Քո խոստումները և Քեզ վստահել, երբ վախի մեջ լինեմ: Ամեն:

Վախ ու սարսափ կուճենանք, բայց Աստված խոստացել է մեզ հետ լինել:

Փառավորվեց միայն նրա՝ անունը. երկնքում ու երկրի վրա է վեհությունը նրա: (Սաղմ. 148.13)

## **ԱՂՈԹՔՆԵՐ ԾՈՎԱՓԻՆ**

**Մ**եր ամուսնուլթյան քսանհինգամյակի առիթով կատարած ճամփորդուլթյան ժամանակ, ամուսինս ու ես ծովափին նստած կարդում էինք Աստվածաշունչը: Այդտեղով անցնում էին մանրավաճառները, առաջարկում իրենց ապրանքները, բայց մենք ոչինչ չգնեցինք: Նրանցից մեկը՝ Ֆերնանդո անունով, ժպտալով մոտեցավ և խնդրեց, որ նվերներ գնենք մեր բարեկամների համար: Երբ նրան էլ մերժեցի, հավաքեց իր ապրանքներն ու քմծիծաղելով գնաց: «Աղոթում եմ, որ Աստված օրհնի օրդ», - ասացի նրան:

Ֆերնանդոն շրջվելով ասաց. «Նա օրհնել է ինձ: Հիսուսը փոխել է իմ կյանքը: Նրա ներկայությունը զգում եմ նաև այստեղ»: Եվ սկսեց պատմել, թե ինչպես 14 տարի առաջ Աստված իրեն ազատել է թմրամոլությունից ու հարբեցողությունից: Երբ նա սկսեց աղոթել ու սաղմոսներ արտասանել, արցունքներս սկսեցին հոսել: Այնտեղ... ծովափին մենք միասին պաշտեցինք Տիրոջը և ուրախացանք Նրա ներկայությամբ:

148-րդ սաղմոսը փառաբանության աղոթք է: Սաղմոսերգունքաջալերում է բոլոր ստեղծագործություններին. «Օրհնեցէ՛ք անունը Տիրոջ, քանզի նա ասաց, և դրանք ստեղծվեցին, նա հրամայեց, և դրանք հաստատվեցին» (Հմ.5), որովհետև «երկնքում ու երկրի վրա է վեհությունը նրա» (Սաղմ. 148.13):

Թեև Աստված մեզ հորդորում է իրեն հայտնել մեր կարիքները և վստահ լինել, որ ինքը լսում է և հոգում դրանց մասին, բայց Նա նաև ուրախանում է մեր աղոթքներով, որտեղ էլ մենք աղոթելիս լինենք, նույնիսկ ծովափին:

**Աղոթք** - Հայր, օգնիր, որ կարողանամ պաշտել Քեզ՝ Քո տված յուրաքանչյուր շնչիս հետ: Ամեն:

Տիրոջը պաշտի՛ր այսօր ու նաև փառք տո՛ւր Նրան, երբ լսես հավատակից մի քոջ կամ եղբոր հոգևոր փորձառության մասին:

Սակայն ես Տիրոջը կսպասեմ, կսպասեմ իմ փրկիչ Աստծուն, և իմ Տեր Աստվածը կլսի ինձ: (Միք. 7.7)

### **ԸՆՏՐԵԼ ՀՈՒՅԱԸ**

**Ե**ս աշխարհի միլիոնավոր այն մարդկանցից եմ, որն ունի սեզոնային աֆեկտիվ խանգարում (SAD) հիվանդությունը: Դա դեպրեսիայի մի տեսակ է, որն առաջանում է հիմնականում ձմռանը, արևի լույսի պակասից: Ես միշտ երազում եմ երկար ու տաք օրերի մասին:

Գարնան առաջին իսկ նշանները ինձ հիշեցնում են, որ Աստծո պարգևած հույսը կարող է դուրս գալ մեր կյանքի խավար եղանակներից: Միքիա մարգարեն է խոստովանել այդ հույսի մասին նույնիսկ սիրտ ցավեցնող «ձմռանը», երբ Իսրայելի ժողովուրդը Աստծուց հեռացել էր: Ներկայացնելով այդ մուսյլ վիճակը՝ նա ողբաց. «Վա՛յ ինձ, որովհետև մարդկանց մեջ չկա մեկը, որ ուղիղ լինի» (Միք. 7. 2): Թեև վիճակը օրհասական էր, բայց Միքիան հույսը չկորցրեց: Նա վստահ էր, որ Աստված կգործի (Հմ.7.7)՝ նույնիսկ համատարած ավերածությունների մեջ չտեսնելով այդ հույսի ապացույցը:

Մեր խավար ու երբեմն անվերջ թվացող «ձմեռների մեջ», երբ դարունը նույնիսկ չի էլ նշմարվում, մենք էլ Միքիայի դիմադրոված պայքարի մեջ ենք: Հուսահատությունը պիտի տրվե՞նք, թե վստահենք «Փրկիչ Աստծուն»(Հմ.7):

Աստծո վրա դրած մեր հույսը ապարդյուն չի կարող լինել (Հռոմ. 5. 5): Նա մեզ կբերի «անձմեռ» ժամանակներ, երբ չեն լինի վիշտ ու ցավ (Հայտն. 21.4): Իսկ մինչ այդ՝ հանգստանանք Իր մեջ ու հայտարարենք. «Իսկ արդ, ո՞վ է իմ համբերությունը, եթե ոչ դու, Տե՛ր...» (Սաղմ. 38.8):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, կյանքի դժվարին ու տառապալից եղանակների մեջ հեշտ է հուսահատվելը: Այդ պահերին օգնիր, որ կարողանամ վստահել Քեզ ու իմ վայելած խաղաղությունը կիսել ուրիշների հետ: Ամեն:

Փառաբանության խոսքեր կարող են հնչել ամեն օր: Սակայն փառքը միայն Աստծուն է վայելում:

Նա չուզեց խմել այն, այլ նվիրեց Տիրոջը: (Բ. Թագ 23.17)

## ՈՒՄ ՀԱՄԱՐ

**Բ**ազմությունը հավաքված էր Մեխիկոյի պողոտաներից մեկում: Դրոշներն ու գունավոր թղթերը ծածանելով՝ մարդիկ սպասում էին կաթուղի եկեղեցու հոգևոր ղեկավարին: Փողոցի մեջտեղում ուրախ-ուրախ մի շնիկ էր պտտվում, այնպես, կարծես սպասվող ուրախությունը իր համար էր:

Հավ է, որ մի շնիկ շեղում է քո ուշադրությունը, սակայն ուրիշի համար նախատեսված փառաբանությունը գողանալը կարող է կործանարար լինել: Դավիթը գիտեր դա և դրա համար մերժեց խմել այն ջուրը, որ իր պատերազմիկները, իրենց կյանքը վտանգելով, բերել էին նրան: Նա ցանկություն էր հայտնել խմել Բեթղեհեմի դարպասի մոտ գտնվող ջրհորի ջրից: Նրա գինվորներից երեքը, կտրելով թշնամական գիծը, հասան ջրհորին և ջուրը հասցրին Դավիթին: Վերջինը ուրախացավ՝ տեսնելով իր ռազմիկների նվիրվածությունը, բայց մերժեց խմել ու «այն նվիրեց Տիրոջը» (Բ. Թագ. 23.17):

Մեր մասին շատ բան է ասում այն, թե մենք ինչպես ենք ընդունում փառքն ու պատիվը: Երբ փառաբանությունը ուրիշների համար է, հատկապես Աստծո, չմտնենք այդտեղ: Շքահանդեսը մեզ համար չէ: Եթե պատիվը քեզ համար լինի, շնորհակալություն հայտնի՛ր այն անողին, հետո փառք տուր Հիսուսին: «Ջուրը» մեզ համար չէ:

Շնորհակալ եղի՛ր, ապա թափի՛ր Տիրոջ առջև:

**Աղոթք** - Հայր, թող միշտ շրթունքներիս վրա Քեզ փառաբանելու խոսքեր լինեն, որովհետև միայն Դու ես փառաբանության արժանի: Ամեն:

Փառաբանության խոսքեր կարող են հնչել ամեն օր: Սակայն փառքը միայն Աստծուն է վայելում:

Ձանազան պարզևների ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է... թե հորդորող է՝ հորդորանքի մեջ, բաշխողը՝ գվարթությունը, բարեգործը՝ հոժարությամբ (Գործ. 12. 6.8):

## **ԲԵՌՆԱՏԱՐԻ ՎԱՐՈՐԴԻ ՁԵՌՔԵՐԸ**

**Լ**ուրը ցնցող էր: Շագանակագեղձի քաղցկեղը հազիվ հաղթահարած հորս մոտ հիմա էլ ենթաստամոքսային գեղձի ուռուցք էր հայտնաբերվել: Մինչ այդ հայրս իրեն ամբողջությամբ նվիրել էր մորս՝ նրա բազում հիվանդությունների պատճառով: Ծնողներիս հոգածությունն ու խնամքի կարիք ունեին, հետևաբար մեզ դժվար օրեր էին սպասում: Տուն վերադառնալուց հետո մի կիրակի այցելեցի ծնողներիս հաճախած եկեղեցին: Այնտեղ Հելմուտ անունով մի մարդ մոտեցավ ու ասաց, որ կամենում է օգտակար լինել մեզ: Երկու օր անց նա եկավ մեր տուն՝ մի ցուցակ ձեռքին և ասաց. «Երբ քիմիաթերապիան սկսվի, անհրաժեշտ կլինի ճաշեր պատրաստել: Խոհարարների մի ցանկ եմ պատրաստել: Ինչ վերաբերում է տան շրջակայքի խոտերը մաքրելուն, դա ես կանեմ: Շաբաթվա <sup>ո</sup> օրն է աղբահանություն կատարվում, դա էլ կկազմակերպենք»: Հելմուտը բեռնատարի վարորդ էր եղել, այժմ անցել էր վաստակած հանգստի: Մեզ համար նա ասես հրեշտակ լիներ: Հետո իմացանք, որ այդպես նա շատերին էր օգնել: Հիսուսին հավատացողները հրավիրված են մարդկանց օգնելու ( Դուկ. 10.25-37), սակայն միայն ոմանք ունեն այդ կարողությունը: Պողոս առաքյալը դա անվանում է բարեգործություն (Հռոմ. 12.8): Այդպիսի շնորհ ունեցողները նկատում են կարիքները, ձեռնարկում գործնական օգնություն և ծառայում են ուրախությամբ: Սուրբ Հոգուց մղված՝ նրանք դառնում են Քրիստոսի ձեռքերը, որոնք մեկնվում են մեր վերքերը բուժելու (Հմ.4-5): Վերջերս հայրս ընդունեց քիմիաթերապիայի առաջին կուրսը: Հելմուտը նրան տարավ հիվանդանոց, այդ օրը ծնողներիս սառնարանը լի էր ուտելիքով: Աստծո պարգևած ողորմությունն էր բեռնատարի վարորդի ձեռքերով:

**Աղոթք** - Երկնավոր Զայր, օգնի՛ր ինձ, որպեսզի լցվեմ Քո ողորմությամբ և կարողանամ ուրախությամբ ծառայել կարոտյալներին՝ ցույց տալով, թե Դու ով ես: Ամեն:

Վստահաբար ունես հոգևոր մի շնորհք: որձածի՛ր այն Աստծո փառքի համար:



Տիտոս սիրելի որդուս, մեր ընդհանուր հավատի համաձայն (Տիտ.1.4)

## **ԱՄԵՆ ՄԱՐԴ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ**

**Ե**րբ մտա մեր նոր վերահսկիչի գրասենյակ, զգացումներս խառն էին, ու սրտումս վախ կար: Նախկին վերահսկիչը շատ խիստ ու կոպիտ էր, հաճախ էր մեզ հասցնում լացելու աստիճանի: Եվ ես շատ անհանգիստ էի, թե նոր ղեկավարն ինչպիսին է լինելու: Բայց նրա սենյակը մտնելուն պես վախերս փարատվեցին, երբ նա ջերմորեն ողջունեց ինձ ու խնդրեց պատմել իմ և իմ ունեցած դժվարությունների մասին: Ուշադիր լսեց , և դատելով իր ազնիվ ու պատրաստակամ խոսքերից՝ ես հասկացա, որ նա իսկապես մտահոգ ու գործունյա մարդ է: Որպես Տեր Հիսուսին հավատացող՝ նա հետագայում դարձավ իմ լավագույն խորհրդատուն, քաջալերողն ու ընկերը: Պողոս առաքյալը հոգևոր խորհրդատու էր Տիտոսի համար. «Սիրելի որդուս, մեր ընդհանուր հավատի համաձայն (Տիտ.1.4): Տիտոսին գրած նամակում նա օգտակար ցուցումներ և ուղեցույցներ է առաջարկում եկեղեցում իր կատարելիք դերի համար: Նա ոչ միայն սովորեցրեց, այլև օրինակ ծառայեց. «Բայց դու խոսի՛ր, ինչ որ վայել է ողջամիտ վարդապետությունը» (2.1), «Անձն ամեն կողմից բարի գործերի օրինակ դարձնելով. ուսուցանելու մեջ՝ անեղծություն, պարկեշտություն (Հմ.7): Արդյունքում Տիտոսը դարձավ Պողոսի գործընկերն ու եղբայրը (Բ.Կորնթ.2.13, 8.23) և ուրիշների խորհրդատուն: Մեզանից շատերն են ունեցել խորհրդատուներ: Նրանք մեր ուսուցիչներն են, մարզիչները, ծնողները, երիտասարդաց առաջնորդները կամ հոգևոր հովիվները, որոնք իրենց գիտելիքներով, իմաստնությունքով, փորձով ու Աստծո հանդեպ ունեցած հավատով առաջնորդել են մեզ: Ո՞վ պիտի օգտվի Հիսուսի հետ մեր ունեցած ճամփորդության ժամանակ մեր սովորած հոգևոր դասերից:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ բոլոր նրանց համար, ովքեր խորհրդատու են եղել ինձ: Ցույց տուր մեկիմ, ով ունի իմ քաջալերանքի կարիքը: Ամեն:

Անպայման ունեցել ես խորհրդատուներ, որոնք օգտակար են եղել քեզ դժվարությունների պահին: Դու էլ փորձի՛ր Աստծո տված շնորհքով ուրիշին օգնել:

Տերը տվեց, Տերն էլ հետ առավ: Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը»: (Չոք 1.22)

## **ՓԱՅՏԵՐ, ԱՂՅՈՒՄՆԵՐ ՈՒ ԱՍՏՎԱԾ**

**Ի**րենց կյանքի հաջորդ հանգրվանի համար աղոթելուց հետո Մարկն ու Նինան որոշեցին քաղաքի կենտրոնում մի տուն գնել և սկսել դրա վերանորոգումը: Բավական աշխատանք կատարված էր, երբ վերահաս փոթորիկն ամեն ինչ ավերեց: Մարկն այդ մասին գրեց. «Այսօր տհաճ անակնկալ ունեցանք: Ջեֆերսոն քաղաքից եկած մրրիկը մեր կատարած բոլոր գործերը վերածեց փայտերի ու աղյուսների կույտի: Դրանով Աստված ինչ-որ բան էր ուզում մեզ ասել»:

Անկանխատեսելի փոթորիկները միակ բանը չեն, որ մեզ կարող են շփոթության մատնել: Այդպիսի պարագաներում գոյատևելու բանալիներից մեկը Աստծո վրա մեր կենտրոնացումը չկորցնելն է: Հոբի կյանքում բնական աղետը պատճառ դարձավ, որ նա կորցնեք ունեցվածքն ու որդիներին (Հոբ.1.19): Եվ դա նրան պատուհասած միակ ղժբախտությունը չէր: Դրանից առաջ էլ երեք պատգամաբերներ էին վատ լուրեր բերել (Հմ.13-17):

Ցանկացած օր մեր տոնախմբությունը կարող է սուգի վերածվել, հաջողությունը՝ ձախորդություն, մեր կյանքը նյութական, հոգևոր կամ զգացմունքային ոլորտում շատ արագ կարող է դառնալ «փայտերի ու աղյուսների կույտ»: Սակայն Աստված ավելի հզոր է, քան որևէ փոթորիկ: Դիմանալ կյանքի փորձություններին ու ապրել-այս է պահանջում Նրա վրա հիմնված հավատքը: Դա է, որ մեզ կարողություն է տալիս Հոբի և այլոց հետ ասել. «Թող օրհնյալ լինի Տիրոջ անունը» (Հմ.22):

**Աղոթք** - Զայր, ների՛ր ինձ, երբ նեղությունների ու դժվարությունների ժամանակ Քեզ իմ տեսադաշտից դուրս եմ թողնում:

Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ տեսնել թարմ աչքերով: Ամեն:

Դժվարություններն ու նեղությունները պատճառ են դառնում, որ մեր ուշադրությունը շեղվի Աստծուց: Սովորի՛ր Զոքից և դու էլ Աստծուն ապավինի՛ր:

Եվ ով որ այս փոքրերից մեկին աշակերտի անունով թեկուզ մեկ բաժակ սառը ջուր խմեցնի, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա իր վարձը չի կորցնի (Մատթ. 10. 42)

## **ԹԵԿՈՒՋ ՄԵԿ ՏԱԿՈ**

**Է**չթոն և Օսթին Սամուելսոնները, Հիսուսին ծառայելու մեծ ցանկություններ, ավարտեցին քրիստոնեական քույրերը: Բայց նրանք ուզում էին ոչ թե ավանդական ծառայություն մատուցել եկեղեցում, այլ այդ ծառայությունն անել եկեղեցուց դուրս՝ աշխարհում: Եվ նվիրվեցին քաղցած երեխաներին օգնելու գործին: Իրենց ունեցած աստվածատուր ձեռնարկատիրություն միջոցներով նրանք 2014-ին բացեցին մի ճաշարան, որտեղ տակո էր մատուցվում: Այս խորտկարանը սովորական էր: Սամուելսոնները կիրառում էին «Գինի՛ր մեկ հատ, ստացի՛ր երկրորդը» սկզբունքը՝ երեխաների համար պատրաստված յուրաքանչյուր երկրորդ ճաշի գումարը նվիրելով իրենց միջոցներից: Մինչև օրս այս մարդիկ օժանդակություն են ցուցաբերել աշխարհի վաթսուներից ավելի երկրների մանուկներին: Նրանց նվիրելով մեկական տակո՝ նրանք մասնակցում են երեխաների սովի վերացմանը: Մատթեոսի Ավետարանի 10-րդ գլխում Հիսուսի խոսքերը հստակ ցույց են տալիս, որ նվիրումն ու ծառայությունը բացահայտվում են ոչ թե խոսքով, այլ գործով (Հմ. 37-42): Այդ գործերից մեկը «փոքրերին» տալն է: Սամուելսոնների պարագայում այդ գործը մանուկներին կերակրելն է: Բայց պետք է ուշադիր լինել «փոքրեր» արտահայտության հանդեպ, որովհետև դա միայն տարիքի համար չի ասվում: Հիսուսը հորդորում է տալ բոլոր նրանց, ովքեր «փոքր» կամ «անկարևոր» են համարվում աշխարհի աչքում: Այդպիսիք են աղքատները, հիվանդները, բանտարկյալները, գաղթականները: Այսինքն՝ բոլոր նրանք, ովքեր անբարենպաստ վիճակում են: Իսկ ի՞նչ տալ նրանց: Հիսուսն ասում է. «Թեկուզ մեկ բաժակ սառը ջուր» (Հմ. 42): Մեկ գավաթ սառը ջրի համեմատությամբ տակո մատուցելը ևս վստահաբար կարող է այդպես ընկալվել:

**Աղոթք** - Տե՛ր, տու՛ր ինձ աչքեր՝ տեսնելու և ականջներ՝ լսելու, որպեսզի կարողանամ թեկուզ փոքր-ինչ ծառայել նրանց, որոնք հանդիպում են իմ ճանապարհին: Ամեն:

ՈՒ՞մ ես դու «փոքր» համարում և ի՞նչ կարող ես անել նրանց համար: Նրանց օգնելու որոշումը քոն՞ է:

Թող այսօր համոզվեն, թե դու ես Իսրայելի Տեր Աստվածը: (Գ. Թագ.18.36)

## **ԱՍՏՎԱԾ ԼՍՈՒՄ Է ԱՄԵՆ ԲԱՆ**

**2**008-ին մի անգլիացի իր տան փոստարկղում գտնում է մի հրավիրատոմս, որն այդ հասցեի նախկին տիրոջն էր ուղարկվել...89 տարի առաջ: Նամակի ուշացման պատճառը անհայտ է:

Հաղորդակցության մարդկային լավագույն ջանքերն անգամ մեզ կարող են ամոթահար թողնել, սակայն Աստվածաշունչը հստակ ասում է, որ Աստված Իր հավատարիմ ժողովրդին անպայման տեսնում է: Գ. Թագ. 18-ում Եղիան նկարագրում է Տիրոջ և Հեթանոս Բահաղ աստծո հակասությունը, պարզ ցույց տալիս, թե ով է ճշմարիտ Աստվածը: Եղիան ծաղրում է ժամեր շարունակ աղոթող Բահաղի մարգարեներին՝ ասելով. «Բարձրաձայն կանչեցեք, չէ՞ որ աստված է, թերևս զբաղված է, կամ գործ է կատարում, կամ գուցե քնած է և զարթնի» (Հմ. 27): Ապա աղոթում է, որ Տերը պատասխանի, որ Իր ժողովուրդը հավատա և Աստծո գորությունը երևա:

Հնարավոր է, որ մեր աղոթքները անմիջապես պատասխան չստանան, ինչպես Եղիայի դեպքում եղավ, բայց պետք է վրստահ լինենք, որ Աստված լսում է մեր աղոթքները (Սաղմ. 33. 18): Աստվածաշունչը մեզ հիշեցնում է, որ Նա մեր աղոթքները գանձի պես պահում է Իր առջև «ամեն մեկը քնար և խնկով լի ոսկե բուրվառ» (Հայտն. 5.8): Աստված Իր կատարյալ իմաստնությունմբ կպատասխանի յուրաքանչյուր աղոթքի: Երկնքում չկա կորսված նամակ:

**Աղոթք** - Հայր, որքան հիանալի ես Դու, որ միշտ լսում ես աղոթքներս: Փառք եմ տալիս Քեզ, որ իմ աղոթքներն արժեքավոր են Քեզ համար: Ամեն:

Աստված հոգում է մեր մասին, հետևաբար արժե շնորհակալություն հայտնել Իրեն:

Նա մնաց է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամա-  
ցակից կտա: (Սաղմ.1.3)

## **ԾԱՌԻ ԳԵՏ ԽՈՍՈՂԸ**

**Ո** մանք նրան անվանում են «ծառի հետ խոսող»: Թոնի Ռի-  
նատուդոն հայտնի է որպես Վորլդ Վիժըն Ավստրալիա կազ-  
մակերպության ծառերի փրկարար: Միսիոներ ու գյուղատն-  
տես Թոնին երեսուն տարի ջանք թափեց Տեր Հիսուսի պատգա-  
մը բաշխելու համար՝ պայքարելով Աֆրիկայի Սահարա անա-  
պատի հարավում գտնվող Սահել շրջանի անտառների փրկու-  
թյան համար: Անդրադառնալով, որ վտիտ ու հիվանդ թփերը  
իրականում քնած ծառեր են, նա սկսեց հատուկ եղանակով  
խնամել ու ջրել դրանք: Նրա արարքը ներշնչեց հարյուր հա-  
զարավոր գյուղատնտեսների ու հողագործների, որ փորձեն  
փրկել ոչ բերրի հողերը, անտառները վերականգնելու միջո-  
ցով բուժել հողերի չորացումը: Արդյունքում Նիգերիայի հո-  
ղագործները կրկնապատկեցին բերքն ու եկամուտը և տարե-  
կան 2,5 մլն մարդու սնունդ ապահովեցին:

Հովհաննու 15-ում Հիսուսն այդպիսի ռազմավարություն էր  
ակնարկում, երբ ասում էր. «Ես եմ ճշմարիտ որթատունկը, և  
իմ Հայրը մշակն է: Ամեն ճյուղ, որ ինձ վրա է ու պտուղ չի բե-  
րում, նա կտրում է այն, և ամեն պտուղ բերողը մաքրում է, որ  
է՛լ ավելի պտղաբեր լինի» (Հմ.1-2):

Առանց Աստծո ամենօրյա խնամքի՝ մեր հոգիները ամուլ ու  
չոր կդառնան: Բայց երբ ուրախանանք իր օրենքներով ու գի-  
շեր ցերեկ մտածենք Նրա մասին, մենք «նման կլինենք ջրերի  
հոսանքի վրա տնկված ծառի» (Սաղմ.1.3): Մեր տերևները «չեն  
թափվի, ու ամեն բան, ինչ էլ որ անենք, կհաջողվի» (Հմ.3):

Խնամված ու իր վրա հաստատված լինելով՝ մենք նույնպես  
կարող ենք լինել մշտադալար, վերածնված ու բարգավաճ:

**Աղոթք** - Ո՛վ մշակող Աստված, իմ հյուժված ու չորացած մասե-  
րը հանձնում եմ Քեզ, որպեսզի խնամես ու ջրես, և նրանք  
աճեն ու վերակենդանանան: Ամեն:

Երբ մենք լցվենք Աստծո Խոսքով և փարթամանք, կաճենք,  
կգարգանք ու պտուղ կտանք:

Չորս բան կա, որ մանր են երկրի վրա, բայց իմաստուններից ավելի իմաստուն են: (Առ. 30.24)

### **ՆՊԱՏԱԿԱԴՐՎԱԾ ՀԱՆԳԻՍ**

**Ռ**ամեշը սիրում է պատմել Հիսուսի մասին: Նա համարձակորեն խոսում է իր գործընկերների հետ և ամիսը մեկ անգամ էլ գնում է իր հայրենի գյուղ ու, անցնելով տնետուն, ավետարանչություն է անում: Նրա ոգևորությունը փոխանցվում էր ունկնդիրներին, մանավանդ այն օրից ի վեր, երբ նա անդրադարձավ հանգստանալու կարևորությունը:

Ռամեշն ամեն շաբաթվա վերջին և գրեթե ամեն երեկո ավետարան էր քարոզում: Ծառայության յուրաքանչյուր ընթացք նրա համար այնքան կարևոր էր, որ կիներ ու երեխաները կամ չէին տեսնում նրան, կամ էլ երբ տուն էր գալիս, հոգնած ու սպառված էր լինում:

Այդ անհավասարակշիռ վիճակից նրան հանեցին կնոջ անկեղծ խոսքերը, բարեկամների խորհուրդներն ու Աստվածաշնչի որոշ հատվածներ: Առակների 30-ը հիշատակում է փոքր ու չնչին այնպիսի էակների, ինչպիսիք են մրջյունները, ճագարները, մորեխներն ու սարդերը: Եվ զարմանում, որ «ճանկերով պատից կառչող սարդը, որին թեև հեշտ է որսալ, բայց բնակվում է թագավորների հարկերի տակ» (Հմ.28): Ռամեշը զարմացավ, որ նման պարզ բանը տեղ էր գտել Աստվածաշնչում: Սարդին դիտելը ժամանակ է պահանջում: Մեկը տեսել է պալատում պտտվող սարդը և սկսել հետևել նրա գործողություններին: Թերևս Աստված է այդ սարդը դրել իր աշխարհում՝ հիշեցնելու մեզ, որ մենք էլ մեր գործն ու հանգիստը հավասարակշռենք: Մենք մեր երեխաների հետ խաղալու, կամ ուղղակի մեր ընտանիքի ու բարեկամների հետ հանգստանալու ժամանակ չենք գտնում: Թող Աստված մեզ իմաստնություն տա, որպեսզի իմանանք՝ ե՞րբ աշխատել, ծառայել և ե՞րբ հանգստանալ:

**Աղոթք** - Տե՛ր, Քո սերն ինձ ազատություն է տալիս արդյունավետ գործելու և իմաստալից հանգստանալու համար: Ամեն:

Աշխատանքը կարևոր է, հանգիստը՝ նույնպես:  
Հարկավոր է դրանք հավասարակշռել:

Այդ տաճարը քանդեցե՛ք, և երեք օրում այն կկանգնեցնեն: (Ռոմի.2.19)

## **ՔԱՆԴԻՐ ԱՅՍ ՏՈՒՆԸ**

**Մ**իչիզանի Պանտիաք քաղաքի շենքերը քանդող մի ընկերություն սխալմամբ քանդել էր մի շենք: Քննիչները պարզել էին, որ քանդման ենթակա տան տերը իր տան համարը փակցրել էր հարևանի պատին, որպեսզի իր տունը չքանդեն:

Հիսուսը ճիշտ հակառակն արեց: Նա իր «տունը» ուրիշների համար քանդելու արտոնություն էր տալիս: Պատկերացրեք, թե մարդիկ, նաև իր աշակերտները, ինչ շփոթմունքի մեջ էին, երբ Նա մարտահրավեր նետեց կրոնական առաջնորդներին՝ ասելով. «Այդ տաճարը քանդեցե՛ք, և երեք օրում այն կկանգնեցնեն» (Հովհ.2.19): Առաջնորդները վրդովմունքով պատասխանեցին. «Այս տաճարը քառասունվեց տարում է կառուցվել, իսկ դու երեք օրում այն կկանգնեցնե՞ս» (Հմ.20): Նրանք չհասկացան, որ Հիսուսը իր մարմնի տաճարի մասին էր ասում (Հմ.21): Չհասկացան, որ Նա եկել էր ցույց տալու, որ այն վնասը, որ մենք անում ենք մեզ և միմյանց, ինքն էր կրելու, և ինքը զոհվելու էր նրանց համար:

Աստված միշտ էլ մեր սրտերը ճանաչել է մեզանից ավելի լավ: Ուստի Նա իր ծրագրի իրագործումը չվստահեց նույնիսկ նրանց, ովքեր տեսել էին իր կատարած հրաշքները և հավատացել էին իրեն (Հմ.23-25): Այն ժամանակ Նա, ինչպես հիմա, աստիճանաբար իր արտասանած բառերով սեր ու բարություն էր հայտնում: Բառեր, որ մենք էլ չեինք հասկանա, եթե լսեինք:

**Աղոթք** - Երկնքում գտնվող Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր՝ հավատամ, որ Դու միշտ վարագույրի ետևում բարի գործի վրա ես՝ ավելի՛ն ու ավելի՛ լավ՛ն անելով, քան ես գիտեմ կամ կարող եմ հասկանալ: Ամեն:

Հիմա, երբ հասկանում ես, թե Հիսուսն ինչ էր ակնարկում այս խոսքն ասելիս, տեսնու՞մ ես Նրա կարեկցությունն ու ողորմությունը:

Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում: (Յովհ.15.5)

## **ՔԱՂՅՐ ԲԵՐՔԸ**

**Մ**եր նոր բնակարանի հետ ժառանգել էինք մի որթատունկ: Այգեգործության փորձ չունեցող մեր ընտանիքը բավական ժամանակ տրամադրեց սովորելու համար, թե ինչպես է պետք մշակել որթատունկը: Երբ ստացանք առաջին բերքը, ուրախությամբ բերանս դրեցի խաղողի հատիկը, բայց հուսախաբ եղա. այն տհաճ ու թթու համ ուներ:

Որթատունկի վրա այդքան ծանր աշխատանք թափելուց հետո դառն ու անախորժ բերք ստանալու զգացողությունը Եսայի 5-ում եղած շեշտադրման արձագանքն է: Այնտեղ մի այլաբանական պատկեր կա Իսրայելի ժողովրդի հետ Աստծո հարաբերության մասին: Աստված, որ ներկայացվում է որպես մշակ, մաքրել էր բլուրի քարերը, այգի դարձրել, տնկել էր ընտիր որթատունկ, մեջտեղում աշտարակ էր կառուցել և մի հնձան փորել՝ սպասելով բերքին (Ես. 5.1-2): Մշակը շատ վրդովվեց, երբ այգին, որ Իսրայելն էր խորհրդանշում, դառնահամ խաղող տվեց, «անիրավությունն արեց, արդարություն փոխարեն՝ ողբ ու աղաղակ» (Հմ.7): Ի վերջո Աստված դժկամությամբ քանդեց այգին՝ խնայելով որթատունկի մի մնացորդ միայն՝ նրանից ակնկալելով լավ բերք: Հովհաննու Ավետարանում Հիսուսը կրկին վերադառնում է այդու օրինակին՝ ասելով. «Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում (Հովհ.15.5): Այս պատմության մեջ Հիսուսը իրեն հավատացողներին նմանեցնում է որթատունկի ճյուղերին, որոնք կապված են իրեն: Երբ կապված լինենք Հիսուսին ու աղոթքով վստահենք իր Հոգուն, մենք կստանանք հոգևոր սնունդ և կտանք ամենաքաղցր պտուղը՝ սերը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ իմ մեջ աճեցնում ես բարի պտուղ, երբ կառչած եմ լինում Քեզ: Թող որ Քո կյանքը հոսի իմ մեջ և իմ կյանքում աճեցնի ավելի առատ սիրո բերք: Ամեն:

Եթե կառչած մնանք Հիսուսին, մեր կյանքի բերքը կլինի բարի պտուղն ու սերը:



Սակայն նրա համար մի՛ ուրախացեք, որ ոգիները ձեզ հնազանդվում են, բայց առավել ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում: (Պուկ. 10.20)

## **ԱՐԴՅՈՒՆՔԸ ԹՈՂ ԱՍՏԾՈՒՆ**

**Տ**արիներ առաջ հրավիրված էի մի համալսարանի ուսանողական խորհրդի անդամների հետ հանդիպման: Նրանք հայտնի էին որպես ըմբոստ ու խռովարար ուսանողներ, ուստի ես բարեկամներիցս մեկին ևս տարա՝ որպես օգնական: Ուսանողները տոնական տրամադրություն ունեին, որովհետև շահել էին այդ տարվա մրցաշարը: Ընթրիքի ժամանակ քառասյին վիճակ սկսվեց, և ի վերջո ընկերակցության նախագահը հայտարարեց. «Մեր մեջ կա երկու հոգի, որոնք ուզում են խոսել Աստծո մասին»: Հուզված ոտքի կանգնեցի և սկսեցի նրանց պատմել Աստծո սիրո մասին: Բոլորը լռեցին, մթնոլորտը հանդարտվեց, և ես գրավեցի բոլորի ուշադրությունը: Հետո սկսվեց աշխույժ հարցուպատասխանը: Այնուհետև սկսեցինք Աստվածաշունչը ուսումնասիրել, ինչի շնորհիվ հետագա տարիներին նրանցից շատերն ընդունեցին Հիսուսի փրկություն կոչը: Ղուկասի 10-ը պատմում է Հիսուսի այն աշակերտների մասին, որոնք իրենց առաքելությունից վերադառնալով՝ պատմում են արձանագրած հաջողությունների մասին: Նրանցից շատերը միացել էին Աստծո թագավորությանը և չար ոգիներին փախցնելով՝ բուժում էին մարդկանց: Նրանք ուրախ էին ու հպարտ: Հիսուսը նրանց ասաց. «Տեսնում էի սատանային, որ երկնքից կայծակի պես վայր էր ընկնում» (Հմ.18): Հետո զգուշացրեց. «Սակայն նրա համար մի՛ ուրախացեք, որ ոգիները ձեզ հնազանդվում են, բայց առավել ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում (Հմ.20): Մենք հրճվում ենք՝ հաջողություն տեսնելով: Եվ հուսահատվում ենք, երբ թվում է՝ ձախողում ենք: Շարունակենք անել այն, ինչի համար Աստված կանչել է մեզ: Մնացածը թողնենք իրեն: Նա իր գրքում ունի՛ քո անունը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, երբ ինձ հաղթանակ ես տալիս թշնամիներիս դեմ: Սակայն օգնիր, որ զորաման ընկնելիս: Երախտապարտ եմ, որ Քո ընտանիքի մեջ եմ: Ամեն:

Քաջալերվիր, եթե անունդ գրված է Աստծո սրտում և շարունակիր քո գործը: Մի՛ մտահոգվիր, որ ամեն ինչ լավ չէ:

Յիշիր այն ամբողջ ճանապարհը, որով Տերը քեզ առաջնորդեց անապատի միջով: (Բ. Օր. 8.2)

## **ՄԱՐԴԻԿ ՄՈՌԱՆՈՒՄ ԵՆ**

**Մ**ի կին բողոքում է եկեղեցու Հովվին, որ նրա քարոզների մեջ կրկնություններ հաճախ են լինում: Հովվիլը պատասխանում է, որ այդպես է վարվում, որովհետև մարդիկ մոռանում են:

Իսկ մոռանալու պատճառները շատ են. կամ շատ ժամանակ է անցնում, կամ շատ զբաղված ենք լինում, կամ էլ տարիքի պատճառով ենք մոռանում: Կարող ենք մոռանալ մարդկանց անունները, դաղտնաբառերը, նույնիսկ, թե որտեղ ենք կայանել մեր ավտոմեքենան: Ամուսինս կատակում է.«Այնքան բան կա հիշելու, որ անհնար է տեղավորել ուղեղում: Պետք է մի բան ջնջեմ, որպեսզի կարողանամ նորը մտապահել»:

Քարոզիչը ճիշտ էր: Մարդիկ մոռանում են: Հաճախ է հիշեցումների կարիք լինում, թե Աստված ինչեր է արել մեզ համար: Իսրայելցիները նույնպես մոռանալու հակում ունեին: Նույնիսկ իրենց տեսած բազմաթիվ հրաշքներից հետո էլ նրանց հիշեցնել էր պետք, որ Աստված հոգում է իրենց բոլոր կարիքները: Բ. Օրինաց 8-ում Աստված Իսրայելի ժողովրդին հիշեցնում է, թե Ինքն է արտոնել, որ նրանք սովի մատնվեն անապատում, բայց ամեն օր տվել է նրանց հիանալի մի ուտելիք՝ մանանա: Տվել է չհնացող հագուստ: Առաջնորդել է նրանց օձերի ու կարիճների անապատում և ջուր է տվել ապառաժից: Նրանք խոնարհություն սովորեցին մինչև հասկացան, թե որքան կախյալ էին Աստծո հոգատարությունից ու նախատեսությունից (Հմ.2-4,15-18):

«Աստծո ողորմությունը հավերժ է, նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ» (Սաղմ. 99.5): Երբ սկսում ենք շատ մոռանալ, հիշենք այն ձևերը, որոնցով Աստված պատասխանել է մեր աղոթքներին՝ հիշեցնելով Իր բարության ու հավատարմության խոստման մասին:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ, որ միշտ հավատարիմ ես եղել: Օգնի՛ր կարողանամ Քեզ վստահել ամեն բանի համար ու բոլոր պարագաներում: Ամեն:

Կարող ես Աստծոն վստահելու դժվարություն ունենալ, բայց հիշիր, թե Նա քեզ որքան է սիրում:

Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք, որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ: (Ա.Պետ. 4.10)

## ԿԱՏԱՐԵՆՔ ՄԵՐ ԴԵՐԸ

**Թ**ոռներս հրավիրվել էին մասնակցելու «Ալիսը հրաշքների աշխարհում» երաժշտական ներկայացմանը, և նրանք երկուսն էլ ուզում էին գլխավոր դերեր կատարել: Մակին ուզում էր Ալիսին մարմնավորել, Քեթին՝ Մաթիլդային: Նրանց երկրորդական դերեր տրվեցին: Բայց քույրերն ուրախ էին, որ գլխավոր դերերը հանձնարարվել են իրենց ընկերներին, և հայտնեցին իրենց հրճվածքը:

Դա մի հիանալի պատկեր է այն մասին, թե ինչպիսին պետք է լինի մեր համագործակցությունը՝ որպես Քրիստոսի մարմնի անդամներ: Ամեն տեղական եկեղեցի ունի տարբեր դերեր, որոնք գլխավոր են նկատվում: Սակայն կարիքը կա նաև հետևողների, որոնք առաջնային չեն համարվում, բայց շատ կարևոր դեր ունեն կատարելիք: Եթե ուրիշներն ստանան մեր երազած դերերը, քաջալերենք նրանց և սպասենք այն դերին, որ Աստված տվել է մեզ: Օգնելը և ուրիշներին քաջալերելը Աստծո հանդեպ մեր սերը ցույց տալու ձևերից մեկն է: Եբրայեցիներին ուղղված նամակի 6.10 - ում ասվում է. «Որովհետև Աստված անիրավ չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սիրո աշխատանքը, որ նրա անվան համար ցույց տվեցիք, որ ծառայում էիք սրբերին և ծառայում եք»: Եվ նրա ձեռքից ստացված որևէ պարգև անկարևոր չէ, քանզի «Ամեն մեկդ ինչ շնորհ որ ընդունել է, այն իրա՛ր մատակարարեցեք, որպես Աստծու պես-պես շնորհների լավ տնտեսներ» (Ա. Պետ.4.10):

Պատկերացրու մի եկեղեցի, որի անդամները հավատարիմ քաջալերողներ են և գործածում են իրենց աստվածատուր պարգևները Իր փառքի համար (Եբր. 6.10):

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ ուրիշ դերերի մասին չմտածեմ ու շարունակեմ ծառայել Քեզ՝ Քո տված պատվերի համաձայն: Տու՛ր ինձ կարողություն, որ իմ քաջալերանքով օգնեմ ուրիշներին: Ամեն:

Աստված ամենքիս տվել է մի կարևոր դեր:  
Քաջալերվենք ու կատարենք այն:

Երանի նրան, ում մեղքերին թողություն տրվեց և ում բոլոր հանցանքները ծածկվեցին: (Սաղմ.31.1)

## **ՆԵՐՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ**

**Մ**եքը հուսահատված էր թմրանյութեր գործածելու և սեռական մեղքի պատճառով: Խաթարվել էին իր համար կարևոր հարաբերությունները, և խիղճը տանջում էր նրան: Այդպես դժբախտ ու ամոթահար՝ նա մի օր անակնկալ հայտնվեց եկեղեցում և ցանկացավ խոսել հոգևոր հովվի հետ: Իր բարդ պատմությունը պատմելով՝ նա հանգստացավ, երբ իմացավ Աստծո ողորմածությունն ու ներման մասին:

Հավատում ենք, որ 31-րդ սաղմոսը Դավիթը գրել է իր գործած մեղքից հետո: Ընդ որում, նա իր մեղքը կրկնապատկել էր՝ նյութելով մի չարագործություն, որի հետևանքով մահացել էր սիրած կնոջ ամուսինը (Բ. Թագ. 11-12): Այդ դեպքը վաղուց անցյալ էր, սակայն արարքների հետևանքները մնացել են: Սաղմոս 31-ի 3-4-ում նկարագրվում է, թե ինչ մեծ պայքար է գնում Դավիթի հոգում, նա տեսնում է իր արարքի տգեղությունն ու տանջվում դրանից: Հանգստություն է գալիս այն ժամանակ, երբ նա իր մեղքերը խոստովանում է Աստծուն և ստանում Նրա ներումը (Հմ.5):

Ահա սա է իսկական ճանապարհը. Աստծո ողորմությունը խնդրել, երբ ասենք կամ անենք բաներ, որոնք ցավ կարող են պատճառել մեզ և ուրիշներին: Մեր մեղքերի պատճառով հանցանքի զգացումը մշտապես չի մնալու: Կա՛ մեկը, որի բազուկները բաց են մեզ ընդունելու, երբ մենք ընդունենք մեր սխալներն ու հանցանքները և խնդրենք իր ներումը: Կարող ենք միանալ երգչախմբին՝ ասելով. «Երանի՛ նրան, ում մեղքերին թողություն տրվեց և ում բոլոր հանցանքները ծածկվեցին» (Հմ.1):

**Աղոթք** - Հայր, ների՛ր ինձ, երբ փորձությունը հաղթի ու տիրի կյանքիս: Օգնի՛ր, որ միշտ Քեզ դիմեն թողության համար ու նաև այլոց ներումը խնդրեմ: Ամեն:

Բոլորս էլ մեղքեր գործել ու գործում ենք: Դիմենք Աստծուն, որ ների մեզ:

Նրանք հեռավոր վայրերում էլ պիտի հիշեն ինձ: Պիտի ապրեն իրենց որդիների հետ և նրանց հետ էլ պիտի վերադառնան: (Ձաք. 10. 9)

## ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ՏՈՒՆ

**Ո**ւալթ Դիքսոնը ընդամենը հինգ օրվա ամուսնացած էր, երբ նրան ուղարկեցին Կորեական պատերազմին մասնակցելու: Մեկ տարի չանցած՝ ռազմի դաշտում գտան նրա վերարկուն, որի գրպաններում տիկնոջից ստացված նամակներն էին: Բանակի ղեկավարութունը երիտասարդ կնոջը հայտնեց, որ նրա ամուսինը զոհվել է պատերազմում: Իրականում, սակայն, Դիքսոնը ողջ էր և հետագա երկուսուկես տարին անցկացրեց գերության մեջ: Նա ամեն ջանք գործադրում էր տուն վերադառնալու համար, նույնիսկ հինգ անգամ փախավ, բայց միշտ բռնվում էր: Վերջապես եկավ բաղձալի օրը, և նա ազատ արձակվեց: Կարո՞ղ եք պատկերացնել տուն վերադառնալու նրա ապրումները: Աստծո ժողովուրդը գիտեր, թե ինչ է նշանակում գերված լինել ու տուն վերադառնալու դժվարություն ունենալ: Աստծո դեմ ապստամբելու պատճառով նրանք արքայազն էին: Ամեն օր փափագում էին ետ դառնալ, բայց չէին կարողանում: Բարեբախտաբար, Աստված խոստացել էր չմոռանալ նրանց՝ ասելով. «Պիտի բնակեցնեմ նրանց, որովհետև ես սիրեցի նրանց» (Հմ.6): Նա իր ժողովրդի ցավին կպատասխանի ոչ թե նրանց հավատարմության համար, այլ իր ողորմածության.«Ես լուր պիտի տամ նրանց, պիտի ընդունեմ նրանց, որովհետև պիտի փրկեմ նրանց ...և պիտի վերադառնան» (Հմ.8-9):

Աքսորված լինելու զգացում կարող ենք ունենալ սխալ որոշումներ կայացնելիս կամ անհաղթահարելի դժվարություններ ունենալիս: Երկու դեպքում էլ Աստված մեզ չի մոռանում: Նա գիտե մեր ցանկությունները և կկանչի մեզ: Արձագանքելով նրան՝ մենք մեզ կգտնենք դեպի Ինքը, այսինքն՝ մեր տուն վերադառնալով:

**Աղոթք** - Հայր, գիտեմ, որ մոտ ես, բայց Քեզանից շատ հեռու եմ զգում: Օգնիր, որ կարողանամ լսել Քեզ: Ինձ տուն վերադարձրու: Ամեն:

Երբ արքայազն լինելու զգացում ունենաս, վստահ եղի՛ր, որ Աստված քեզ հետ է և քեզ տուն կվերադարձնի:

Աստված նրանց կարճ ճանապարհով Փղշտացիների երկրով չառաջնորդեց: (Ել.13.17)

## **ԵՐԿՎՐ ԾԱՆԱՊԱՐՅ**

**Ե**րբ գործընկերները պաշտոնի բարձրացում ունեցան, Բենջամենը մի քիչ նախանձեց: Բայց երբ բարեկամներից մեկը զարմացավ, որ նա դեռ տնօրենի պաշտոն չունի, թեև լիովին արժանի է, Բենջամենը որոշեց ամեն բան թողնել Աստծո Հայեցողությանը: Նա պատասխանեց.«Եթե սա է ինձ համար Աստծո սահմանած ծրագիրը, ես ա՛յս գործս լավ կկատարեմ»:

Մի քանի տարի հետո վերջապես Բենը պաշտոնի բարձրացում ունեցավ: Մինչ այդ իր ունեցած փորձառությունն օգնեց նոր գործն ավելի վստահորեն անելու և շահելու իր ենթակաների հարգանքը: Բենը մտածում էր, որ Աստված իրեն «երկար ճանապարհով էր տանում», որպեսզի ինքը ավելի պատրաստ լիներ նոր պաշտոնին:

Երբ Աստված Իսրայելի ժողովրդին հանեց Եգիպտոսից (Ել. 13. 17-18), երկար ճանապարհ ընտրեց, որովհետև «կարճ ճամփան» լի էր դժվարություններով ու խոչընդոտներով: Աստվածաշնչի մեկնաբանները բացատրում են, որ երկար ճանապարհը ժամանակ է տվել, որ նրանք Ֆիզիկապես, հոգեպես ու մտավորապես զորանան՝ դալիք պատերազմների համար:

Ամենակարճ ճանապարհը միշտ էլ լավագույնը չէ: Երբեմն Աստված թույլ է տալիս, որ մենք երկար ճանապարհն ընտրենք (լինեն դրանք մեր գործերը, կամ այլ ջանքեր), որպեսզի ավելի լավ պատրաստված լինենք սպասվող ճամփորդությանը: Երբ թվում է, թե փոփոխությունները հապաղում են, հարկավոր է Աստծուն վստահել: Նա մեզ կառաջնորդի ու կուղղի:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, գիտես, թե ինչ եմ զգում, երբ որոշ բաներ ուշանում են: Ինձ համբերություն տուր, որ վստահեմ Քեզ ու Քո գերիշխան ծրագրիմ: Ամեն:

Երբ մտածում ես, որ ամեն ինչ դանդաղ է առաջ գնում, վստահի՛ր Աստծուն: Նա քեզանից լավ գիտե:

Այդպես էլ պիտի լինի իմ խոսքը, որ ելնում է իմ բերանից. նա դատարկ չի վերադառնալու: (Ես. 55.11)

## **ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԽՈՍԻ**

**Ա**ստվածաշնչի թարգմանիչներից մեկը՝ Լիլի անունով, տուն վերադառնալիս օգանավակայանում կալանավորվեց: Նրա բջջային հեռախոսը ստուգեցին և երբ դրա վրա գտան Նոր Կտակարանի ձայնային օրինակը, նրան մոտ երկու ժամ հարցաքննեցին: Հետո խնդրեցին, որ իրենց համար թարգմանի մի հատված: Ընտրել էին Մատթ. 7. 1-2 համարները, որտեղ Հիսուսն ասում է. «Մի՛ դատեք, որ չդատվեք: Որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նրանով պիտի դատվեք, ինչ չափով որ չափում եք, նույնով էլ ձեզ են չափելու»: Այս բառերը լսելով իրեն հասկանալի լեզվով՝ պաշտոնյաներից մեկը գունատվեց: Հետո Լիլին ազատ արձակվեց:

Չգիտենք՝ ինչ կատարվեց պաշտոնյայի սրտում, բայց գիտենք, որ «Աստծո բերանից ելած խոսքը» Իր ցանկությունը կկատարի (Ես. 55.11): Եսային այս խոսքերով մարգարեացավ՝ դիմելով աքսորված Աստծո ժողովրդին. «Ինչպես որ անձրևե կամ ձյուն է իջնում երկնքից և կրկին այնտեղ չի վերադառնում, քանի դեռ չի ոռոգել երկիրը, չի ծլեցրել ու պտղաբերել այն, այդպես էլ պիտի լինի իմ խոսքը, որ ելնում է իմ բերանից. նա դատարկ չի վերադառնալու, մինչև որ չկատարի այն, ինչ կամենում եմ ես» (Հմ.10-11):

Այս հատվածը կարդալով՝ մենք կարող ենք ամրապնդել Աստծո հանդեպ մեր վստահությունը: Դիմագրավելով դժվարություններ, ինչպես Լիլիին պատահեց օգանավակայանում, մենք էլ վստահենք Աստծուն, որը միշտ գործում է, եթե նույնիսկ վերջնական արդյունքը չենք տեսնում:

**Աղոթք** - Երկնավոր Զայր, շնորհակալ եմ ինձ հայտնածդ բոլոր բաների համար, որոնք տալիս եմ հույս, խաղաղություն և սեր:

Օգնի՛ր, որ աճեմ Քո հանդեպ ունեցածս սիրո մեջ: Ամեն:

Դժվարություններ ու նեղություններ կունենանք, բայց վստահ լինենք, որ Աստված միշտ գործիում է:

Բայց ես տեսնում եմ կապերից արձակված չորս մարդ, որոնք քայլում են կրակի մեջ: (Դան. 3.92):

### **ԿՐԱԿԻ ՄԵՋ**

**Կ**ատաղի կրակը Իսպանիայի Անդելիլա շրջանում շուրջ 200 քառակուսի կիլոմետր անտառ այրեց: Բայց այդ հսկայական ավերածություն մեջ մոտ 1000 դալար նոճիներ կանգուն մնացին: Իրենց մեջ խոնավություն պահելու կարողությունը փաստորեն փրկեց այդ ծառերին:

Նաբուգոդոնոսոր թագավորի՝ Բաբելոնի վրա իշխանության ժամանակ երիտասարդ բարեկամների մի խումբ փրկվեց թագավորի բարկության բոցերից: Սեդրակը, Միսակն ու Աբեղնագովը մերժեցին պաշտել Նաբուգոդոնոսորի կանգնեցրած արձանը և ասացին. «Մեր Աստվածը, որին մենք պաշտում ենք, երկնքում է, կարող է փրկել մեզ բոլորքված կրակի հնոցից և ազատել մեզ քո ձեռքից» (Դան. 3.17): Թագավորը զայրացավ ու հրամայեց, որ հնոցը սովորականից յոթնապատիկ ավելի վառեն, որպեսզի այդ ըմբոստներն այրվեն (Հմ.19):

Թագավորի հրամանը կատարող կտրիճները հրո ճարակ դարձան, սակայն դիտողները տեսան, որ Սեդրակը, Միսակն ու Աբեղնագովը կրակի մեջ քայլում են «անվնաս»: Հնոցի մեջ ևս մեկը կար, որի «տեսքը Աստծու որդու նման էր» (Հմ.25): Շատ աստվածաբաններ հավատում են, որ նա Հիսուսի նախամարդեղության երևույթն է եղել:

Հիսուսը մեզ հետ է, երբ փորձություններ ենք դիմազրավում: Նույնիսկ ճշումներին տեղի տալու պարագաներում չպետք է վախենալ: Մենք կարող ենք չիմանալ, թե Աստված ինչպես և երբ կօգնի մեզ, սակայն դիտենք, որ Նա մեզ հետ է: Մեզ ուժ է տալիս, որ ինչ «կրակի» մեջ էլ լինենք, հավատարիմ մնանք Իրեն:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, ինձ լցրու՛ Քո Գոգով, որպեսզի կարողանամ դիմանալ ճնշումների: Ուզում եմ Քեզ պատվել՝ հաստատ մնալով: Ամեն:

Նեղության ու ցավի ժամանակ չվհատվե՞ք՝ հաստատ իմանալով, որ Աստված մեզ հետ է նույնիսկ կրակի մեջ:



Հավատն էլ հուսացված բաների հաստատումն ու չերևացող բաների ապացույցն է: (Եբր. 11.1)

## **ՉԿԱ՛ ԱՆՅԱՂԹԱՅԱՐԵԼԻ ԱՐԳԵԼՔ**

**Ո**րպես մեծահասակների առաջնորդ՝ նախաձեռնեցի մի արշավ, որի ընթացքում մասնակիցները պետք է մի շարք խոչընդոտներ հաղթահարեին: Աշակերտներին հանձնարարեցինք անվտանգություն զգեստները հագնել ու մագլցել ութ բարձրություն մի պատ: Մագլցողները հիմնականում քաջալերում էին միմյանց, վստահեցնում, որ պարաններն ու կապերն ամուր են և բարձրանում: Աշակերտներից մեկը միայն, նայելով պատին, ասաց. «Անհնար է, որ ես կարողանամ բարձրանալ»: Մենք նրան հանգստացրինք, վստահեցրինք, որ ամեն ինչ ապահով է, ոգևորեցինք բացականչություններով, և նա հասավ պատի գագաթը:

Դժվարություններ դիմազրավելիս մեզ կարող է թվալ, որ դրանք անհաղթահարելի են, և վախն ու կասկածը պատեն մեզ: Հավատը Աստծո զորություն, բարության ու անփոփոխ հավատարմության հանդեպ վստահության զրահ է ստեղծում: Վստահության հավաստիացումը մղեց Հին Կտակարանի հերոսներին ցույց տալու, թե հավատքն է ամեն բանի հիմքը, Աստծո ծրագրի յուրաքանչյուր մանրամասն իմանալու ուղին (Եբ.11.1-13, 39): Այս համոզմունքով մենք, երբ մենակ ենք մնում, ջանում ենք Աստծուն փնտրել, վստահելով Իրեն: Մենք կարող ենք ճշտել այն միջոցը, որով մոտենում ենք մեր մարտահրավերներին. հանգամանքները քննելով, հավիտենական հեռանկարով, իմանալով, որ մեր փորձությունները ժամանակավոր են (Հմ.13-16): Մեր կյանքի դժվարությունների վրա կենտրոնանալը կարող է խանգարել հավատալու, թե Աստված այդ ամենի միջով մեզ ապահով անցկացնելու է: Բայց երբ գիտենք, որ Նա մեզ հետ է, կկարողանանք մեր կասկածները փարատել հավատքով:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Դու ես Հեղինակն ու Կատարողը մեր հավատքի: Որպեսզի դժվարություններ հաղթահարելիս մեր հավատքի չափը Քո զորությունը լինի, ոչ թե մերը: Ամեն:

Դժվարություններ հաղթահարելը կարող է անհնար թվալ, բայց քաջ լինենք, որովհետև Ինքը մեզ հետ է:

Սիրով ծառայեցեք իրար: (Գաղ. 5.13)

## ՓՈՒՆ ԱՌՆՎԱԾ ԿՈՇԻԿՆԵՐ

**Գ**եյբը միջնակարգ դպրոցի բարձր դասարանցի էր, երբ 2018-ի Կալիֆոռնիայի մեծ հրդեհի պատճառով չկարողացավ մասնակցել վազքի նահանգային մրցումներին: Այդ առիթը կորցնելը նշանակում էր բաց թողնել նաև չեմպիոնական առաջնությունը, որին նա պատրաստվում էր արդեն չորս տարի: Այս հանգամանքը նկատի առնելով՝ նահանգի մարզական ղեկավարությունը Գեյբին հնարավորություն տվեց մենակ վազել դպրոցի վազքուղիում՝ «փողոցի սովորական կոշիկներով», որովհետև վազելու համար նախատեսված հատուկ կոշիկները այրվել էին: Երբ Գեյբը ներկայացավ «մրցումին», զարմացավ՝ տեսնելով իր մրցակիցներին, որոնք եկել ու բերել էին մարզական կոշիկներ ու պատրաստ էին նաև իր հետ վազել, որպեսզի նա կարողանար վազքի նահանգային չափանիշը պահել:

Գեյբի մրցակիցներն այդ պարտավորությունը չունեին: Նրանք կարող էին իրենց ցանկություններով զբաղվել (Գաղ. 5.13) ու նույնիսկ հաղթանակի իրենց շանսերն ավելացնել: Սակայն Պողոս առաքյալը հորդորում է ցուցադրել Հոգու պտուղը մեր կյանքում, «սիրով ծառայենք իրար» ու ցուցաբերենք «բարություն և համբերատարություն» (Հմ.13, 22):

Երբ բնազդով առաջնորդվելու փոխարեն վստահենք Հոգու օգնությունը, կկարողանանք ավելի սիրել մեզ շրջապատողներին:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, իմ բնական ցանկությունն է միայն իմ մասին մտածելը: Օգնիր, որ Քո հանդեպ ունեցածս սիրո շնորհիվ կարողանամ ուրիշներին ծառայել: Ամեն:

Ուրիշների հետ մեր հարաբերություններում ցույց տանք «Հոգու պտուղը» և մեր ընկերոջը սիրենք մեր անձի նման:

Տերը զորությունն է իմ ժողովրդի: (Սաղմ. 27.8)

## **ԵԹԵ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂԱՆԱՅԻՆՔ**

**Ա**լյասկայի լացող մայրին սաստիկ քամիներից սկսեց տա-  
րուբերվել: *Ռեջին սիրում էր այդ ծառը. այն ոչ միայն  
պատսպարում էր շոգ եղանակին, այլև մեկուսանալու հնարա-  
վորություն էր տալիս իր ընտանիքին: Եվ հիմա կատաղի փո-  
թորիկը արմատախիլ է անում ծառը: Ռեջին իր 15 տարեկան  
որդու հետ վազեց, որ ազատի ծառը: Ձեռքերով ու ծառի շուր-  
ջը դրված շրջանակի օգնությամբ նրանք փորձում էին ծառը  
կանգուն պահել, բայց բավարար ուժ չունեին:*

Աստված Դավթի ուժն ու զորությունը եղավ, երբ նա, մեկ  
այլ փոթորկի մեջ, կանչեց Աստծուն (Սաղմ. 27.8): Մի շարք  
մեկնաբաններ ասում են, թե Դավիթն այդ սաղմոսը գրել է մի  
ժամանակ, երբ իր աշխարհն էր քանդվում: Նրա հարազատ որ-  
դին իր դեմ ապստամբելով՝ փորձում էր նրա դահը վերցնել (Բ.  
Թագ.15): Նա շատ տկար ու խոցելի դարձավ, մտածեց, որ  
Աստված չի արձագանքի իրեն, և ինքը կմեռնի (Սաղմ. 28.1):  
Եվ բացականչեց. «Լսի՛ր, Տե՛ր, պաղատանքիս ձայնը, երբ ես  
աղաչեմ քեզ» (Հմ.2): Աստված Դավթին զորություն տվեց, որ  
նա դիմանա ու շարունակի, չնայած նրա և որդու հարաբերու-  
թյունները այդպես էլ չչտկվեցին:

Ինչքա՛ն ենք ուզում կանխել վատ բաները: Եթե միայն կա-  
րողանայինք: Բայց մեր այդ տկարությունների մեջ Աստված  
խոստանում է, որ ինքը կլինի մեր Վեմը, երբ դիմենք իրեն (Հմ.  
1-2): Երբ ուժ չունենք, Նա է մեր հովիվը, որը կբարձրացնի  
մեզ հավիտյան (Հմ.8-9):

**Աղոթք** - Այնպես է թվում, թե միշտ էլ կա մի բան, որի համար  
հավելյալ զորություն է պետք Քեզանից: Օգնի՛ր հիշել, որ  
առանց Քեզ անկարող եմ անել որևէ բան: Ամեն:

Երբ քեզ տկար ու խոցելի զգաս, դիմի՛ր Աստծուն, և Նա  
քեզ կգորացնի:

Եվ հենց ամեն ինչ էլ վնաս եմ համարում իմ Տեր Յիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն ինչից զրկվեցի: (Փիլ. 3.8)

### **ԿԵՂԾ ՎԱՏԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Մ**ի քանի տարի առաջ բժիշկա խիստ հրահանգներ տվեց: Նրա ասածները լուրջ ընդունելով՝ սկսեցի գնալ մարզասրահ, փոխեցի սննդակարգս: Ժամանակի ընթացքում և՛ նիհարեցի, և՛ խղիւստերինս պակասեց, իսկ ինքնավստահութիւնս ավերացավ:

Բայց շուտով նկատեցի, որ սկսել եմ քննադատաբար նայել այլ սննդակարգերի ու մեթոդների, թերագնահատել դրանք: Դա կարող է մարդկային բնածին հակում թվալ, երբ իրեն արդարացնելու համար դիմացինին թերագնահատում են կամ ստորացնում:

Պողոսը Փիլիպպեի եկեղեցու հավատացյալներին դիմեց, երբ նրանք սկսեցին նման բաներ անել: Ոմանք իրենց ինքնավստահութիւնը կիրառեցին կրոնական կամ մշակութային կենցաղում՝ հայտարարելով, թե իրենք պարծենալու ավելի շատ պատճառներ ունեն. «Եթե մեկ ուրիշը կարծի, թե մարմնով վստահ է, առավել ևս ես» (Հմ.3.4): Բայց Պողոսը գիտեր իր ինչ ցեղից լինելը, և իր արածները «աղբ» համարեց՝ համեմատելով այն «Քրիստոսին ճանաչելու» (Հմ.8) հետ: Միայն Հիսուսն է մեզ սիրում, ինչպես որ ենք, ազատում է մեզ և տալիս ուժ, որ ավելի նմանվենք Իրեն: Շահելու կամ հաշիվ պահելու կարիք չկա:

Ընդհանրապես պարծենալը լավ բան չէ, կեղծ վստահությամբ կամ ունակութիւններով պարծենալն ավելի ողբերգական է: Ավետարանը հորդորում է մեզ հրաժարվել անտեղի ինքնավստահութիւնից, հաղորդակցվել Փրկչի հետ, որը սիրում է մեզ և իր կյանքը տվեց մեզ համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ Քո սիրո համար: Կողքի եմ դնում հաշիվ պահելու արժեւորմանս, որովհետև դրանք սխալ հիմքերի վրա են: Ամեն:

Փոխանակ մեր ինքնավստահությամբ պարծենալու՝ վստահենք Աստծո շնորհքից:

Ես եմ Բարի հովիվը, և ես ճանաչում եմ իմ ոչխարներին, ու նրանք էլ ճանաչում են ինձ: Ինչպես որ Յայրն է ինձ ճանաչում, ես էլ Յորն եմ ճանաչում և իմ անձը դնում եմ ոչխարների համար: (Յոզի. 10.14-15)

### **ՔԱՋԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ձ**ոն Հարփերը պատկերացում չունեն, թե ինչ էր պատահելու, երբ վեց տարեկան դստեր հետ Տիտանիկ նավը բարձրացավ: Բայց մի բան հաստատ գիտեր. նա սիրում էր Հիսուսին և ուզում էր, որ ուրիշներն էլ սիրեին: Նոր էր նավը խփվել սառցաբեկորին և ջուրը ներս լցվել, երբ Ձոնը իր փոքրիկին տեղավորեց փրկարար նավակի մեջ ու զնաց հնարավորինս շատ մարդկանց ազատելու այդ քաոսային վիճակից: Նա բաժանում էր փրկաբաճկոններ ու աղաղակում. «Թույլ տվեք, որ նախ կանայք ու մանուկները նստեն նավակները»: Մինչև վերջին շունչը Հարփերը իր շուրջը գտնվողներին պատմում էր Հիսուսի մասին: Նա գիտակցաբար տվեց կյանքը, որպեսզի ուրիշներն ապրեն:

Երկու հազար տարի առաջ մեկ ուրիշն էլ իր կյանքը ընծայեց, որպեսզի ես և դու ապրենք ոչ միայն այս, այլև հավիտենական կյանքում: Հիսուսը մի օր հանկարծ չարթնացավ ու որոշեց մարդկության մեղքի պարտքը վճարել: Դա իր առաքելությունն էր: Երբ նա խոսում էր հրեա կրոնական առաջնորդների հետ, բազմիցս կրկնեց. «Ես իմ կյանքն եմ դնում» (Հովհ.10,11,15,17,18): Նա այդ բառերն ուղղակի չասաց, այլ ապրեց ու ցույց տվեց իրականում՝ սոսկալի տանջանքներով մեռնելով խաչի վրա: Նա եկավ, որպեսզի փարիսեցիները, Ձոն Հարփերը և մենք «կյանք ունենանք և էլ ավելին ունենանք» (Հմ.10) :

**Աղոթք** - Յիսու՛ս, բառեր չկան շնորհակալություն հայտնելու քեզ՝ Քո ցուցաբերած սիրո մեծագույն դրսևորման համար: Շնորհակալ եմ, որ Քո կյանքը տվեցիր, որպեսզի ե՛ս ապրեմ: Օգնի՛ր, որ կարողանամ Քո սերը ուրիշներին ցույց տալ: Ամեն:

Յիսուսը քեզ սիրում է մեծ սիրով: Դու էլ սիրի՛ր քեզ շրջապատողներից:

Թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի: (Եփ. 4.26)

## **ՅԵՌԱՆԱԼ ՎԵՃԵՐԻՑ**

Նուանդացի գիտնականի շիրմի մոտ արտասանած դամբանականում Ալբերտ Էյնշտեյնը չհիշեց իրենց գիտական տարածայնությունների մասին: Ընդհակառակը՝ նա ընդգծեց սիրելի բնագետ Հենզերիկ Լորենցի «անսահման ազնվությունը», նշելով. «Բոլորը ուրախությունամբ էին հետևում իրեն, որովհետև զգում էին, որ նա բոլորովին չի իշխում, այլ միշտ պատրաստ է օգտակար լինել»:

Լորենցը գիտնականներին հորդորում էր կողքի դնել քաղաքական նախապաշարումներն ու միասին աշխատել, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Եվ իր Նոբելյան մրցանակակիր բարեկամի մասին Էյնշտեյնն ասաց. «Նույնիսկ պատերազմի ավարտից առաջ նա իրեն տրամադրել էր հաշտության գործին»: Հաշտության համար գործելը եկեղեցու յուրաքանչյուր անդամի նպատակը պիտի լինի: Ճիշտ է, վեճերն անխուսափելի են: Սակայն հարցերը խաղաղությամբ լուծելու գործում մենք մեր բաժինն ենք անելու: Պողոսը գրում է. «Թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի» (Եփ. 4.26): Միասին աճելու համար առաքյալը խրատում է. «Ձեր բերանից ոչ մի վատ խոսք դուրս չգա, միայն այն, որ բարի է, հավատի շինության համար պիտանի, որ շնորհ տա լսողներին» (Հմ.29):

Եվ վերջապես Պողոսն ասում է. «Ամեն դառնություն, բարկություն, սրտմտություն, աղաղակ և հայհոյություն թող վերցվի ձեզանից ամեն չարության հետ: Իրար հետ քաղցր եղեք, գթած՝ իրար ներելով, ինչպես որ Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց» (Հմ.31-32): Հնարավորության դեպքում վեճերից հրաժարվելը օգնում է Աստծո եկեղեցու շինությանը: Ու այդ անելով՝ մենք պատվում ենք Իրեն:

**Աղոթք** - Սիրո՞ղ Յայր, երբ վեճերի մեջ լինեմ, հիշեցրո՛ւ ինձ, որ իմ բարկության մասին Քեզ հայտնեմ: Ամեն:

Վեճեր ու տարակարծություններ միշտ կլինեն, բայց Աստծո շնորհքով կարելի է դրանք հաղթահարել:

Եվ արդարության պտուղը խաղաղությամբ սերմանվում է նրանց համար, ովքեր խաղաղություն են անում: (Քաղ. 3.18)

### **ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

**1** 914 թվականին, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, բրիտանացի պետական գործիչ Էդվարդ Գրեյը հայտարարեց. «Ողջ Եվրոպայի լուսերը կմարեն, մեր կյանքում այլևս դրանք վառված չենք տեսնի»: Նա ճիշտ էր: Այդ պատերազմի պատճառով շուրջ 20 մլն մարդ սպանվեց, 21 միլիոնն էլ վիրավորվեց: Թեև ոչ այդ աստիճան, բայց ավերածություններ պատահում են նաև մեր անձնական կյանքում: Բախումների մոլթ ծածկոցով կարող են պատվել մեր տունը, աշխատավայրը, եկեղեցին կամ շրջապատը: Այդ է պատճառներից մեկը, որ Աստված մեզ կոչ է անում այս աշխարհում խաղաղություն անողները լինել: Իսկ դրա համար հարկավոր է ապավինել Իր իմաստունությանը: Հակոբոս առաքյալը գրում է. «Վերին իմաստությունը նախ և առաջ սուրբ է, հետո՝ խաղաղարար, հեզ, հլու, ողորմությամբ և բարի պտուղներով լի, անկողմնակալ, անկեղծ: Եվ արդարություն պտուղը խաղաղությամբ սերմանվում է նրանց համար, ովքեր խաղաղություն են անում» (Հաղ. 3.17-18):

Խաղաղություն անողի դերը հական է իր տալիք բերքի համար: Արդարություն բառը նշանակում է «ճիշտ կեցվածք» կամ «ճիշտ հարաբերություն»: Խաղաղություն անողները կարող են հարաբերություններ նորոգել: Զարմանալի չէ, որ Տեր Հիսուսն ասաց. «Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ են կոչվելու» (Մատթ. 5.9):

Իր որդիները, որոնք վստահում են Նրա իմաստունությանը, դառնում են խաղաղության Իր գործիքները և իրենց դերը կատարում, որտեղ որ պետք է:

**Աղոթք** - Չա՛յր, լույսդ թափանցում է խավարի մեջ, և խաղաղությունդ հանդարտեցնում է անենախոռովված սիրտն անգամ: Օգնի՛ր, որ ունենամ Քո իմաստությունն ու խաղաղությունը, որպեսզի կարողանամ այն հասցնել տառապող մարդկանց: Ամեն:

Անձնական բախումներ կլինեն, հետևաբար Աստվածային իմաստության լույսի կարիք կունենանք, որպեսզի Իր խաղաղության գործիքները դառնանք:

Առատածեռն լինեն ու կարոտյալներին հաղորդակից: (Ա.Տիմ. 6.18)

## **ԲԱՅ ՈՒ ՄԵԾԱՅՈՒԿԻ ՍԻՐՏ**

**Վ**իքիի հին ավտոմեքենան վերջնականապես խափանվեց, և նա սկսեց գումար հավաքել, որ նորը գնի: Քրիստը, որ հաճախ էր լինում այն ճաշարանում, որտեղից օգտվում էր նաև Վիքին, մի օր լսեց Վիքիի մտադրություն մասին և որոշեց անպայման օգնել նրան: Նրա որդին վաճառում էր իր օգտագործած մեքենան: Քրիստը գնեց այդ մեքենան, մաքրեց, փայլեցրեց ու տվեց Վիքիին: Վերջինը չափազանց զարմացած ու շնորհակալություններ ասաց. «Նման բան ո՞վ է անում»:

Աստծո խոսքը մեզ հրավիրում է ապրել բաց ձեռքերով, հոժարակամ տալ այն ամենը, ինչը լավագույնն է կարոտյալների համար: Ինչպես Պողոսն էր ասում Տիմոթեոսին. «Ներկա աշխարհիս հարուստներին պատվիրի՛ր, որ...բարիք գործեն, բարի գործերով հարստանան» (Ա.Տիմ.6.17-18): Հարկավոր է ոչ թե պարզապես այստեղ-այնտեղ բարեսիրական գործեր անել, այլ հոժարակամ տալու ոգի մարմնավորել: Մեծահոգությունը պետք է դառնա մեր կենսակերպը. «Առատածեռն լինեն ու կարոտյալներին հաղորդակից» (Հմ.18):

Եթե ապրում ենք բաց ու մեծահոգի սրտով, չպետք է վախենանք, թե նյութական կորուստ կունենանք: Աստվածաշունչն ասում է, թե մեր կարեկից սրտով «Հավիտենական կյանք ձեռք կբերենք» (Հմ.19): Աստվածահաճո ապրելակերպը նշանակում է բաց թողնել մեր ունեցածը և ազատորեն ու հոժարակամ տալ ուրիշներին:

**Աղոթք** - Հայր, ուզում եմ իմ ունեցածից բաժին հանել ուրիշներին և Քեզ նման առատածեռն լինել: Վերափոխի՛ր սիրտս և օգնի՛ր, որ կարողանամ սիրահոժար տալ ուրիշին: Ամեն:

Իր լավագույնը սիրահոժար տալու Աստծո օրինակը թող մեզ պարզևի առատածեռն հոգի:



Լեռ բարձրացավ և ում որ կամեցավ, իր մոտ կանչեց, և նրա մոտ զնացին: (Մարկ. 3.13)

## ՄԻ ՏԵՂ ԻՆՁ ՀԱՄԱՐ

**Զ**ինվորական մի վետերան բավական կոշտ ու կոպիտ խոսակցածև ունեեր: Մի օր նրա բարեկամներից մեկը հետաքրքրվեց նրա հոգևոր հայացքներով: «Աստված ինձ նման մեկի համար տեղ չունի՞», - եղավ նրա պատասխանը:

Հնարավոր է, որ նրա պատասխանը իր կոպիտ լինելու արտահայտությունն էր, բայց և այդ բառերը ճշմարտությունից հեռու չէին: Աստված տեղ է ստեղծում հատկապես կոշտ, կոպիտ, մեղավոր ու դուրս նետված մեկի համար, որպեսզի նա մաս դառնա Իր ժողովրդի և բարգավաճի: Այս բանը հստակ էր Հիսուսի առաքելության սկզբից ի վեր, երբ Նա զարմանալի ձևով ընտրեց իր աշակերտներին: Նախ մի քանի ձկնորսների ընտրեց Գալիլեայի շրջանից, ըստ երուսաղեմցիների՝ «երկրի սխալ կողմից»: Ապա Մատթեոս անունով մի մաքսավորի ընտրեց, որը հայտնի էր իր ազգակիցներին շորթելով: Այնուհետև հրավիրեց «մյուս» Սիմոնին՝ «նախանձահույզին» (Մարկ. 3.18):

Շատ բան չգիտենք այս Սիմոնի մասին, բայց գիտենք նախանձախնդիր մարդկանց: Նրանք ատում են Մատթեոսի նման դավաճաններին, որոնք հարստացել էին հռոմեացիների հետ համագործակցելով: Եվ աստվածային «հեզմանքով» Հիսուսը Սիմոնին ընտրեց Մատթեոսի հետ, նրանց միասին բերեց ու խառնեց Իր խմբին:

Ոչ մեկի մասին մի՛ ասա, թե նա «վատ է» Հիսուսի համար: Ի վերջո Նա ասաց. «Ես չեմ եկել արդարներին ապաշխարություն կոչելու, այլ մեղավորներին» (Ղուկ. 5.32): Նա տեղ ունի կոպիտ մարդկանց, ինչպես նաև ինձ ու քեզ նմանների համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ որևէ մեկի համար, ով հավատում է Հիսուսին, փրկությունը հնարավոր է: Ամեն:

Վստահաբար ճանաչում ես մարդկանց, որոնց մասին մտածում ես, թե նրանք պատրաստ չեն իրենց կյանքը Հիսուսին հանձնել:

Մոտեցիր նրանց և խոսիր Հիսուսի շնորհքի մասին:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՄԵԸ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ | Եգեկիել 20-21 և Հակոբոս 5

Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որ ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Յայրը նրանց կերակրում է: (Մատթ. 6.26)

## ՍՈՎՈՐԵԼ ԶՆԴԿԱՅԱՎԵՐԻՑ

**Լ**եռների գրկում գտնվող մի փոքրիկ հյուղակում հանգստանալիս առիթ ունեցա հիացմունքով դիտել հնդկահավերի լամբի գործողությունները: Ամեն օր նրանք շարքով անցնում էին պատշգամբի առջևով և սկսում կրունկներով փորփրել գետինը՝ ուտելիք գտնելու համար: Մինչ այդ ես նման բան չէի տեսել: Այս տասից ավելի հնդկահավերը լավ էլ պարարտ էին:

Այս թռչուններին դիտելով՝ հիշեցի Հիսուսի այն խոսքերը, որ արձանագրված են Մատթեոս 6.26-ում. «Նայեցե՛ք երկնքի թռչուններին, որ ո՛չ սերմանում են, ո՛չ հնձում և ո՛չ էլ ամբարների մեջ հավաքում, և ձեր երկնավոր Հայրը նրանց կերակրում է: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավ եք»: Հիսուսը անարժեք թվացող թռչունների նախատեսությունը գործածում է մեր հանդեպ Իր հոգատարությունը հիշեցնելու համար: Եթե թռչունի կյանքն է կարևոր նկատվում, ապա որքան ավելի կարևոր է մեր կյանքը: Հիսուսը հակադրում է դրանք մեր ամենօրյա կարիքներին (Հմ.27-31) և այն կյանքին, որի մեջ «նախ Աստծու արքայությունն ու նրա արդարություն՝ լնն են փնտրվում (Հմ.33): Կյանք, որի ընթացքում մենք վստահաբար մեր կարիքները հոգալիս Իր ճոխ նախասիրություններն ենք ստանում: Որովհետև եթե Աստված հոգում է նույնիսկ հնդկահավերի մասին, իմ և քո մասին էլ կհոգա:

**Աղոթք** - Յայր, Քեզ վստահելու ճանապարհին երբեմն վախենում եմ, մտահոգվում, պայքարում: Շնորհակալ եմ Քո հոգատարության համար: Օգնի՛ր՝ հիշել, որ ամեն ինչում կարող եմ Քեզ վստահել: Ամեն:

Մեր կարիքների համար մտահոգություններ ու մտավախություններ կարող ենք ունենալ, սակայն վստահ լինենք, որ Աստված մեզ համար ամեն բան նախատեսել է:

Քանի որ ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի: (Ռոմ. 10.13)

## **ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԵՎ ԱՄԵՆՔԸ**

**Է**լ Սալվադորի մայրաքաղաքի կենտրոնում կանգնեցված է Հիսուսի արձանը: Այն տեղադրված է բանուկ երթևեկու-թյամբ հրապարակում, սակայն այնքան բարձր է, որ տեսանելի է նաև հեռվից: Արձանի անունը՝ «Աշխարհի աստվածային Փր-կիչը», փառաբանում է Նրա գերբնական ուժը:

Կոթողի անվանումը հաստատում է այն, ինչ Աստվածաշունչն է ասում Հիսուսի մասին (Ա.Հովհ. 4. 14): Ինքը Նա է, որ ամեն-քին փրկություն է առաջարկում: Նա անցնում է բոլոր մշակու-թյախն սահմաններն ու ընդունում ցանկացած անկեղծ անձի՝ անկախ տարիքից, ուսումից, ազգությունից, անցյալի մեղքերից կամ սոցիալական վիճակից:

Պողոս առաքյալը ճամփորդում էր հին աշխարհում և մարդ-կանց պատմում Հիսուսի կյանքի, մահվան ու հարության մա-սին: Նա այս բարի լուրով կիսվում է կրոնական ու քաղաքա-կան հեղինակությունների, գինվորականների, հրեաների, հե-թանոսների, կանանց, տղամարդկանց ու մանուկների հետ: Պո-ղոսը բացատրում էր, որ ցանկացած մարդ կարող է Քրիստոսի հետ հարաբերություն սկսել՝ դավանելով, թե «Հիսուս տեր է» ու հավատարիվ, թե Աստված Նրան հարություն տվեց մեռելնե-րից (Հռոմ.10.9): Նա ասաց. «Ամեն ոք, որ նրան հավատա, չի ամաչի...Ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի» (Հմ. 11.13):

Հիսուսը հեռվում գտնվող մի պատկեր չէ, որին պետք է պատվել: Մենք հավատքով պետք է իր հետ անձնական կապ ու-նենանք: Տեսնենք իր տված փրկության արժեքն ու առաջ շարժ-վենք այսօր իր հետ հարաբերություն ունենալու համար:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ բոլորին սիրում ես և հավի-տենական կյանք ես առաջարկում նրանց, ովքեր իրապես ու-զում են Քեզ ճանաչել: Օգնի՛ր, որ կարողանամ Քեզ լավագույնս ներկայացնել աշխարհում: Ամեն:

Մոտենանք Հիսուսին, որովհետև թե՛ մեկը, և թե՛ ամենքը հրավիրված են:

Օրհներգեցե՛ք Տիրոջը, հնչեցրե՛ք նրա անուըը, նրա փառքը տարածեցե՛ք հեթանոսների մեջ, հիշեցե՛ք, որ բարձր է նրա անուըը: (Ես. 12.4)

## **ՄԻՇՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼ**

**1** 7-րդ դարում Մարտին Ռինկարդը շուրջ երեսուն տարի ծառայեց որպես Գերմանիայի Սաքսոնի քաղաքի եկեղեցու հոգևոր հովիվ: Դա պատերազմի ու ժանտախտների ժամանակաշրջան էր: Մի տարի նա նույնիսկ չորս հազարից ավելի հուդարկավորություն կատարեց, որոնց թվում նաև իր կնոջ թաղումը: Պահեր են եղել, երբ դժվար է եղել ընտանիքի համար սնունդ ճարելը: Այդ պայմաններում շատ հեշտ էր հուսահատվելը, բայց նա հաստատ պահեց Աստծո հանդեպ ունեցած հավատքը և շարունակեց շնորհակալ լինել Նրան: Իրականում նրա շնորհակալությունն արտահայտվեց իր գրած «Օրհնենք արդ մեր Աստծուն» երգով, որը պաշտամունքի սիրված երգ դարձավ: Ռինկարդը հետևեց Եսայի մարգարեի օրինակին, որը Աստծո ժողովրդին թելադրեց ամեն պահի շնորհակալ լինել, նույնիսկ այն ժամանակ, երբ Աստված բարկացած լինի իրենց վրա(Ես. 12.1) կամ թշնամիները ճնշեն: Նույնիսկ այդ պահերին նրանք հրավիրված էին Աստծոն փառաբանելու և նրա արարքների մասին բոլոր ազգերին պատմելու (Հմ.4): Մենք կարող ենք շնորհակալ լինել բերքահավաքի ժամանակ, կամ բարեկամների ու ընկերների ներկայությունը վայելելիս: Բայց կարո՞ղ ենք Աստծոն շնորհակալություն հայտնել դժվարին ժամանակներում. նյութական ծանր պայմաններում, մեր մտերիմի հետ բարդ հարաբերություն մեջ և այլն: Եկե՛ք արձագանքենք հովիվ Ռինկարդի՝ սրտերն ու ձայները միացնելու կոչին, փառք տանք ու շնորհակալություն հայտնենք «հավիտենական Աստծոն, որ երկինք ու երկիր պաշտում են Նրան»: Մենք կարող ենք «Օրհնել Տիրոջ անունը, քանզի նա մեծամեծ գործեր կատարեց» (Հմ.5):

**Աղոթք** - Հայր Աստված, շնորհակալ եմ իմ կյանքում Քո արած հիանալի գործի համար: Քո սերն անսահման է, ավելի, քան կարող եմ ներկայացնել: Ամեն:

Դժվարության ու նեղության պահին դառնանք Աստծուն և օրհներգենք Նրան:



Տիրոջը փնտրեցե՛ք ու հզոր կլինեք, միշտ նրա ներկայությունը փնտրեցե՛ք: (Ա.Մնաց. 16.11)

## **ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ**

**Վ**երջերս հանդիպեցի մի խումբ բարեկամների, որոնց խոսակցություններին հետևելիս հասկացա, որ բոլորն էլ ինչ-որ պատերազմ են հաղթահարում: Երկուսի ծնողները քաղցկեղի դեմ են պայքարում, մեկի երեխան ուսելու խնդիր ունեւր, մեկ ուրիշն էլ վիրահատություն էր պատրաստվում: 30-40 տարեկան մարդկանց համար այս ամենը, իրոք շատ էր թվում:

Ա. Մնացորդաց 16-ը նշում է Իսրայելի պատմության կարևոր պահերից մեկը, երբ ուխտի տապանակը Դավիթի քաղաք՝ Երուսաղեմ է բերվում: Սամուելը պատմում է, որ դա տեղի է ունեցել պատերազմների միջակայքում մի խաղաղ ժամանակ (Բ. Թագ. 7.1):

Երբ Աստծո ներկայությունը խորհրդանշող տապանակը տեղը դրվեց, Դավիթը ժողովրդին առաջնորդեց երգելու (Բ. Մնաց. 16. 8-36): Բոլորը միասին երգեցին Տիրոջ հրաշագործ գորություն, խոստումները պահելու ձևերի ու անցյալում նրանց պաշտպանելու մասին (Հմ. 12-22): «Տիրոջը փնտրեցեք ու հզոր կլինեք, միշտ նրա ներկայությունը փնտրեցե՛ք» (Հմ.11): Նրանք ունեին այդպես վարվելու կարիք, որովհետև մոտենում էին պատերազմները:

«Տիրոջը փնտրեցեք ու հզոր կլինեք, միշտ նրա ներկայությունը փնտրեցե՛ք». սա վատ խորհուրդ է, հատկապես երբ ունեք անհանգստություն, ընտանեկան մտահոգություններ և այլ մարտահրավերներ եք զիմազրավում: Աստված ներկա է, նա հզոր է: Նա անցյալում մեզ հսկեց, հիմա էլ նույնը կանի:

**Աղոթք** - Հրաշագործ Աստված, այս պատերազմը հանձնում եմ քեզ: Վստահում եմ քո զորությանն ու խոստումին: Ամեն:

Պատերազմներ ու պայքարներ միշտ էլ կունենանք, բայց կարևոր է Աստծուն ապավինելը:

Իմ անկատարությունները տեսանք քո աչքերը, և այդ բոլորը գրվեցին քո գրքում: (Մաղմ. 138.16)

## **ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՅՈՒՐԱՔԱՆԶՅՈՒՐ ՀՈՒՆԶԸ**

**Մ**այրս, քույրերս ու ես հորս մահճի մոտ սպասեցինք, մինչև որ նրա շնչառությունը սկսեց անկանոն դառնալ ու աստիճանաբար մարել: Մի քանի օր էր մնացել, որ հայրս 89 տարեկան դառնար, երբ նա հոգին ավանդեց: Նրա մահը մի տեսակ դատարկեց մեզ, և մենք հաճախ էինք տարվում քաղցր հուշերով ու հորս հիշատակներով: Նաև հույս ունեինք, որ մի օր պիտի միանանք:

Այդ հույսը գալիս էր այն հավատից, թե հայրս իրեն լավ իմացող ու սիրող Աստծո հետ է: Հորս առաջին շնչի հետ Աստված այդտեղ էր՝ նրան շունչ ու հոգի տալու համար (Ես. 42.5): Եվ այդ առաջին շնչից սկսած, ու նույնիսկ մինչ այդ էլ, Աստված կապ ուներ հորս կյանքի յուրաքանչյուր մանրամասնի հետ, ինչպես որ կապ ունի իմ ու քո կյանքի հետ: Աստված հիանալի ձևավորեց ու «ծածկեց» նրան մոր որովայնում (Մաղմ. 138. 13-14): Ու երբ հայրս վերջին շունչը փչեց, Աստծո Հոգին այդտեղ էր՝ իրեն սիրով բռնելու, տանելու համար, որ իր հետ լինի (Հմ.7-10):

Այս ամենը ճիշտ է Աստծո բոլոր զավակների համար: Աշխարհում մեր ապրած կարճ կյանքի յուրաքանչյուր պահը ծանոթ է Աստծուն(Հմ.1-4): Մենք կարևոր ենք Նրա համար: Մնացող յուրաքանչյուր օրվա հետ և հավիտենական կյանքի կանխատեսումով եկե՛ք միանանք ու իրեն փառաբանենք: «Բոլոր՝ հոգիներ, օրհնեցե՛ք Տիրոջը» (Հմ.150.6):

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ ինձ ստեղծելուդ, շունչ ու հույս տալուդ համար: Օգնի՛ր, որ կյանքի ցավերի ու կորուստների մեջ կարողանամ ապավինել Քեզ: Ամեն:

Աստված քեզ հետ է քո յուրաքանչյուր շնչի հետ: Ուստի փառավորի՛ր Տիրոջը:

Չորությունների Տերն այնպես պիտի անի, որ բոլոր հեթանոսներն այս լեռներում ուրախություն վայելեն: (Ես.25.6)

## **ՔԱՂՅՐԱՑՆԵԼ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ռ**ուսական հարսանիքներում մի իմաստալից սովորություն կա. երբ սեղանապետը խմում է զուլբի կենացը, ներկաները խմում են մի ումպ, ապա բացականչում են. «շօրօօ, շօրօօ», ինչը նշանակում է՝ «դառն է, դառն է»: Հյուրերի այս խոսքի վրա նորապսակները ոտքի կանգնում ու համբուրվում են, որպեսզի խմիչքը քաղցրանա:

Եսային մարգարեանում է, թե աշխարհում եղած ամայություն, կործանումի ու հայհոյանքի դառը խմիչքը (զլ.24) կբացի նոր երկնքի ու նոր երկրի քաղցր հույսի ճամփան (զլ.25): Աստված «այնպես պիտի անի, որ բոլոր հեթանոսներն այս լեռներում ուրախություն վայելեն, զինի խմեն, օծվեն մրուրից մաքրված յուղով եւ հանգչեն այս լեռների վրա» (25.6): Կա նաև դրանից ավելին: «Մահը զորացավ և կուլ տվեց, բայց Աստված բոլորի երեսից արցունքն իսպառ պիտի կտրի, ժողովրդի նախատինքը պիտի վերացնի ամբողջ աշխարհից, քանզի սա Տիրոջ բերանը խոսեց. ինչպես ամպի հովանին հաղթահարում է տապը, այնպես էլ Նա պիտի ընկճի հզորների բազուկները» (Հմ.7-8): Ու ժողովուրդը պիտի ցնծա.«Ահա մեր Տեր Աստվածը, որի վրա հույս էինք դրել մենք, նա փրկեց մեզ, քանզի նա է Տերը, որին սպասում էինք. եկե՛ք ցնծանք և ուրախանանք մեր փրկությունամբ»(Հմ.9):

Մի օր Հիսուսի հետ կլինենք Գառնուկի հարսանեկան խնջույքին: Երբ Նա դիմավորի Իր հարսին (եկեղեցին), Եսայի 25-ի խոստումը կիրականանա ու կյանքը, որ մի ժամանակ դառն էր, կքաղցրանա:

**Աղոթք** - Հայր, երբ ցավի, նեղության կամ մահվան ականատես եմք լինում, մեզ համար դժվար է լինում հավատալը: Սակայն Դու քաղցրացնում ես դառնությունը: Ամեն:

Տիրոջ վերադարձին սպասելիս դիմենք Աստծոն, որ մեր և ուրիշների դառնությունները քաղցրացնի:

Որպես արծաթ և որպես ոսկի, կմաքրի Ղևիի որդիներին եւ կհալեցնի նրանց ոսկու նման և արծաթի պես: Եվ այն ժամանակ արդարությամբ գոհ կմատուցեն Տիրոջը: (Մաղ. 3.3)

## **SAL ՄԵՐ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ**

**Ա**նտուն մարդկանց կացարանի վարիչին հրավիրել էինք Երիտասարդաց խումբ, որպեսզի օգներ մեծ քանակությամբ նվեր ստացած կոշիկները դասավորել: Ամբողջ օրը տեսակավորեցինք, զույգերը գտանք ու դասավորեցինք: Օրվա վերջում այդ կոշիկների կեսից ավելին աղբանոց նետեցինք, որովհետև շատ հին էին և գործածություն չհամար անպիտան:

Իսրայելցիները նույնպես փորձեցին իրենց վնասված բաներից Աստծոն ընծա բերել: Աստված Մաղաքիա մարգարեի միջոցով խոսեց նրանց հետ և հանդիմանեց, որ զոհաբերում էին հիվանդ, կաղ կամ կույր կենդանիներին, երբ ունեին առողջն ու լավը (Մաղ. 1.6-8): Աստված ցույց է տալիս, որ դա Իր համար տհաճ է (Հմ.10), հաստատում է, որ Ինքն արժանի է լավին և անիծում է նրանց, որոնք արատավոր կենդանիներ են նվիրում Աստծուն(Հմ.14): Աստված խոստացավ Փրկչին ուղարկել, որի սերն ու շնորհքը կվերափոխի նրանց սրտերն ու ցանկություն կառաջացնի բերել այնպիսի զոհեր, որոնք հաճելի կլինեն Աստծուն (Հմ.3.1-4):

Երբեմն մենք էլ ենք փորձում մեր ավելցուկից տալ Աստծուն: Թեև փառաբանում ենք Իրեն և միշտ ակնկալում, որ Նա մեզ տա Իր լավագույնը, մենք մեր ունեցածի փշրանքներն ենք նվիրում Նրան: Նկատի առնելով Աստծո բոլոր արածները մեզ համար՝ կարող ենք ուրախանալ, հռչակել Իր արժանի լինելը և տալ մեր ունեցած լավագույնը:

**Աղոթք** - Հոգի՛ Աստված, աղաչում եմ՝ օգնի՛ր ինձ, որ կարողանամ Քեզ տալ առաջին տեղը և իմ ունեցած լավագույնը Քեզ ընծայել: Ամեն:

Երբ Աստված Իր լավագույնը՝ Հիսուսին տվել է մեզ, ինչու՞ մեր լավագույնը Իրեն չտանք:



Յոթն օր ու յոթ գիշեր նստեցին նրա շուրջը: (Յոթ. 2.13)

## **ԿՈՂՔԻՆ ԼԻՆԵԼ**

**Ձ**բոսայգու պատասխանատու Ձենը տեսնելով, որ առևտրի-  
մով տառապող Ռալֆը լաց լինելով ընկավ գետնին, վազեց  
նրան օգնելու: Բայց նա ոչ թե տղային ոտքի հանեց կամ փոր-  
ձեց ուշադրութիւնը շեղել, այլ նստեց կողքին և թույլ տվեց,  
որ շարունակի լաց լինել:

Ձենի այս արարքը մի գեղեցիկ օրինակ է այն մասին, թե  
ինչպես կարելի է մոտենալ տանջվողներին ու տառապողներին:  
Աստվածաշունչը պատմում է Հոբի ցավի մասին, երբ նա  
կորցրեց իր առողջութիւնը, ունեցվածքը և տասը գա-  
վակներին: Հոբի հարազատները, լսելով այդ մասին, գնացին  
ցավակցելու և մխիթարելու նրան (Հմ.11):

Սգավոր Հոբը նստել էր գետնին: Բարեկամները նույնպես  
հասնելուն պես գետնին նստեցին և յոթ օրուգիշեր լուռ մնա-  
ցին, որովհետև տեսան նրա մեծ ցավը:

Հետո, իհարկե, նրանք մխիթարեցին Հոբին, սակայն առաջին  
յոթ անբարբառ օրերը նրա համար քնքուշ ներկայութեան  
պարգև էին:

Հնարավոր է, որ մենք էլ չկարողանանք հասկանալ մարդ-  
կանց ցավը, բայց նրանց սիրել և պարզապես իրենց հետ լինել  
պարտավոր ենք:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ միշտ ինձ հետ ես թե՛ լավ, և թե՛  
վատ օրերին: Օգնիր, որ կարողանամ իմ ներկայության պարզև  
առաջարկել նրանց, ովքեր իմ ճանապարհին են: Ամեն:

Ցավի ու նեղության պահին ոմանք մեզ հետ են լինում: Մենք էլ  
պատրաստ լինենք ուրիշների հետ լինել, երբ նրանք մեր կարիքը  
ունենան:

Կույսը պիտի հղիանա ու որդի ծնի: (Ես. 7.14)

## **ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ս**ուրբ Ծննդյան սիրված երգերից է Ֆիլիպ Բրուքսի «Փոքրիկ քաղաք Բեթղեհեմ»-ը, որի առաջին տողերում ասվում է.«Այսպես տալիս է մարդու սրտին մեր Տերն հավիտենական, անպատմելի սիրով անհուն՝ օրհնություններ երկնային»: Այս բառերը Սուրբ Ծնունդի էությունն են: Հիսուսն եկավ մեր կոտրված աշխարհը, որպեսզի մեզ ազատի մեր մեղքերից և բոլոր նրանց, ովքեր հավատում են Իրեն, տա Աստծո հետ մի նոր հարաբերություն:

Երգը գրելուց տասնյակ տարիներ անց Բրուքսն իր բարեկամին գրած նամակում հուզիչ կերպով նկարագրում է այդ հարաբերության արդյունքն իր կյանքում. «Այն չափազանց անձնական է դարձել ինձ համար: Նա միշտ այստեղ է: Նա ինձ է լավ ճանաչում, ես՝ Իրեն: Եվ սրանք պարզապես խոսքեր չեն: Սա աշխարհի ամենաճշմարիտ բանն է, որն ամեն օր ավելի իրական է դառնում: Ու արժե մտածել, թե Աստծո ներկայության գիտակցումը ինչպես կփոխի մեր կյանքը»:

Բրուքսի այս վստահությունը իր կյանքում Աստծո ներկայության մասին արտացոլվում է Եսայու մարգարեության մեջ. «Կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմմանուել» (Ես. 7.14): Իսկ Մատթեոսի Ավետարանը տալիս է երբայերեն Էմմանուել անվան բացատրությունը. «Աստված մեզ հետ» (1.23):

Աստված մեզ մոտեցավ Հիսուսի միջոցով, որպեսզի մենք կարողանանք անձամբ ճանաչել Իրեն և հավիտյան Իր հետ լինել: Նրա սիրո ներկայությունը մեծագույն պարզե է մեզ համար:

**Աղոթք** -Սիրո ու շնորհքի Աստված, շնորհակալ եմ, որ Քո մարդեղությանը, խաչի վրա մահով ու հարությանը Քո անձր տալիս ես ինձ: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ այսօր և միշտ ապրեմ Քեզ համար: Ամեն:

Աստված սիրում է քեզ և ուզում է քեզ հետ լինել:  
Ուստի մոտեցի՛ր Իրեն:

Իմ Սողոմոն որդուն բարի սիրտ տուր, որ պահի-պահպանի քո պատվիրանները, քո վկայություններն ու քո օրենքները: (Ա.Մնաց. 29.19)

## **ԱՂՈԹՔԻ ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՅՈՒՄԸ**

**Ա**մերիկացի հեղինակ-կատարող Քրիս Սթեփլթոնի «Հայրս այլևս չի աղոթում» երգն այն մասին է, որ հայրը ոչ թե հոգնել է որդու համար աղոթելուց, կամ հիասթափվել, այլ մահացել է: Ու երգիչը նկարագրում է, որ իր հայրն այսուհետ Հիսուսի հետ հաղորդակցվում է ոչ թե աղոթքով, ինչպես ամբողջ կյանքում է եղել, այլ քայլում ու խոսում է նրա հետ երես առ երես:

Այս պատկերը մեզ հիշեցնում է որդու համար արված սուրբգրային մի աղոթք: Դավիթը զգալով, որ իր վախճանը մոտենում է, իր որդի Սողոմոնի համար պատրաստություններ արեց, որպեսզի նա իրենից հետո բարձրանա Իսրայելի գահը:

Սողոմոնին օծելու համար հավաքեց ժողովրդին և առաջնորդեց նրան աղոթելու, ինչպես հաճախ էր արել: Նա վերհիշեց Աստծո հավատարմությունը Իսրայելի հանդեպ, աղոթեց ժողովրդի համար, որպեսզի հավատարիմ մնա Աստծուն: Այնուհետև մի աղոթք արեց հատուկ իր որդու համար՝ Աստծուց խնդրելով. «Իմ Սողոմոն որդուն բարի սիրտ տուր, որ պահի-պահպանի քո պատվիրանները, քո վկայություններն ու քո օրենքները (Ա.Մնաց. 29.19):»

Մենք էլ ունենք Աստծո ժողովրդի համար հավատարմորեն աղոթելու հիանալի առաձնաչնորհումը: Մեր հավատարմության օրինակը կարող է այնպիսի անջնջելի ազդեցություն ունենալ, որ պահպանվի նույնիսկ մեր հեռանալուց հետո: Ինչպես Դավիթի աղոթքներին ի պատասխան՝ Աստված շարունակեց գործել Սողոմոնի ու Իսրայելի համար նաև թագավորի մահից հետո, այնպես էլ մեր աղոթքների ազդեցությունը կմնա մեր հեռանալուց հետո էլ:

**Աղոթք** - երկնավոր Հայր, իմ սիրելիներին բերում եմ Քո առաջ և խնդրում եմ իրականացնես Քո ծրագրերը նրանց կյանքում:  
Ամեն:

Ինչպես մեզ համար ուրիշների մատուցած աղոթքներն են կատարում իրենց գործը, այնպես էլ մենք մեր աղոթքներով քաջալերենք ուրիշներին:

խոսքով չսիրենք և ոչ էլ լեզվով, այլ գործով ու ճշմարտությամբ:  
(Ա. Յովհ. 3.18)

## ԿԱՐԵԿԻՑ ՍԵՐ

Հեղին ու Ձեֆը տաք եղանակներին արտասահմանում աշխատելուց հետո ձմեռնամուտին վերադարձան Հայրենի Միջիգան: Առաջին անգամ ընտանիքի տասը զավակները միասին վայելելու էին ձմռան բնական գեղեցկությունը:

Բայց Միջիգանի կլիման սառն է, անհրաժեշտ էր ունենալ տաք վերարկուներ ու կոշիկներ: Իսկ դա բավական ծախսատար էր: Սակայն Աստված Հայթայթեց նրանց պետք եղածը: Նախ հարևաններից մեկը բերեց հարմար կոշիկներ ու տաք տաբատներ: Այնուհետև բարեկամներից մեկը եկեղեցու անդամներին խնդրեց հավաքել անհրաժեշտ հագուստ ու կոշիկ, և ձյունը գալու ժամանակ բազմանդամ ընտանիքն արդեն ուներ ամեն ինչ:

Աստծուն ծառայելու ձևերից մեկը կարիքավորներին օգնելն է: Ա. Հովհ. 3.16-18-ում քաջալերվում է մեր ունեցած ճոխություններից բաժին հանել ուրիշներին: Այդ ծառայությունն օգնում է նմանվել Հիսուսին և սկսել սիրել մարդկանց ու նրանց տեսնել այնպես, ինչպես Ինքն է տեսնում:

Աստված հաճախ է Իր զավակներին օգտագործում ուրիշների կարիքները հոգալու և աղոթքներին պատասխանելու համար: Երբ ծառայում ենք ուրիշներին, մեր սրտերը քաջալերանք են ստանում, որն էլ մենք փոխանցում ենք նրանց: Որպես արդյունք մեր արածի՝ մեր հավատքը կաճի ու Աստված մեզ կգինի, որպեսզի նոր ձևով ծառայենք (Հմ.18):

**Աղոթք** - Հայր, սիրտս լցրու՛ կամեցողությամբ, որպեսզի պատրաստ լինեմ օգնելու կարիքավորին: Օգնի՛ր, որ ուրախությամբ տամ ու շնորհակալությամբ Քեզ ծառայեմ: Ամեն:

Տեսնելով մեր շուրջը եղողների բազմաթիվ կարիքները՝ պատրաստ լինենք սիրով օժանդակել նրանց:



Բայց մեծ շահ է իսկական աստվածապաշտությունը՝ գոհունակությամբ հետ: (Ա. Տիմ. 6.6)

## **ԾՆՆԴՅԱՆ ՆՎԵՐՆԵՐԸ ԲԱԿԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻՑ**

**Մ**ի կին, անդրադառնալով, որ իր ընտանիքի անդամներին Սուրբ Ծննդյան նվերներ գնելու համար շատ ծախսեր է անում, որոշեց մեկ այլ բան փորձել: Արձակուրդից դեռ ամիսներ առաջ սկսեց գնալ բաղային վաճառակետեր՝ գտնելու օգտագործած, բայց լավ և էժան նվերներ: Այսպիսով նա կարողացավ ավելի քիչ գումարով ավելի շատ նվերներ գնել: Եվ Ծննդյան տոնի նախօրյակին զավակները մեծ հաճույքով բացեցին բոլոր նվերները: Հաջորդ օրը առավոտյան նրանք էլի նվերներ գտան, որովհետև մայրը, մեղավոր զգալով նոր նվերներ չգնելու համար, էլի նվերներ էր պատրաստել: Բայց երեխաները հոգնեցին այդքան փաթեթները բանալուց և գանգատվեցին, որ մայրն իրենց տվել է սովորականից ավելի նվերներ: Այդպիսի արտահայտությունը բնորոշ է էր Սուրբ Ծննդյան առավոտին:

Աստված մեզ օրհնել է շատ բաներով, բայց մենք կարծես թե միշտ ավելին ենք ուզում ունենալ. ավելի շքեղ տուն, ավելի լավ մեքենա, ավելի մեծ բանկային հաշիվ: Պողոսը քաջալերեց Տիմոթեոսին, որ իր ծառայած եկեղեցուն հիշեցնի, թե.«Այս աշխարհ ոչինչ չենք բերել, ու հայտնի է, որ ոչինչ էլ չենք կարող դուրս տանել: Բայց եթե ուտելիք և հագուստ ունենք, դրանցով բավարարվենք» (Ա. Տիմ. 6. 7-8):

Աստված մեզ շունչ ու կյանք տալուց բացի՝ նաև անհրաժեշտ բաներ է տվել: Որքա՜ն լավ կլինի գոհանալ իր տված պարգևներով և ասել, որ պետք եղածից շատ ավելին է տվել, որ դրա կարիքը չունեն: Նաև շեշտել, որ. «Բայց մեծ շահ է իսկական աստվածապաշտությունը՝ գոհունակության հետ» (Հմ. 6.6):

**Աղոթք** - Հայր, մեզ շատ բաներով ես օրհնել: Սովորեցրու՛, որ ամեն օր շնորհակալություն հայտնենք Քեզ: Ամեն:

Աստված շատ բարիքներ է տվել մեզ, ուստի պետք է գոհանալ դրանցով:

Սրանով ենք ճանաչում, որ Աստծու որդիներին սիրում ենք, երբ սիրում ենք Աստծուն և նրա պատվիրանները պահում: (Ա. Յովհ. 5.2)

### **ԲԵԹԹԻ ՅՈՐԱՔՐՈՋ ՁԵՎԸ**

**Բ**եթթի հորաքրոջս՝ մեր տուն այցելությունները իսկական տոն էին: Բացի հետը բերած խաղալիքներից՝ գնալիս էլ նա մի թղթադրամ էր տալիս ինձ: Իսկ երբ ես էի իր տանը մնում, սառնարանը լցնում էր պաղպաղակով, բանջարեղենով ճաշ էլ էր պատրաստում և թույլ էր տալիս, որ ուշ քնեմ: Հորաքույրս հիանալի մարդ էր, օրինակ էր աստվածային ազնվություն ու առատաձեռնություն: Բայց առողջ մեծանալու համար միայն հորաքույր Բեթթի ձեռք բավարար էր, ես ավելիին էի ձգտում: Ինձ պետք էր ծնողներիս վարվելաձևը, որոնք ավելի մեծ ակնկալիքներ ունեին ինձնից և ուզում էին ինձ տեսնել ավելի պատասխանատու դարձած: Աստված ինձնից շատ ավելին է ակնկալում, քան հորաքույրս: Երբ նա մեզ ողորդում է իր կարեկից ու անվարան սիրով, եթե նույնիսկ մենք դիմադրենք ու փախչենք, նա սպասում է մի բան: Երբ նա Իսրայելի ժողովրդին ինչպես ապրելու ցուցումներ էր տալիս, նրանց հանձնարարեց տասը պատվիրանները և ոչ թե պարզապես տասը թելադրություններ (Ել. 20.1-17): Աստված մեզանից իր հստակ սպասելիքներն է հայտնում. պետք է «սիրենք Աստծուն և նրա պատվիրանները պահենք» (Ա. Հովհ. 5.2): Բարեբախտաբար, «Նրա պատվիրանները ծանր չեն» (Հմ.3),- ասում է Հովհաննեսը: Սուրբ Հոգու զորությամբ կարող ենք դրանցով առաջնորդվել՝ մինչ վայելում ենք Աստծո սերն ու ցնծությունը: Մեր հանդեպ իր սերն անսահման է: Իսկ բավարար է արդյոք իր հանդեպ մեր փոխադարձ սերը: Այս հարցի պատասխանն իմանալու համար մեզ կօգնի Աստվածաշնչի հարցը. հնազանդվում ենք իր պատվիրաններին այնպես, ինչպես մեզ առաջնորդում է Հոգին:

**Աղոթք** - Յայր, սիրում եմ Քեզ, բայց շատ դժվար է սիրել ու հնազանդվել: Օգնիր, որ կարողանամ տեսնել ճշմարտությունը և սիրեմ Քեզ իմ արածներով: Ամեն:

Կարող է դժվար լինել Աստծուն հնազանդվելը: Սակայն Աստծուն սիրելով կկարողանանք նոր ստեղծված լինել:

Օգնիր ինձ, Տե՛ր Աստված իմ: (Սաղմ. 108.26)

## **ԿՈՏՐՎԱԾԻ ԱՂՈԹՔԸ**

«Նրկնքում բնակվող սիրելի՛ Հայր, ես աղոթող չեմ, բայց եթե Դու վերևում ես ու լսում ես ինձ, ճանապարհ ցույց տուր»: Այս աղոթքն էր շնչում «Կյանքը հիասքանչ է» ֆիլմի հուսահատ հերոս Ջորջ Բեյլին, որին մարմնավորում էր Ջեյմս Ստյուարտը: Այդ կադրում նա արտասվում էր: Դա սցենարով նախատեսված չէր, բայց Ստյուարտը այդ բառերն ասելիս «զգացել էր այն մարդկանց միայնությունն ու հուսահատությունը, որոնք անելանելի վիճակում են»: Եվ դրանից նա ընկճվել էր, կոտրվել:

Բեյլիի աղոթքը օգնություն ճիչ էր, ճիշտ այնպես, ինչպես Դավիթինը՝ Սաղմոս 108-ում: Նա «աղքատ էր ու տնանկ» և «սիրտը խռովված էր իր ներսում» (Հմ.22) «Ստվերի պես երկարելով սպառվեցի և թափ տրվեցի ինչպես մարախ, ծնկներս թուլացան ծոմապահությունից, և գունաթափվեց մարմինս յուզի պակասից, ես նրանց նախատինքը դարձա, տեսան ինձ ու շարժեցին գլուխներն իրենց» (Հմ.23-25): Այս ծայրահեղ ընկճված վիճակում, գնալու այլ տեղ չունենալով, նա դիմեց Գերիշխան Տիրոջը՝ աղաղակելով. «Օգնի՛ր ինձ, Տե՛ր Աստված իմ, և փրկի՛ր ինձ քո ողորմությամբ» (Հմ.26):

Մեր կյանքում էլ լինում են ժամանակներ, երբ այնքան ենք կոտրվում ու հուսահատվում, որ դժվարանում ենք որոշակի բան խնդրել մեր աղոթքով: Պետք է վստահ լինել, որ մեզ սիրող Աստվածը մեր պարզ աղոթքին կպատասխանի մեզ օգնելով:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, երբեմն օրերը դժվար են լինում, և ես հուսահատվում եմ: Այդ վիճակում սիրտս դարձրու՛ դեպի Քեզ, ուժ տու՛ր ինձ, որ Քեզանից զորություն խնդրեմ: Ամեն:

Կոտրվածության զգացում կունենանք, բայց կարևոր է հավատալ Աստծուն ու դիմել Նրան:

Դրա համար իրար քաջալերեցե՛ք և իրար շինություն սվեք, ինչպես որ անում էլ եք: (Ա. Թես. 5.11):

## **ՆՈՒՅՆ ԽՍՐՈՒՄ**

«Ֆիլադելֆիայի արծիվներ» ֆուտբոլային թիմի հետնապահ Կարսոն Վենտսը վնասվածք էր ստացել ու բուժվում էր: Նրան փոխարինում էր Նիք Ֆոլզը: Երբ Կարսոնը վերադարձավ, Նիքը սիրով կրկին նստեց պահեստայինների նստարանին: Թեև նրանք երկուսն էլ նույն դիրքում էին խաղում և փաստորեն մրցակիցներ էին, բայց պայմանավորվել էին միմյանց աջակցել՝ հանուն իրենց թիմի: Թղթակիցներից մեկը այս մարզիկների կեցվածքն անվանել էր «առանձնահատուկ հարաբերություն, որը հիմնված էր նրանց քրիստոնեական հավատի վրա»: Նրանք իրենց վարքագծով պատվում էին Աստծուն՝ պատկանելով ոչ միայն նույն թիմին, այլև լինելով հավատակիցներ ու ներկայացնելով Իրեն:

Պողոս առաքյալը հավատացյալներին հիշեցնում է ապրել որպես «լույսի որդիներ», որոնք «զգաստ Հիսուսի վերադարձին են սպասում» (Ա. Թես. 5.5-6): Վստահ լինելով Քրիստոսի տված փրկության վրա՝ մենք կարող ենք թոթափել նախանձի, անվստահության ու վախի մթնոլորտը և «քաջալերել իրար ու շինություն տալ» (Հմ.11): Հարգենք մեր հոգևոր առաջնորդներին, որոնք պատվում են Աստծուն ու «ապրում խաղաղությանմ», «խրատենք անկարգներին, քաջալերենք երկչոտներին, օգնակա՛ն լինենք տկարներին, համբերատա՛ր լինենք բոլորի հանդեպ» (Հմ.14):

Նույն խմբում ծառայելով՝ կարող ենք ուշադրություն դարձնել Պողոսի տված պատվիրանին. «Միշտ ուրախ եղեք: Անդադար աղոթք արեք: Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով» (Հմ.16-18):

**Աղոթք** - Տե՛ր Հիսուս, խնդրում եմ՝ ինձ առիթ տու՛ր քաջալերելու մեկին, որն ինձ հետ ծառայում է Քեզ: Ամեն:

Գործընկերներ ու համակիրներ բոլորս էլ ունենք, Տիրոջ տված շնորհքով քաջալերենք միմյանց:



Երանելի է այն մարդը, որն ամբարիշտների խորհրդով չի շարժվում, մեղավորների ճանապարհին ոտք չի դնում և հանցագործների հետ համախոհ չի լինում: (Սաղմ. 1.1)

## **ԱՍԾՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ**

**Բ**անկը մի գույգի հաշվին սխալմամբ 120 հազար դոլար փոխանցեց, և գույգը այդ գումարով խոշոր գնումներ կատարեց: Մի քանի մեծ ու փոքր ավտոմեքենա գնեցին, վճարեցին պարտքերը: Սխալի բացահայտումից հետո բանկը պահանջեց վերադարձնել գումարը, բայց այն արդեն ծախսել էին: Այդ մարդիկ հանցավոր ճանաչվեցին, որովհետև նրանց արարքը գիտվեց իբրև գողություն: Երբ նրանք ներկայացան տեղական դատարան, ամուսինը խոստովանեց, որ իրենք հետևել են օրինական, բայց վատ խորհրդի: Նրանք հասկացան, որ հետևելով սխալ խորհրդի՝ ծախսել են ուրիշի գումարը, ինչի համար դժվարություններ են հանդիպելու: Սրան հակառակ՝ սաղմոսերգուն իմաստուն խորհուրդներ է տալիս՝ օգնելով, որ մեր կյանքը չդժվարացնենք: -Նրանք, ովքեր գտնում են իրական գոհացում և մերժում են Աստծուն չժառայող խորհուրդները, «երանելի են», - ասում է նա (Հմ.1): Նրանք գիտեն, որ ոչ իմաստուն ու ոչ աստվածային խորհուրդները մարդուն կարող տանել անտեսանելի վտանգների միջով ու հասցնել վատ վիճակների: Նրանք նաև հաճույք են ստանում Տիրոջ օրենքներից և գիշեր-ցերեկ խորհում Նրա պատվիրանների մասին» (Հմ.2): Նրանք գիտեն նաև, որ Աստծո առաջնորդությունը հանձնվելը ապահովում է կայուն ու արգասաբեր կյանք (Հմ.3): Մեր գործի, փողի, հարաբերությունների և այլ հարցերի շուրջ մեծ կամ փոքր որոշումներ կայացնելիս խնդրենք Աստծո իմաստնությունը, Աստվածային խորհուրդը և Սուրբ Հոգու առաջնորդությունը: Նրա տված առաջնորդությունը շատ կարևոր է ու վստահելի՝ գոհունակ կյանք պարելու և դժվարություններ չստեղծելու համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Դայր, շատ հարցեր կան (որտե՞ղ ապրել, ի՞նչ գործ անել, ու՞մ հետ ամուսնանալ), որոնց լուծման համար Քո խորհրդի կարիքն ունեմ: Օգնիր, որ կարողանամ հնազանդվել ամեն ինչում, ներառյալ Քեզ և ուրիշներին սիրելու հարցում: Ամեն:

Կյանքում կարևոր որոշումներ կայացնելու համար Աստծո Սուրբ Խոսքը շատ էական է:

Կերպարանքով մարդու պես գտնվելով՝ Իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան: (Փիլ. 2.7-8)

## **ՃՇՄԱՐԻՑ ԾԱՌԱՆ**

**Ք**.Ա. 27թ. Հռոմեացի իշխան Օկտավիանոսը Հռոմի Ծերակույտին ներկայացրեց իր հրաժարականը: Նա հաղթել էր քաղաքացիական պատերազմում, աշխարհագրական այդ տարածքի միակ իշխողն էր ու իրեն պահում էր կայսեր նման: Բայց գիտեր, որ կասկածով են նայում իրեն: Հետևաբար հրաժարվեց իր իշխանական դիրքից և խնդրեց, որ նշանակվի սովորական պաշտոնյա: Ծերակույտը, հարգելով իշխանի խնդրանքը, նրան պատվեց քաղաքացիական թագով ու կոչեց Հռոմեացի ժողովրդի ծառա: Օկտավիանոսին տրվեց նաև «Օգոստոս» անունը, որը նշանակում է «մեծ»:

Պողոսը պատմում է Հիսուսի մասին՝ ասելով, որ Նա Ինքն իրեն ունայնացրեց ու ծառայի կերպարանք առավ: Թվում է, թե Օգոստոսն էլ նույն բանն էր արել: Բայց արդյո՞ք նույնն էր: Օգոստոսը իր անձնական շահի համար պարզապես ձեացրեց, թե հրաժարվում է իշխանությունից: Իսկ Հիսուսը «Իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահվան (Փիլ.2.8): Հռոմեական խաչի վրայի մահը նվաստացման ու ամոթի ամենավատ ձևն էր:

Այսօր «ծառայի առաջնորդությունը» որպես առաքինություն է գնահատվում հիմնականում Տեր Հիսուսի օրինակով: Նվաստացումը հունական կամ հռոմեական առաքինությունն էր: Քանի որ Հիսուսը մեզ համար մեռավ խաչի վրա, Ինքն է ճշմարիտ ծառան ու Փրկիչը:

Քրիստոսը ծառա եղավ մեզ փրկելու համար: Նա «իր անձն ունայնացրեց» (Հմ.7), որպեսզի մենք ստանանք փրկություն և հավիտենական կյանքի պարգևը:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ կյանքդ տվեցիր ինձ համար: Քո ծառայությունը ցուցադրությունն էր, այլ իմ հանդեպ Քո ճշմարիտ սիրո արտահայտություն: Սիրտս լցրու՝ սիրով ու շնորհակալությամբ: Դու՛ ես աշխարհի ճշմարիտ ծառան ու Փրկիչը: Ամեն:

Հիսուսը մեզ համար մեռնող Տերն ու Ծառան է, որպեսզի մենք փրկվենք ու կյանք ունենանք:

Ծնօցեցի քո անօրինությունները ինչպես ամպ: (Ես. 44.22)

## ԱՌՎՎՈՏՅԱՆ ՄԱՌԱԽՈՒՂ

**Ա**ռավոտյան գնացի դեպի մեր տան մոտակա լճակը: Նստեցի շրջված նավակներից մեկի վրա ու սկսեցի նայել շուրջս: Զրի մակերևույթը քամուց մեղմորեն օրորվում էր: Հանկարծ մշուշը պատեց շրջակայքը, քամի բարձրացավ ու շուտ էլ դադարեց: Շատ չանցած՝ շողացին արևի ճառագայթները, և մառախուղն անհետացավ:

Տեսարանը հանգստացրեց ինձ, որովհետև պատահածը կապեցի կարգացած մարդարեույթյուններից մեկի հետ. «Ձնջեցի քո անօրինությունները ինչպես ամպ և քո մեղքերը՝ ինչպես մեզ» (Ես. 44.22):

Այդտեղ էի եկել այն հույսով, որ կարողանամ ուշադրությունս շեղել մի շարք մեղքերից, որոնք քանի օր է՝ զբաղեցնում էին միտքս: Թեև այդ մեղքերը խոստովանել էի Աստծուն, բայց հիմա անհանգիստ էի. արդյո՞ք Նա կների ինձ, երբ կրկնել եմ նույն մեղքերը:

Առավոտյան տեսարանը ինձ հուշեց, որ հարցիս պատասխանը դրական է: Եսայի մարգարեի միջոցով Աստված շնորհք ցույց տվեց Իսրայելի ժողովրդին, երբ նա շարունակում էր կուռքերին պաշտել: Նա հորդորեց, որ դադարեն կուռքերի ետևից գնալ՝ ասելով. «Քանզի իմ ծառան ես դու. քեզ ստեղծեցի ինձ ծառայելու համար, և դու, Իսրայել՛, մի՛ մոռացիր ինձ» (Հմ.21): Չեմ կարող այդպիսի ներումը լիովին հասկանալ, բայց ընդունում եմ, որ Աստծո շնորհքը միակ բանն է, որ կարող է մեր մեղքերը վերացնել ու մեզ բուժել: Շնորհակալ եմ, որ իր շնորհքը անսահման ու աստվածային է, ինչպես Ինքը, և հասանելի է կարիքի դեպքում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ իմ կյանքում Քո շնորհալի ներկայության համար: Չեմ ուզում սովորական դարձած մեղքերի մեջ ապրել: Օգնի՛ր, որ կարողանամ զգալ այն ազատությունը, որը գալիս է մեղքերի խոստովանությունից և դրանց մաքրումից:

Ամեն:

Աստծո շնորհքը չարաշահելով՝ մեղքեր ենք գործում, բայց Աստված բարի ու հավատարիմ է և մաքրում է մեր բոլոր մեղքերը:

Հակոբը մնաց միայնակ: Մի մարդ նրա հետ մարտնչեց մինչև առավոտ: (ԾՆ. 32.24)

### **ՊԱՅՔԱՐԵԼ ԱՂՈԹՔՈՎ**

Դենիսի կյանքը վերափոխվեց, երբ մեկը նրան Նոր Կտակաբան նվիրեց: Սուրբ Գիրքը գրավեց նրան ու դարձավ հավատարիմ բարեկամ: Վեց ամսում նրա կյանքում երկու բեկումնային իրադարձություն եղավ, որոնք առիթ տվեցին հավատալ Աստծուն, իր մեղքերի համար թողութուն խնդրել ու ներում ստանալ: Սաստիկ գլխացավեր ունեւր, ուղեղի ուռուցք էր ախտորոշվել, որի հետևանքով նա գամվեց անկողնուն: Մի գիշեր, ցավերից չկարողանալով քնել, նա Աստծուն զիմեց և լուսադեմին միայն հազիվ կարողացավ քնել:

Մարմնական ցավերը մեզ մղում են կանչել Աստծուն, բայց ուրիշ դեպքեր նույնպես կարող են մեզ գրգռել Աստծո մոտ վազելու: Դենիսի գիշերային մաքառումից դարեր առաջ հուսահատ Հակոբն էլ հանդիպեց Աստծուն (ԾՆ.32. 24-32): Հակոբի պարագայում հարցը ընտանեկան մի անավարտ գործ էր:

Խաբել էր իր եղբայր Եսավին (գլ.27) և վախենում էր, որ հատուցումն անխուսափելի է: Նա խնդրեց Աստծո օգնությունը, Նրան տեսավ երես առ երես (32.30) և այդ վիճակից դուրս եկավ որպես փոխված մարդ:

Նույնը արեց Դենիսը. նա հավատքով զիմեց Աստծուն: Տիրողը աղերսելուց հետո ուռուցքը նրա մոտ վերացավ: Թեև Աստված միշտ էլ հրաչքով չի բուժում մեզ, սակայն մենք վստահ ենք, որ Նա միշտ լսում է մեր աղոթքները և տալիս է մեզ այն, ինչի կարիքն ունենք այդ պահին: Հուսահատություն պահին Աստծուն մատուցելով մեր անկեղծ աղոթքները՝ արդյունքը թողնում ենք Իրեն:

**Աղոթք** - Հայր, օգնիր՝ տեսնելու, որ կյանքի դժվարություններն ու մարտահրավերները առիթ են ինձ համար աղոթքով Քեզ դիմելու և Քո մասին իմ իմացությամբ աճելու: Ամեն:

Ցավերը, նեղություններն ու պայքարը անպակաս են մեր կյանքում, բայց կարելի է այդ բոլորի համար աղոթքով դիմել Աստծուն:

Եվ նրա բերանն ու լեզուն իսկույն բացվեցին, և խոսում էր՝ Աստծուն օրինելով: (Պուկ. 1.64)

## **ԾՆՆԴՅԱՆ ԽՈՍՔԻ ՊԱՐԳԵՎՐ**

**Վ**իրահատությունից հետո պատահած կաթվածից թոմը կորցրեց խոսելու կարողությունը և նրան երկար ժամանակ էր անհրաժեշտ ապաքինվելու համար: Շաբաթներ անց զարմանքով ուրախացանք, երբ նա միացավ եկեղեցու կազմակերպած Շնորհակալության պաշտամունքին: Մեր զարմանքը կրկնապատկվեց, երբ թոմը ոտքի ելավ, որ խոսի: Նա դժվարությունամբ էր շարադրում մտքերը, բառերը չէր գտնում, չփոթում էր դեպքերն ու ժամանակները: Սակայն մեկ բան հստակ էր. նա Աստծուն էր փառաբանում: Հիսուսի ծննդյան պատմությունից առաջ հանդիպում ենք մի մարդու, որ կորցրել էր խոսելու ընդունակությունը: աբրիել հրեշտակը երևաց Ջաքարիա քահանային և ասաց, որ ինքը Աստծո զորությունամբ մի որդի է ունենալու, որը դառնալու է մեծ մարգարե (Պուկ. 1.11-17): Ջաքարիան ու իր կինը տարիքով մեծ էին, դրա համար նա կասկածեց: Ուստի Գասբրիելն ասաց. «Համր կլինես ու չես կարողանա խոսել, մինչև այն օրը, երբ այս բաները լինեն. քանի որ չհավատացիր իմ այս խոսքերին, որոնք իրենց ժամանակին կատարվելու են» (Հմ.20): Այդ օրը եկավ: Հրաշքով ծնված որդու անվանակոչության արարողության ավարտին Ջաքարիան խոսեց: Առաջին բառերով նա Աստծուն փառաբանեց (Հմ.64), այնուհետև շարունակեց. «Օրհնյա՛լ է Իսրայելի Տեր Աստվածը, որ այցելություն եկավ և իր ժողովրդին փրկություն բերեց» (Հմ.68): Ջաքարիայի նման թոմի առաջին պատասխանն էլ Աստծուն փառաբանելը եղավ: Երկուսի դեպքում էլ նրանց սրտերը դարձան դեպի իրենց լեզուներն ու մտքերն ստեղծողը: Անկախ մեր դիմագրավելիք դժվարություններից՝ մենք էլ կարող ենք նույն ձևով պատասխանել Աստծո արած բոլոր բաների համար:

**Աղոթք** - Աղոթք - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ խոսքի պարզևի համար: Կասկածների ժամանակ մեզ հետ եղի՛ր և զորացրու՛ մեր հավատը: Օգնի՛ր, որ կարողանանք Քեզ պաշտել և անունդ բարձրացնել: Ամեն:

Եզրագծերի ու նեղությունների ժամանակ ի՞նչ ենք անում և ինչպե՞ս ենք արտահայտվում:

Սարգս Ի՞նչ է, որ հիշում ես նրան: (Սաղմ.8.5)

### Ո՞Վ ԵՔ ԴՈՒՔ

**Դ**ենյանն իրեն աշխարհի աշակերտն է համարում, իսկ իր անցած քաղաքներն ու գյուղերը՝ «մի մեծ դպրոց»։ Ավելի շատ մարդկանց հանդիպելու և ճանաչելու համար 2016-ին նա սկսեց հեծանվային երկարատև մի ճամփորդություն։ Լեզվական արգելքի հանդիպելիս նկատեց, որ մարդիկ կարող են միմյանց հասկանալ պարզապես իրար նայելով։ Իհարկե, մարդկանց հետ հաղորդակցվելիս նրան շատ է օգնում նաև իր բջջայինում եղած թարգմանական ծրագիրը։

Այս հետաքրքիր ճամփորդն իր անցած ճանապարհը չափում է ոչ թե կտրած կիլոմետրերով ու տեսած վայրերով, այլ այն մարդկանցով, որոնք հետք են թողել իր սրտում։ «Թեև ձեր լեզուն չգիտեմ, բայց ուզում եմ իմանալ, թե դուք ո՞վ եք»,-սում էր Դենյանը։

Մեր աշխարհը շատ մեծ է, սակայն Աստված ամեն ինչ գիտի աշխարհի ու մեր մասին։ Դավիթը զարմանքով է նայում. «Տեսնեմ երկինքը՝ քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր» (Հմ.4)։ Եվ ասում է. «Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին՝ որ այցի գաս նրան (Հմ.5)։

Աստված շատ ավելի լավ գիտի քեզ ու հոգում է քեզ համար, քան որևէ մեկը։ Մենք միայն կարող ենք պատասխանել Նրան ու ասել. «Տե՛ր, ո՞վ մեր Տեր, ի՛նչ հրաշալի է քո անունը ողջ աշխարհում» (Հմ.8.2)։

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, ի՞նչ հրաշալի է գիտակցել, որ Դու ամեն բան գիտես Քո ստեղծագործության մասին։ Սիրում եմ քեզ, որովհետև Դու էլ անձամբ ինձ ես սիրում։ Ամեն։

Աստված լավ ճանաչում ու սիրում է քեզ։  
Հավատու՞մ ես սրան։

Տիրոջ ծառան պետք չէ, որ կռիվ անի: (Բ.Տիմ. 2.24)

## ԱԶՆԻՎ ԽՈՍՔ

**Դ**իմագրքում վեճի բռնվեցի մեկի հետ: Ինքս էլ չհասկացա, թե ինչը ինձ դրդեց մտածել, որ կարող եմ սրբագրել մեկին, մտնել բուռն բանավեճի մեջ: Արդյունքը եղավ վիրավորական բառեր, նեղսրտում (գոնե ինձ համար) և Հիսուսի մասին վկայելու կորսված մի առիթ: Այսպիսի վիճակներ հիմա ամեն օր են լինում: Ինչպես մասնագետներից մեկը բացատրեց, մարդիկ սխալ եզրակացություններ են անում, իսկ զայրույթը «հանրա- յին գաղափարների» արտացոլումն է:

Պողոսի իմաստուն խրատը Տիմոթեոսին նույնպիսի զգուշացում է. «Հիմար ու անօգուտ վիճաբանություններից հե՛տ քաշ- վիր՝ իմանալով, որ կռիվներ են ծնում: Տիրոջ ծառան պետք չէ որ կռիվ անի, այլ բոլորի հետ հեղահոգի լինի, սովորեցնող, ռի չպահող» (Բ.Տիմ. 2.23-24):

Հուսի բանտից Տիմոթեոսին ուղղված բարի խորհրդի նպատակն էր երիտասարդ քարոզիչ պատրաստելը, նրան Աստծո ճշմարտությունը սովորեցնելը:

Պողոսի խորհրդից մենք էլ կարող ենք օգտվել, հատկապես երբ խոսքը վերաբերում է մեր հավատին ու համոզմունքներին: Պողոսն ասում է. «Հակառակվողներին հեղուծյամբ խրատիր, թերևս Աստված նրանց ապաշխարություն տա ճշմարտությունն իմանալու համար» (Հմ.25): Հեղուծյամբ ու ազնվուծյամբ ուրիշների հետ խոսելը այս մարտահրավերի մաս է կազմում, և դա միայն հովիվների համար չէ: Որպես Աստծուն սիրողներ ու Նրա մասին ուրիշներին պատմել ցանկացողներ՝ մենք էլ սիրով խոսենք Իր ճշմարտության մասին՝ վստահ լինելով, որ Սուրբ Հոգին կօգնի մեզ մեր արտասանած յուրաքանչյուր բառի համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Յայր, երբ ուրիշների հետ խոսում եմ Քո

ճշմարտության մասին, սիրտս լցրու՛ Քո սիրով ու լեզվիս վրա դիր Քո խոսքը: Ամեն:

Համացանցում վիճաբանելը հեշտ է թվում, բայց զգույշ լինենք: Աստծուն հաճելի չէ նման վարմունքը:

Եվ նրան երկրպագեն Աստծու բոլոր հրեշտակները: (Եբ. 1.6)

## **ԾՆՆԴՅԱՆ ԱՊՇԱՆՔ**

**Լ**ոնդոնում էի մի ժողովի մասնակցելու առիթով: Մի երեկոյան տեղատարափ անձրև էր գալիս, և ես ուշանում էի ժողովից: Շտապեցի փողոցները շրջանցելով անցնել ու հանկարծ զարմացած կանգ առա. բազմաթիվ հրեշտակներ, իրենց մեծ ու շողացող թևերը տարածած, սավառնում էին Ռիջլնդ փողոցի երկնքում: Այսպիսի հիասքանչ տեսարան ես չէի տեսել: Ընդ որում, միայն ես չէի զմայլված: Հարյուրավոր մարդիկ էին շարված փողոցում ու ապշահար վերև էին նայում:

Ծնունդի պատմության մեջ ապշանքը կենտրոնական տեղ է գրավում: Երբ հրեշտակը երևաց Մարիամին ու ասաց, որ ինքը հրաշքով պետք է հղիանա (Ղուկ.1.26-38) և հովիվներին հայտարարեց Հիսուսի Ծննդյան մասին(Հմ.2.8-20), բոլորը վախով, զարմանքով ու ապշահար արձագանքեցին նրան:

Ռիջլնդ փողոցում հավաքվածներին նայելով՝ ես հասկացա, որ այդ պահին մենք էլ նույն զգացումներն ունեինք:

Քիչ անց նկատեցի, որ հրեշտակներն իրենք էլ վերև, ասես մեկ այլ բանի էին նայում: Այն հրեշտակների խմբի նման, որոնք երգում էին, երբ Հիսուսը հիշատակվեց (Հմ. 2.13-14): Այն տպավորությունն էր, թե հրեշտակներն էլ են ապշում, երբ նայում են նրան: «Նա փառքի լույսն է ու նրա էությունն նկարագիրը» (Եբբ. 1.3), -ասում է նամակագիրը: Փայլուն, պայծառ ու լուսավոր Հիսուսը յուրաքանչյուր հրեշտակի հայացքի կենտրոնացումն է (Հմ.6): Եթե հրեշտակներով ներկայացված Ծնունդի պատկերը կարող է կանգնեցնել Լոնդոնի բազմաբազ բնակիչներին, ապա կարելի է պատկերացնել, թե ի՞նչ կպատահի, երբ Իրեն տեսնենք երես առ երես:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, փառաբանում եմ Քեզ: Ծնորհակալ եմ Քո հիանալի Որդու պարգևի համար: Ամեն:

Թող որ մենք էլ ունենանք այս Ծնունդի ապշանքն ու զմայլումը:



Ձեր արտերը հնձելիս կրկին չվերադառնաք չհնձվածը հնձելու կամ հնձի ժամանակ ընկած հասկերը հավաքելու համար, այլ դրանք աղքատին ու պանդուխտին կթողնեք: (ՂԱ. 23.22)

## **ՄԻ ՔԻՉ ՀԵՏԵՎԻՆՆԵՐԻՆ ԹՈՂ**

**Պ**ապը ամեն երեկո դատարկում էր իր գրպանները և մետաղադրամները շարում մահճակալի կողքին դրված սեղանին: Նա գիտեր, որ թոռնիկները գալու էին: Իսկ նրանք սովորություն ունեն դեռ տուն չմտած մոտենալ իր սեղանին: Պապը կարող էր, իհարկե, այդ փողը պահել գանձանակում, կամ ավելացնել իր բանկային հաշվին: Բայց այդպես չէր անում: Նրա համար ուրախություն էր փողը թողնել սեղանին՝ այսինքն՝ իր թոռնիկներին, որոնք իր համար թանկագին հյուրեր էին:

Նման մտածելակերպն է ներկայացված ՂԱտական 23-րդ գլխում, որտեղ խոսվում է հունձքի ու հնձելու մասին: Աստված Մովսեսի միջոցով իր ժողովրդին պատվիրում է. «Ձեր արտերը հնձելիս կրկին չվերադառնաք չհնձվածը հնձելու կամ հնձի ժամանակ ընկած հասկերը հավաքելու համար» (Հմ.22): Ըստ էության Նրա ասածն է. «Մի քիչ հետևինների՛ն թող»: Այս հորդորը ժողովրդին հիշեցնում է, որ իրենց հնձի հատեում Աստված է կանգնած, որը իրենց միջոցով կերակրում է դժբախտներին ու գաղթականներին:

Նման մտածելակերպը վստահաբար մեզ մոտ արմատացած չէ: Բայց հենց դա պիտի բնութագրի Աստծո երախտապարտ գավակներին: Նա հրճվում է՝ տեսնելով մեծահոգի ու առատաձեռն մի սիրտ: Եվ այս բանն իրականություն է դառնում իմ և քո միջոցով:

**Աղոթք** - Սիրող Հայր, շնորհակալ եմ իմ հանդեպ Քո նախատեսության համար: Տու՛ր ինձ աչքեր, որպեսզի կարողանամ տեսնել, թե ինչպես ես էլ իմ հերթին կարող եմ սեր ու գուրգուրանք ցույց տալ կարոտյալին ու օտարականին: Ամեն:

Կարոտյալներ ու չքավորներ միշտ էլ կլինեն մեր շուրջը: Պատրաստ լինենք ձեռք մեկնելու նրանց:

Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ: (Չոռն. 5.8)

## **ԽԱԶԻ ԼԵՋՈՒՆ**

Հովիվ թիմ Կելլերն ասել է. «Միայն ասված խոսքերով ոչ մեկը չի կարող իմանալ, թե ով է ինքը: Հարկավոր է ցույց տալ»: Այս խոսքը ինչ-որ իմաստով «Գործերը բառերից ավելի խոսուեն են» ասույթի գործնական արտահայտություններից մեկն է: Կողակիցները իրար նայելով ու սիրելով են ցույց տալիս, որ գնահատված են: Ծնողները զավակների հանդեպ հոգատարություն են ապացուցում, որ նրանք արժեքավոր են իրենց համար: Մարզիչները մարզիկներին են ցույց տալիս, որ ունեն նրանց զարգացման համար բավականաչափ ներուժ: Այս ցանկը կարելի է շարունակել: Նույն կերպ էլ այլ տեսակի որևէ արարք կարող է ցույց տալ ցավալի բաներ, որոնք հաղորդում են ավելի մութ պատգամներ: Գործողության վրա հիմնված պատգամների մեջ կա մի շատ կարևոր կետ. երբ ուզում ենք ցույց տալ, թե ով ենք մենք Աստծո համար: Դրա համար հարկավոր է նայել, թե ինչ արեց Հիսուսը խաչի վրա: Հռոմեացիներին ուղղված նամակի 5.8-ում Պողոսը գրում է. «Բայց Աստված մեր նկատմամբ իր սերը հայտնեց. երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ»: Խաչը մեզ ցույց է տալիս, թե ով ենք մենք. նրանք, որոնք Աստված այնպե՛ս սիրեց, որ նույնիսկ Իր միածին Որդուն տվեց (Հովհ. 3.16):

Խառը պատգամներին, հուսահատ մարդկանց շփոթեցնող արարքներին հակառակ՝ Աստծո սրտի պատգամը հնչում է հստակ: Ո՞վ ես դու: Դու նա՛ ես, որին Աստված այնքան սիրեց, որ փրկության համար Իր Որդուն տվեց: Նկատի՛ առ Նրա վճարած մեծ գինը և այն իրողությունը, որ Իր համար դու միշտ էլ մեծ արժեք ունես:

**Աղոթք** - Հայր, չեմ կարողանում հասկանալ, թե ինչու՞ ես ինձ այդքան սիրում, որ Քո Որդուն տվեցիր ինձ փրկելու համար: Սերդ անփոխարինելի ու շնորհքդ հիանալի է: Շնորհակալ եմ, որ ինձ Քո զավակն ես համարում: Ամեն:

Հակառակ մեր տկարություններին ու հանցանքների՛ն՝ մենք արժեքավոր ենք Տիրոջ համար:

Ահա վերացրի քեզնից քո անօրինությունները: Պարեգո՛տ հազցրեք նրան և սուրբ խու՛յր դրեք նրա գլխին: (Ձաք. 3.5)

### **Ի՞Նչ ես ՅԱԳԱԾ**

**Ա**րգենտինայի կանանց բասկետբոլի թիմը մրցաշարին ներկայացել էր սխալ համազգեստով: Նրանց մուգ կապույտ մարզաշապիկները շատ նման էին Կոլումբիայի թիմի համազգեստին: Որպես հյուրընկալվող թիմ՝ նրանք պարտավոր էին սպիտակ շապիկներ հագնել: Ժամանակ չունենալով սխալն ուղղելու և նոր մարզաշապիկներ հագնելու՝ նրանք ստիպված եղան հրաժարվել խաղից, և նրանց հաշվին պարտություն գրանցվեց: Դրանից հետո, վստահաբար, Արգենտինայի թիմը ավելի ուշադիր էր մարզահագուստի հարցում:

Ձաքարիա մարգարեի ժամանակ Աստված ցույց տվեց մի տեսիլք, որում քահանայապետ Հեսուն Աստծուն ներկայացավ կեղտոտ հագուստով: Սատանան քամահրանքով ակնարկեց, որ անընդունելի է, որ մարգարեն այդ տեսքով Աստծուն ներկայանա: Ժամանակ կար այդ հագուստները փոխելու, և Աստված հանդիմանեց սատանային ու իր հրեշտակին պատվիրեց հանել Հեսուլի կեղտոտ հանդերձը: Դառնալով Հեսուլին՝ Նա ասաց. «Ահա վերացրի քեզնից քո անօրինությունները: Պարեգո՛տ հազցրեք նրան և սուրբ խու՛յր դրեք նրա գլխին» (Ձաք. 3.5): Մենք այս աշխարհ ենք եկել Ադամի մեղքը հազած, որով ծածկում ենք մեր մեղքերը: Եթե մնանք մեր կեղտոտ հագուստներով, կկորցնենք կյանքի խաղը: Եթե մեր մեղքերից զզվենք ու դառնանք դեպի Հիսուսը, Նա մեզ ոտքից գլուխ կհազցնի իրենով ու իր արդարությունը: Ուստի ժամանակն է ստուգելու և հարցնելու. «Ի՞նչ ենք հագած»:

«Հաստատուն վեմը» երգի վերջին տողերում բացատրվում է, թե ինչպես կարելի է մրցույթը շահել. «Երբ հաջողությունը գալու լինի, թող որ այդ պահին հագնեմ իր արդարությունը և անարատ կանգնեմ գահի առջև»:

**Աղոթք** - Տեր, շնորհակալ եմ, որ ցույց ես տալիս, թե ինչպես կարելի է մեղքերից ազատվել ու Քո արդարությամբ ծածկվել: Ամեն:

Ի՞նչ ես ուզում, որ մարդիկ տեսնեն քո մեջ. մեղքերդ ու աղտեղություն՞դ, թե՞ Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Տերն իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի: (Սաղմ. 22.1)

## **ՓՆՏՐԻՐ ՄԱՐԳԱԳԵՏԻՆԸ**

**Օ**ղաչուն հայտարարեց, որ թռիչքը դարձյալ հետաձգվում է: Պատուհանի մոտի աթոռին երկու ժամից ավելի նստելուց հետո ես զայրացա: Ծանր աշխատանքային շաբաթից հետո ուզում էի շուտ տուն հասնել, հանգստանալ: Դեռ որքա՛ն ենք սպասելու: Սկսեցի պատուհանից դուրս նայել, հանկարծ սկսեց անձրև գալ: Ու ես երկու թռիչքուղիների միացման տեղում նկատեցի առանձին փոքրիկ, եռանկյունաձև մի հողաշերտ: Տարօրինակ բան համատարած ասֆալտի վրա:

Որպես փորձառու հովիվ՝ Դավիթը լավ գիտեր իր ոչխարների համար դալար մարգագետին գտնելու կարևորությունը: Սաղմոս 22-ում նա մի կարևոր դաս է գրանցում, որն իրեն պետք է առաջնորդեր Իսրայելի թագավոր եղած ժամանակ. «Տերն իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի: Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց... Նա կենդանացրեց ինձ» (Հմ. 2-4):

Օղանավակայանի ասֆալտապատ, ընդարձակ տարածքը, թռիչքի ուշացումն ու հանգստի կարիքը պատճառ դարձան, որ Աստված՝ իմ բարի Հովիվը, հայացքս ուղղի մի կանաչ հողաշերտի: Իր հետ հարաբերվելով՝ ես կարող եմ հայտնաբերել իր նախատեսած մնայուն հանգիստը՝ որտեղ էլ լինեմ: Պետք է ուղղակի նկատեմ ու այնտեղ գնամ:

Այս դասը տարիներ շարունակ ուղեկցում էր ինձ. փնտրի՛ր մարգագետինը, այնտե՛ղ է: Մեր կյանքում ունենալով Աստված, մենք որևէ բանից զրկված չենք լինի: Նա մեզ կպառկեցնի դալար մարգագետիններում ու մեզ կթարմացնի:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ իմ Հովիվն ես ու ինձ պառկեցնում ես մարգագետիններում՝ հոգիս նորոգելու համար: Ամեն:

Հոգնած ու սպառված վիճակներում փորձի՛ր տեսնել Աստծո տված դալար մարգագետինները:

Ահա կույսը պիտի հղիանա ու որդի ծնի, և նրա անունը պիտի լինի Էմանուել: (Ես. 7.14.)

## **ԻՆՉ ԱՆՈՒՆ ՏԱԼ ՄԱՆԿԱՆԸ**

**Մ**արիամն ու Հովսեփը, երբ սպասում էին իրենց մանկան ծնունդին, նրան անվանակոչելու թեմա չեն քննարկել: Որովհետև նրանց այցելած հրեշտակները, երբ ավետեցին մանկան ծնունդի մասին, ասացին, որ նրա անունը Հիսուս է լինելու (Մատթ. 1.20-21, Ղուկ. 1.30-31): Հովսեփին երեացող հրեշտակը նաև բացատրեց, որ այդ անունով կոչված մանուկը «իր ժողովրդին փրկելու է մեղքից»:

Նրա անունը պիտի լինի էմանուել (Ես.7.14.), որը նշանակում է «Աստված մեզ հետ», որովհետև Նա պիտի լինի մարդկային տեսքով Աստված, աստվածություն՝ խանձարուրում փաթաթված: Եսայի մարգարեն հայտնում է նաև հավելյալ անուններ.«Աքանչելի խորհրդակից», «Հզոր Աստված», «Հավիտենականության Հայր» և «Խաղաղության իշխան» (Հմ. 9.6), որովհետև Նա պիտի լինի այդ բոլորը:

Միշտ էլ նորածնին անուն տալը հետաքրքիր է: Բայց ոչ մի այլ մանուկ չունեք աշխարհը փոխող նման անուն, ինչպես Հիսուսն էր, որին «Քրիստոս են ասում» (Մատթ. 1.16): Որքան հուզիչ է մեզ համար, երբ կարող ենք կանչել «մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի անունը» (Ա. Կորնթ. 1.2): Չկա՛ մեզ փրկող ուրիշ անուն (Գործք 4.12):

Եկե՛ք փառաբանենք Տիրոջը ու մտածենք, թե ինչ է նշանակում մեզ համար Նրա անունը:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ մեզ ուղարկեցիր Նրան, ով մեր Փրկիչն է, Խորհրդակիցը, Խաղաղության իշխանն ու Մեսիան: Տոնում եմ Նրա ծնունդը, որովհետև Իր կյանքը, մահն ու հարությունը մեզ տվեց հավիտենական կյանք: Ամեն:

Խորհրդածիր Հիսուսին տրված անունների մասին և տե՛ս, թե դրանցից որն է ավելի իմաստալից թվում քեզ:

Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է: (Բ. Տիմ. 3.16)

## ԿԱՐԴԱԼ ԲԱՐԻ ԳԻՐՔԸ

**Ի**սլանդիան ընթերցողների երկիր է: Ամեն տարի այս ազգը հրատարակում ու կարդում է ավելի մեծ թվով գրքեր, քան որևէ այլ երկիր: Նաև սովորություն կա Ծննդյան գիշերը ընտանիքի անդամներին ու բարեկամներին գիրք նվիրել և այդ ամբողջ գիշերը ընթերցել: Այս սովորույթը կար դեռևս երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ թուղթը էժան էր: Իսլանդացի հրատարակիչները սկսեցին տարվա վերջին ամիսներին շուկան ողողել նոր գրքերով: Հիմա էլ նոյեմբերին արդեն հրատարակիչները յուրաքանչյուր ընտանիքի ուղարկում են նոր գրքերի ցանկը: Այս բարի ավանդույթը հայտնի է որպես Սուրբ Ծննդյան գրահանգել:

Կարող ենք շնորհակալ լինել Աստծուն, որ շատերին է օժտել լավ պատմություն գրելու, ինչպես նաև կրթելու, ներշնչելու կամ այլոց իրենց խոսքով ոգևորելու կարողությամբ: Չկա գրքի նման լավ այլ բան: Հրատարակված լավագույն գիրքը՝ Աստվածաշունչը, կազմել են գանազան հեղինակներ, որոնք գրել են բանաստեղծական և արձակ ոճով, ոմանք լավ պատմություններով, ոմանք՝ ոչ այնքան, բայց բոլորն էլ ներշնչված Սուրբ Հոգով: Պողոս առաքյալը հիշեցնում է Տիմոթեոսին. «Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է ու օգտակար՝ սովորեցնելու և հանդիմանություն, ուղղելու և արդարություն մեջ խրատելու համար: Որպեսզի Աստծու մարդը կատարյալ լինի, ամեն բարի գործի համար պատրաստված» (Բ.Տիմ. 3.16-17): Աստվածաշունչը կարգալր ներշնչում և օգնում է մեզ, որ կարողանանք ապրել Իր համար, և մեզ առաջնորդում է «ճշմարտության խոսքը մատակարարելիս» (Հմ. 2.15):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ ստեղծագործական մտքով ներշնչեցիր «բազմաթիվ գրքերի» հեղինակների սրտերը: Հասկապես շնորհակալ եմ Քո Գրքի համար: Ամեն:

Կարդա՛ր Աստծո խոսքը և տե՛ս, թե այն ինչպես է ներշնչում, քաջալերում ու խրատում քեզ:

Քանզի ինձ համար քո ողորմությունն ավելի լավ է, քան կյանքս, և շրթունքներն իմ պիտի գովեն քեզ: (Սաղմ. 62.4)

## **ՈՉ ԹԵ ԳՐԱԿԻՉ, ԱՅԼ ՓԱՌԱԲԱՆՈՂ**

**Դ**իտելով որդուս՝ տարիների ընթացքում պատրաստած Ծնունդի ձեռագործ զարդարանքներն ու ամեն տարի տատիս ուղարկած իրարից տարբերվող առարկաները, զգացի, որ դրանք չէին ուրախացնում ինձ: Ես միշտ էլ կարևորել եմ յուրաքանչյուր զարդի ստեղծագործական միտքն ու դրանով են ներկայացված հիշատակը: Բայց հիմա կարծես թե ինձ գրավում են մեծ խանութների սուրբծննդյան ցուցադրանքները, միանման, փայլուն ու շողշողացող ժապավենները:

Երբ մի փոքր հեռացա մեր համեստ զարդարանքներից, նկատեցի կարմիր սրտաձև մի զարդ՝ վրան գրված մի պարզ նախագասուլթյուն. «Հիսուսն իմ Փրկիչն է»: Եվ ես ասես սթափվեցի. ինչպե՞ս կարող էի մոռանալ, որ ընտանիքս ու Հիսուսի հանդեպ ունեցած հույսս են պատճառը, որ ես սիրում եմ Ծննդյան տոնը: Մեր պարզ տոնածառը երբեք նման չի եղել խանութներում ցուցադրվածներին, բայց դրա զարդարանքների հետևում թաքնված սերը այն ավելի է գեղեցկացնում: Մեր համեստ տոնածառի զարդերի նման Մեսիան որևէ ձևով աշխարհի սպասածի համաձայն չեղավ (Ես. 53.2): Հիսուսը «արհամարհվեց ու բանի տեղ չդրվեց» (Հմ.3): «Բայց նա խոցվեց մեր մեղքերի համար, մեր խաղաղության համար նա՛ պատիժ կրեց, և նրա՛ վերքերով մենք բժշկվեցինք» (Հմ.5): Սրանից ավելի գեղեցիկ բան չի կարող լինել: Երախտագիտությամբ լցված՝ մեր անկատար զարդարանքների ու մեր կատարյալ Փրկչի համար դադարեցի արտաքուստ գրավիչ բաներ փնտրել և սկսեցի փառաբանել Աստծուն՝ իր մեծ սիրո համար: Փայլիլուն զարդարանքները բնավ հարմար չեն Հիսուսի զոհաբերական պարզեին:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, խնդրում եմ՝ օգնի՛ր մեզ, որ կարողանանք տեսնել գեղեցիկ սերը, որն արտացոլվում է Քո զոհողության մեծությունից: Ամեն:

Եթե տեսնում եմք խաչի վրա Տեր Հիսուսի զոհողության իմաստը, փառավորենք Տիրոջը Օմնիյան տոնախմբությունների ժամանակ:

Խաղաղություն ու մարդկանց մեջ՝ հաճություն: (Ղուկ. 2.14)

## **ԵՐԲ ՀԱՅՏՆԿԻ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ**

**1** 914-ին Բելգիայում Ծննդյան մի ցուրտ գիշեր խրամատնե-  
րից հանկարծ երգի ձայն լսվեց: Նախ գերմաներեն, ապա  
անգլերեն հնչեց «Լուռ գիշեր»-ը: Զինվորները, որոնք օրվա ըն-  
թացքում կրակում էին իրար վրա, վայր դնելով զենքերը,  
դուրս եկան խրամատներից, միմյանց ձեռք սեղմեցին, շնորհա-  
վորեցին, նույնիսկ իրենց օրապահիկներից իրար նվեր արեցին:  
Մինչև հաջորդ օրը շարունակված զինադադարի ընթացքում  
զինվորները խոսեցին, կատակեցին, ուրախացան, նույնիսկ  
ֆուտբոլ խաղացին:

1914-ի Ծննդյան զինադադարը, որ եղավ Առաջին համաշ-  
խարհային պատերազմի Արևմտյան ճակատում, այն խաղաղու-  
թյան մի նշույլն էր, որ հրեշտակները հայտարարել էին առա-  
ջին Ծնունդի գիշերը՝ շատ տարիներ առաջ: Դիմելով վախեցած  
հովիվներին՝ հրեշտակներից մեկն ասաց. «Մի՛ վախեցեք, որով-  
հետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ  
ժողովրդինն է լինելու: Այսօր ձեզ Դավթի քաղաքում Փրկիչ  
ծնվեց, որ է՝ Օծյալ Տերը» (Ղուկ. 2.10-11): Ապա հայտնվում է  
երկնավոր զորքի մի բազմություն, որը գովաբանում էր Աստ-  
ծուն՝ ասելով. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, երկրի վրա՝  
խաղաղություն ու մարդկանց մեջ՝ հաճություն» (Հմ.13-14):

Հիսուսն է «Խաղաղության իշխանը», որը փրկելու է մեզ մեր  
մեղքերից (Ես. 9.6): Խաչի վրա Իր կատարած գոհաբերության  
միջոցով Հիսուսը բոլոր Իրեն վստահողներին առաջարկում է  
ներում ու խաղաղություն Աստծո հետ :

**Աղոթք** - Խաղաղության իշխան, այսօր իշխի՛ր իմ սրտում: Քեզ  
եմ գովաբանում Քո կատարյալ խաղաղության համար, որ այս  
աշխարհը երբեք չի կարող տալ: Ամեն:

Վայելի՛ր Տեր Հիսուսի տված խաղաղությունը և կիսի՛ր այն  
ուրիշների հետ:



Աստված այնպես սիրեց աշխարհը: (Յովհ. 3.16)

## ԱՇԽԱՐՀԻ ՅՆԾՈՒԹՅՈՒՆԸ

**Մ**ենդյան տոնին միշտ մեր տունը զարգարում ենք աշխարհի տարբեր կողմերից բերված մսուրի պատկերներով: Գերմանիայից բերել ենք բուրգերով, Բելժղեհեմից՝ ձիթենու փայտով, Մեքսիկայից վառ գույներով տեսարաններ: Բայց մեր ընտանիքի սիրած տարբերակը աֆրիկյան մի պատկեր է: Դրանում ոչ թե ոչխարներով և ուղտերով մսուրի սովորական պատկեր է, այլ ներկայացված է մի գետածի, որը քնքշորեն նայում է մանուկ Հիսուսին:

Այս բազմազան նկարները ջերմացնում են սիրտս, որովհետև հիշեցնում են, որ Հիսուսը միայն մեկ մշակույթի կամ ազգի համար չէ: Այլ բարի լուր է ամբողջ աշխարհի համար և պատճառ է դառնալու ամեն ազգի ու ժողովրդի մարդկանց ուրախություն:

Դրանցից յուրաքանչյուրում ներկայացված մանուկը Աստծո համաշխարհային սիրո ճշմարտությունն է հայտնում: Ինչպես Հովհաննեսն է մեջբերել Հիսուսի և փարիսեցի Նիկոմեդոսի խոսակցությունից Հիսուսի ասածը. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ իր Միածին Որդուն տվեց, որպեսզի ամեն նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16):

Հիսուսի պարգևը բարի լուր է բոլորի համար: Կարևոր չէ, թե որտեղ ես: Հիսուսի ծնունդը Աստծո սիրո ու խաղաղության առաջարկն է քեզ: Եվ նրանք, ովքեր Քրիստոսով նոր կյանք են գտնում «ամեն ցեղից ու լեզվից, ժողովրդից ու ազգից» (Հայտն. 5.9), մի օր կհռչակեն Աստծո փառքը հավիտյանս հավիտենից:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Որդուդ պարգևի միջոցով տալիս ես Քո փրկությունը: Ամեն:

Կարևոր չէ, թե ինչպես ես նշում Ծնունդը, հիշիր, որ Աստծո սերը ամբողջ աշխարհի համար է:

Երբ հասնես, Ազայելին ասորիների թագավոր կօծես: (Գ. Թագ. 19.15)

## Ո՞Վ Է ԿԱՐՈՏՈՒՄ ԻՆՁ

**Գ** խոնական, երաժիշտ ու գրող Արթուր Բրուկար թուչում էր վաշինգտոն: Ինքնաթիռում ականջին հասան հետևում նստած տարեց կնոջ խոսքերն իր ամուսնուն. «Ճիշտ չէ ասել, թե ոչ մեկը չունի քո կարիքը»: Մարդը շնջաց, թե երանի մեռած լիներ: Երբ տեղ հասան, Բրուկար ետ դարձավ ու անմիջապես ճանաչեց մարդուն: Նա հանրահայտ հերոս էր: Բոլոր ուղևորները նրա ձեռքը սեղմեցին, օգաչուն հատուկ շնորհակալություն հայտնեց տասնյակ տարիներ առաջ իր կատարած քաջարի գործերի համար: Միլենույն է, այդ հսկան զարմանալիորեն ընկել էր հուսահատությունից գիրկը: Եղիա մարգարեն արիաբար պարտություն մատնեց Բաազի 450 մարգարեններին (Գ. Թագ.18): Բայց այդ հաղթանակին նա միայնակ չհասավ, Աստված անդադար իր մոտ էր: Բայց հետո, իրեն միայնակ զգալով, Աստուծոց խնդրեց, որ իր հոգին առնի: Աստված Եղիայի հոգին նորոգեց՝ հրավիրելով Իր մոտ ու նրան տալով մի նոր ժողովուրդ, որին պիտի ծառայեր: Նա պետք է գնար ու «Ազայելին ասորիների թագավոր օծիր, Ամեսսեի որդի Հեուին՝ Իսրայելի թագավոր, իսկ արեւմաուլացի Սափատի որդի Եղիսէէին օծիր մարգարե» (Գ. Թագ. 19.15): Վերանորոգված հոգով ու աշխուժացած Եղիա մարգարեն գտավ իր հաջորդին ու դաստիարակեց նրան: Քո բոլոր հաջողությունները կարող են արտացոլվել հետևը ցույց տվող հայելու մեջ: Հնարավոր է, որ դու էլ մտածես, թե քո ժամանակն անցել է, և քո բարձունքից իջնելով՝ սկսել ես տկարանալ: Հոգ չէ: Նայի՛ր շուրջը: Կան մարդիկ, որոնք քո կարիքն ունեն: Հիսուսի սիրով լավագույնս ծառայի՛ր նրանց, և Աստված նկատի կառնի դա: Հիմա նրանց ծառայելն է քո նպատակն ու պատճառը, որ դու դեռ այստեղ ես:

**Աղոթք** - Սուրբ Բոգի, բա՛ց աչքերս, որպեսզի տեսնեմ նրանց, ում կարող եմ ծառայել: Ամեն:

Աստված մեզ միշտ առիթ է տալիս, որ հանուն Իր սիրո՛ մեր ծառայությունը մատուցենք ուրիշներին: Կարևորը մենք պատրաստ լինենք:

Գթախիրտ, ողորմած է Տերը, համբերատար ու ողորմաշատ: (Սաղմ. 102.8)

### **ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳԸ**

**Մ**ուխն արդեն ընկել էր, երբ հանկարծ մեր տան էլեկտրականությունն անջատվեց: Երկու փոքր զավակներս առաջին անգամ էին նման բան տեսնում: Մի քանի մոմ վառեցի և բալիկներիս հետ նստեցինք վառվող մոմերի լույսի տակ: Երեխաների անհանգիստ շարժումները տեսնելով՝ առաջարկեցի երգել: Շուտով նրանց մտահոգ դեմքերին ժպիտ երևաց: Երբեմն մենք էլ մեր կյանքի խավար պահերին երգի կարիք ենք ունենում:

102-րդ սաղմոսում Աստծո ժողովուրդը երգեց, երբ աքսորից վերադարձավ քանդված երկիրը: Այդ ճգնաժամային պահին նրանք ուզեցին երգել: Բայց ոչ թե որևէ երգ, այլ ուզեցին երգել Աստծո, Նրա ով լինելու և ինչ անելու մասին: 102-րդ սաղմոսը մեզ նաև օգնում է հիշել, որ «գլխախրտ, ողորմած է Տերը, համբերատար ու ողորմաշատ» (Հմ.8): Եթե նույնիսկ մենք մտածում ենք, որ մեր մեղքերի պատճառով դատապարտված ենք, Սաղմոսը հայտարարում է, թե Աստված բարկացած չէ: Նա ներել է մեզ ու հայտնել Իր գլխաբառությունը: Սրանք լավ բաներ են, որոնց մասին էլ երգելու ենք մեր խավար գիշերներում:

Դու քեզ մթության ու դժվարությունների մեջ ես տեսնում՝ մտածելով, թե Աստված իսկապե՞ս բարի է, և հարցականի տակ ես զնում Նրա սերը: Եթե այդպես է, աղոթի՛ր ու գովերգի՛ր Նրան, ով առատ սիրով սիրում է քեզ:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, օգնի՛ր, որ կարողանամ տեսնել Աստծո սերը՝ մարմնավորված Քո կյանքի, մահվան ու հարության մեջ: Բարձրացրու՛ հոգնած գլուխս, որ կարողանամ երգել Քո բարության ու հավատարմության մասին: Ամեն:

Աստծո փրկարար շնորհքը թող որ քեզ մղի ու քաջալերի Իր փառքի համար սաղմոսներ ու երգեր երգելու:

Նրանք ինձ համար ուրախություն, օրհնանք ու պարծանք պիտի դառնան: (Եր. 33. 9)

### **ՎԵՐԱՇԻՆԵԼ ՓԼԱՏԱԿՆԵՐԸ**

**1** 7 տարեկանում գողություն ու թմրամոլություն պատճառով Դոուլենը ստիպված էր հեռանալ Հարավային Աֆրիկայի Մանենբերգ քաղաքի իր հայրենի տնից: Բայց նա շատ հեռու չգնաց: Թիթեղյա պատերով մի հյուղակ շինեց մոր տան հետևում, որը շուտով դարձավ թմրանյութ օգտագործելու տեղ՝ Կազինո անունով: Բայց երկու տարի անց Դոուլենը դարձի եկավ դեպի Հիսուսը: Թմրանյութերից հրաժարվելու նրա ուղին հոգնեցուցիչ էր ու երկար, սակայն Տիրոջ օգնությամբ ու հավատացյալ բարեկամների աջակցությամբ նա մաքրվեց ու ազատվեց այդ մոլությունից: Եվ հյուղակը շինելուց տասը տարի անց Դոուլենն ու իր ընկերները այն վերածեցին տնային եկեղեցու: Չարություն ու խավարի երբեմնի որջը հիմա աղոթքի ու պաշտամունքի վայր է դարձել:

Այս եկեղեցու առաջնորդները հետևում են Երեմիա 33-ին՝ տեսնելու, թե ինչպես է Տերը բուժում ու վերանորոգում մարդկանց ու վայրերը, ինչպես եղավ Դոուլենի ու կազինոյի դեպքում: Երեմիա մարգարեն խոսեց Աստծո գերված ժողովրդի հետ և ասաց, որ թեև քաղաքը չի խնայվելու, բայց Աստված իր ժողովրդին կբուժի ու «կվերականգնի նրանց իրենց նախկին վիճակի մեջ»: Նրանց կմաքրի այն բոլոր անիրավություններից, որ գործեցին իր նկատմամբ» (Եր. 33. 7-8): Եվ հետո «Նրանք ինձ համար ուրախություն, օրհնանք ու պարծանք պիտի դառնան» (Հմ. 9): Երբ մենք էլ հուսահատվենք ցավի ու մեղքի զգացումից, շարունակենք աղոթել, որպեսզի Աստված բժշկություն ու հույս բերի, ինչպես արեց Մանենբերգի հյուղակում:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ մի նոր կյանքի կայծ ես դնում մեռած թվացող բանի մեջ: Շարունակիր իմ մեջ գործել, որպեսզի կարողանամ Քո փրկարար սերը կիսել ուրիշների հետ: Ամեն:

Աստված կնորոգի մեր փլատակված կյանքը, եթե աղերսանքով դիմենք Իրեն:

Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ չէ, այլ... այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են: (Եփ. 6.12)

## ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1** 876-ին, երբ Կենտրոնական Ինդիանայում մարդիկ ածխա-հանք էին որոնում, նրանց թվաց, թե հանդիպել են դժոխքի դռներին: Պատմաբան Ջոն Բարլո Մարտինը գրում է, թե հարյուր ոտք փորելուց հետո «հանկարծ սոսկալի ձայներով գարշելի ծուխ սկսեց դուրս գալ»: Վախենալով, որ «ծակել են սատանայի քարայրի տանիքը», հանքափորները փակեցին փոսը և ահաբեկված վերադարձան իրենց տները:

Անշուշտ, նրանք սխալվում էին: Տարիներ անց կրկին փորեցին ու հայտնաբերեցին բնական գազի մեծ հանքավայր: Այո, նրանք սխալվել էին, բայց ես մի փոքր նախանձում եմ այդ մարդկանց, որովհետև նրանք ապրում էին հոգևոր աշխարհի գիտակցումով: Մի բան, որ այսօր պակասում է մեր մեջ: Հեշտ է ապրել այնպես, ասես բնականն ու գերբնականը շատ քիչ կարող են իրար հանդիպել և մոռանալ, որ «մեր պատերազմն արյան և մարմնի դեմ չէ, այլ... այն չար հոգիների դեմ, որ երկնավորների մեջ են» (Եփ. 6.12): Տեսնելով, որ չարը հաղթում է աշխարհում, չպետք է տեղի տանք կամ դրա դեմ փորձենք պայքարել սեփական ուժերով: Այլ հարկավոր է զիմազրավել չարին՝ «վերցնելով Աստծո սպառազինությունը» (Հմ.13-18): Աստծո սպառազինությունը կրել նշանակում է ուսումնասիրել Աստվածաշունչը, հանդիպել ուրիշ հավատացյալների հետ՝ միմյանց քաջալերելու համար և կատարել ընտրություն՝ մեր մտքում ունենալով ուրիշների բարիքը, «որպեսզի կարողանանք սատանայի հնարներին զիմազրել» (Հմ.11): Զինվելով Սուրբ Հոգով՝ մենք կկարողանանք «ամեն բան հաղթահարելով հաստատ կանգնել» (Հմ.13):

**Աղոթք** - Տե՛ր.օգնի՛ր հիշել, որ քայլելու ու ծառայելու եմ հավատքով ու Քո զորությամբ: Ամեն:

Չարը պատվում է մեր շուրջը մռնչացող առյուծի նման, բայց չի երևում: Ուստի պետք է զինված լինենք Աստծո սպառազինությամբ:

Տեր Աստված եմ, գթացող և ողորմած, համբերատար, բարեգուլք ու ճշմարիտ: (ԵԼ.34.6)

## **ՃՇՄԱՐԻՏ ԶԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Չ**րուցակիցս քաղաքավարությամբ պատասխանեց իմ բոլոր հարցերին: Բայց ես այն զգացողությունն ունեի, թե ինչ-որ բան քողարկված մնաց մեր խոսակցության ընթացքում: Հաջորդ հպանցիկ ակնարկը բացահայտեց այն: Երբ ես իմ հյուրին ասացի. «Դու հազարավոր մարդկանց ես ներշնչում», նա վրդովված պատասխանեց. «Ոչ թե հազարավոր, այլ միլիոնավոր»: Եվ ասես խղճալով ինձ անտեղյակությանս համար՝ սկսեց թվարկել իր հավատարմագրերը, ստացած կոչումները, իր հաջողությունները և իր սիրած ու հրատարակած ամսաթերթը: Այնպես որ այդ հարցազրույցը ես տհաճությամբ եմ մտաբերում: Դրանից հետո ես վերստին անդրադարձա այն բանին, թե Աստված ինչպես երևաց Մովսեսին՝ Սինա լեռան վրա (Ել. 34.5-7): Կանգնած էր տիեզերքի Արարիչն ու մարդկության դատավորը, բայց Նա իր այդ տիտղոսները չօգտագործեց: Նա հեղինակն ու ստեղծագործողն է միլիոնավոր աստղաբույլերի, բայց դրանց մասին էլ ոչ մի խոսք չկա: Ընդհակառակը՝ Աստված Իրեն ներկայացնում է որպես «գլխացող և ողորմած, համբերատար, բարեգուլք ու ճշմարիտ» (Հմ. 34. 6): Երբ նա հայտնում է իր ով լինելու մասին, ոչ թե իր կոչումներն ու արած գործերի երկար ցուցակն է ներկայացնում, այլ որպես Աստված՝ իր նկարագրերը: Խոր իմաստ կա այն իրողության մեջ, որ Նա ստեղծվել է մարդ Աստծու պատկերով ու կանչված է հետևելու Իր օրինակին (Ծն.1.27, Եփ. 5.1-2): Հաջողություն արձանագրելը լավ բան է, կոչումներ ունենալն էլ իր տեղն ունի, բայց կարևորն այն է, թե մենք որքանով ենք ողորմած, առատաձեռն ու կարեկից: Իմ հարցազրույցի հյուրի նման մենք էլ կարող ենք մեր ով լինելը հիմնավորել մեր հաջողություններով: Ես հաճախ եմ արել այդպես: Սակայն մեր Աստվածը մեզ օրինակ է տվել, թե որն է ճշմարիտ հաջողությունը:

**Աղոթք** - Աստժո Յոզի՛, ինձ ողորմած, գթառատ, առատաձեռն ու կարեկից մեկը դարձրու: Ամեն

Մեր ձեռքերումներով հպարտանալու առիթ կունենանք, սակայն Աստված մեզանից սպասում է, որ Իրեն նմանվենք:

Նա է մեր խաղաղությունը: (Եփ. 2.14)

## ԿՅԱՆՔԻ ՀՐԱՆԱԴՆԵՐԸ

Նոր տարվա գիշերը աշխարհի տարբեր քաղաքներում պայթում են հրավառ նյութեր, որոնց ձայնն ու աղմուկը առանձնահատուկ բարձր են լինում: Դրանք արտադրողները բացատրում են, որ արձակված լուսավոր պայթուցիկները պետք է բառացիորեն ճեղքեն երկինքը: Բնականաբար, դրանց ձայնն ավելի ուժգին կլինի, եթե գետնին մոտ պայթեն: Նեղությունները նույնպես կարող են պայթել մեր սրտերում, մտքերում ու տներում: Կյանքի այնպիսի «պայթուցիկ հրախաղերը», ինչպիսիք են ընտանեկան հարցերը, ֆիզիկական անհանգստությունները, հարաբերությունների խզումը, աշխատանքային մարտահրավերները, նյութական դժվարությունները, նույնիսկ եկեղեցական պառակտումները, կարող են այդպիսի պայթյունների համազոր լինել և ցնցել մեր ներաշխարհը: Բայց մենք գիտենք, որ Նա կարող է մեզ բարձրացնել այդ պայթյուններից վերև: Պողոսը եփեսացիներին ուղղված նամակի 2. 14-ում գրում է, թե Քրիստոսն է «մեր խաղաղությունը»: Նրա խաղաղությունը ավելի մեծ է, քան որևէ խանգարում, Ինքը կարող է լուեցնել մտահոգության, վիրավորանքի ու բաժանման աղմուկները: Այս հանգամանքը զորավոր երաշխիք է հրեաների ու հեթանոսների համար: Որոշ ժամանակ նրանք «առանց Քրիստոսի էին, Իսրայելի քաղաքակցությունից հեռացած ու ուխտերից օտարացած» (Հմ.12): Եվ Հիմա դիմազրավում են հալածանքի ու ներքին պառակտման վտանգը: Սակայն Քրիստոսով նրանք Իր մոտ և իրար մոտ բերվեցին, «որովհետև նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ արեց ու մեջտեղի բաժանող պատը՝ թշնամությունը, վերացրեց իր մարմնով» (Հմ.14): Նոր տարին սկսելիս ետ դառնանք կյանքի աղմկոտ փորձություններից և խնդրենք հավիտենական խաղաղություն:

**Աղոթք** - Մխիթարող Աստված, երբ կյանքի պայթուցիկները ցնցում են մեզ ու անհանգստացնում, ինձ ձգի՛ր դեպի Քո խաղաղությունը: Ամեն:

Կյանքի պայթուցիկները երբ սաստկանան, դարձի՛ր դեպի Աստված, որ հանգստացնի քեզ ու տա Իր երկնային խաղաղությունը:

## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հոկ. 18, 22, 26, նոյ. 2, դեկ. 3, 12
Ապաշխարություն.....	Դեկ. 11
Անարդարություն.....	Հոկ. 12
Անհամաձայնություն և ընդիմություն.....	Հոկ. 9, նոյ. 20,21
Աշակերտություն.....	Հոկ. 18
Աստծուն պատվել.....	Հոկ. 28
Աստվածաշնչի հեղինակությունը.....	Նոյ. 12, դեկ. 22
Աստծո հետ հաղորդակցություն.....	Հոկ. 18, 24
Աստծո սերը.....	Հոկ. 3,4,7,12, նոյ. 2,8,24,27,28, դեկ.5,14,18, 20,27
Աստծուն վստահել.....	Հոկ. 10,25,31 նոյ. 2,8,12,15,17,29, դեկ. 7,12,13,21
Ավետարանչություն.....	Հոկ. 22, նոյ. 7
Բարկություն.....	Դեկ. 15
Գոհունակություն.....	Դեկ. 8
Դրախտ.....	Հոկ. 6
Երջանկություն.....	Հոկ. 17, դեկ. 25
Իմաստություն.....	Հոկ. 11
Խորհրդատվություն.....	Հոկ. 30
Ծառայություն.....	Նոյ. 1,16, դեկ. 26
Կյանքի պայքարներ.....	Հոկ. 10, 27, նոյ. 15, դեկ. 31
Հալածանք.....	Նոյ. 14
Համայնք.....	Հոկ. 14, դեկ. 29
Հանդիստ.....	Նոյ. 4, դեկ. 20
Հանցանք.....	Հոկ. 21
Հարաբերություններ.....	Նոյ. 21
Հաշտություն.....	Հոկ. 8
Հավատացյալների հարություն .....	Հոկ. 6
Հավատք.....	Դեկ. 19
Հեզոություն.....	Հոկ. 9, 28, նոյ. 16, դեկ. 10
Հնազանդություն.....	Դեկ. 6
Հոգեկան աճ.....	Հոկ. 20, նոյ. 6



Հոգեկան բարեփոխություն.....	Հոկ. 5, 16, 21, դեկ. 22
Հոգեկան կարգապահություն.....	Նոյ. 3
Հոգեկան պատերազմ.....	Նոյ. 14, դեկ. 29
Հոգեկան պարզեցում.....	Հոկ. 15, 29, նոյ. 9
Հոգու պտուղներ.....	Հոկ. 1, նոյ. 3, դեկ. 30
Հրեշտակներ.....	Հոկ. 4
Հույս.....	Հոկ. 27, նոյ. 17, 28, դեկ. 28,31
Մահ.....	Հոկ. 6
Մեղք.....	Հոկ. 3, նոյ. 10, դեկ. 11, 28
Մեղքերի թողություն.....	Նոյ. 10, դեկ. 11
Միություն.....	Հոկ. 8
Մտահոգություն.....	Նոյ. 24
Ներել ուրիշներին.....	Հոկ. 19
Շնորհակալություն.....	Նոյ. 26, դեկ. 13
Պաշտամունք.....	Հոկ. 17, դեկ. 13, 16
Սեր Աստծու հանդեպ.....	Դեկ. 6
Սեր ուրիշների հանդեպ...Հոկ. 12,19, նոյ. 16,19, դեկ. 1,4, 15	
Սուրբ Հոգի.....	Նոյ. 26
Վախ.....	Հոկ. 25, նոյ. 14, 17
Տանջանք.....	Հոկ. 4, 20, 31, նոյ. 27, դեկ. 7, 13
Տնտեսություն.....	Նոյ. 22, դեկ. 17
Փորձություն.....	Դեկ. 9
Փրկություն.....	Հոկ. 2, 3, 21, նոյ. 7, 23, 25, դեկ. 19, 24
Քաջակերություն.....	Նոյ. 9, դեկ. 1, 8
Քրիստոս՝ անուններ.....	դեկ. 2, 21
Քրիստոս՝ ծնունդ.....	Դեկ. 2, 16, 21, 23, 24, 25
Քրիստոս՝ կյանք և ուսուցում.....	նոյ. 15
Քրիստոս՝ մահ.....	Նոյ. 15
Քրիստոս՝ Մեսիա.....	Դեկ. 23
Քրիստոս՝ վերադարձ.....	Նոյ. 29
Քրիստոս՝ Փրկիչ.....	Նոյ. 19
Քրիստոսի համար ապրել.....	Նոյ. 11, 30
Քրիստոսի նման ապրել.....	Հոկ. 1, 12, դեկ. 4, 30

## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքուկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռախոս՝ +374 10 543 576; +374 10 543 578  
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am  
Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 945275

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

---



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ  
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և  
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Էլկայք՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ  
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա  
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95